



**Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին
Վրաստանի Ժողովրդական Պաշտպանի (Օմբուդսմեն) 2021 թվականի հատուկ զեկույցը**

Բովանդակություն

Ներածություն	3
1. Նոր կորոնավիրուսի հետ կապված կանոնակարգերի համապատասխանեցումը հավասարության սկզբունքին	5
1.2. Այսպես կոչված, պարտադիր պատվաստում	7
1.3. Դիմակ կրելու պարտավորության ազդեցությունն անչափահասների և հաշմանդամություն ունեցող անձանց վրա	9
2. Կանանց իրավահավասարությունը	10
2.1. Սեռական ոտնձգություն	10
2.1.1. Ներքին գործերի նախարարության արձագանքը	12
2.2. Կին մարզիկների իրավունքները	13
2.3. Հղիության և ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդի, երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի փոխհատուցումը և երեխայի խնամքի համար արձակուրդի տրամադրումը նաև տղամարդկանց	14
3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավահավասարությունը	17
3.1. Հաշմանդամության բժշկական մոդելից բխող խնդիրներ	17
3.2. Մատչելիության խնդիրը հղի կանանց իրավունքների համատեքստում	18
3.3. Երեխայի խելամիտ հարմարեցումը կրթական գործընթացին	20
4. Ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող դատապարտյալների կրոնական կարիքները	21
5. Ոչ գերիշխող էթնիկ խմբերի ներկայացուցիչների իրավահավասարությունը	24
5.1. Հանրային ծառայությունների մատչելիությունը	24
5.2. Մեսիսթական համայնքի առջև ծառացած մարտահրավերները	32
5.3. Դմանիսիի առճակատումը	35
6. ԼԳԲՏ + համայնքի իրավահավասարությունը	37
6.1. ԼԳԲՏ + համայնքի իրավահավասարությունը խոսքի և հավաքների ազատության համատեքստում	37
6.2. ԼԳԲՏ + համայնքի կողմից տնտեսական և սոցիալական իրավունքների իրացում	43
7. Անհավասարությունը սոցիալական պաշտպանության համակարգում	44
7.1. Խտրականություն բանկային ծառայություններ մատուցելիս	45
7.2 Սոցիալական աջակցության և կենսաթոշակային բաշխողական համակարգ	46
8. Խտրականությունն աշխատանքային հարաբերություններում և գործունեություն իրականացնելիս	47
8.1. Նախընտրական շրջանում քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականություն աշխատանքային հարաբերություններում	48
8.2. Խտրականության դրսևորումը ռիսկեր պարունակող գործունեության մեջ	50
8.3. Աշխատանքի տեսչության մանդատն աշխատավայրում խտրականությունը վերացնելու ուղղությամբ	51

8.4. Քննադատող լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեության սահմանափակումը	53
9. <i>Խտրականության խրախուսում</i>	54
9.1. Գենդերային հիմքով խտրականության խթանում	55
9.2. Էթնիկ և ռասայական հիմքերով խտրականության խրախուսում	58
9.3. ՄԿԳԻ հիմքերով խտրականության խրախուսում	59
10. <i>Մարտահրավերներ ենթադրյալ ատելության հիմքով կատարված հանցագործությունները հետաքննելիս</i>	60
11. <i>Ժողովրդական պաշտպանի գործունեությունը հավասարության իրավունքի պաշտպանության ոլորտում</i>	63
11.1. Գործավարություն	64
11.2. Կրթական գործունեություն	68
12. <i>Եզրահանգում</i>	70

Ներածություն

2021 թվականին հավասարության իրավունքի պաշտպանության առումով իրավիճակը դարձյալ կրիտիկական էր: Ցավոք, այս տարի ևս չի բարելավվել կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների կամ ոչ գերիշխող կրոնական և էթնիկ խմբերի իրավական վիճակը:

Չհաշված այն, որ հավասարության քաղաքականություն սահմանելու և հավասարությունը խթանող հայտարարություններ հրապարակելու մասին Վրաստանի Ժողովրդական պաշտպանի

հանձնարարականը համապատասխան գերատեսչությունների կողմից այս հաշվետու ժամանակահատվածում չի իրագործվել, որոշումներ կայացնողներն առանձնանում էին նաև խտրականությունը խրախուսող առավել սուր արտահայտություններով:

Հատկապես տագնապալի էին «Թբիլիսի փրայդ» շաբաթվա շրջանակներում զարգացած իրադարձությունները, որոնց ընթացքում ուլտրաաջ խմբերի առաջնորդները և այլ անդամներ ուղիղ և հրապարակայնորեն կոչ էին անում բռնության ենթարկել LGBS+ համայնքի անդամներին և նրանց աջակիցներին: Հուլիսի 5-ին՝ Արժանապատվության երթի օրը, իրավապահները չկարողացան կանխել այս բռնի խմբերի լայնածավալ հարձակումը լրագրողների և իրավապաշտպանների վրա, ինչի հետևանքով մի շարք մարդիկ ստացան մարմնական ծանր վնասվածքներ: Բռնարար խմբերի բացահայտ ագրեսիային զուգահեռ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին «Արժանապատվության երթը» որակեց որպես քաղաքացիական ընդհարման պատճառ՝ նշելով, որ Փրայդի ետևում կանգնած էին «Ռևանշիստական և արմատական» քաղաքական ուժերը:¹ Բացի այդ, վարչապետն ուղիղ մատնանշեց, որ նպատակահարմար չի համարում «Արժանապատվության երթն» անցկացնելը, և որ ակցիան կարիք չկար անցկացնելու Ռուսթավելի պողոտայում՝ դրանով իսկ ավելի սրելով իրավիճակը:

Ցավոք, չնայած Վրաստանի գլխավոր դատախազին երկու անձի նկատմամբ համապատասխան ապացույցների ամբողջության առկայության վերաբերյալ Ժողովրդական պաշտպանի հիմնավորված դիրքորոշումը² ներկայացնելու հանգամանքի, առ այն, որ հրապարակայնորեն տարածված ապացույցները բավարարում են առնվազն երկու անձի նկատմամբ համապատասխան մեղադրանք առաջադրելու չափորոշիչները, բռնություն գործադրելու հրապարակային կոչեր տարածելու փաստով հետաքննություն դեռևս չի սկսվել:

Ընթացիկ տարվա առաջին կեսին կոնֆլիկտային իրավիճակ է ստեղծվել շրջաններում՝ ենթադրաբար կրոնական և էթնիկ հողի վրա: Չոխատաուրի շրջանի Բուկնարի գյուղում քրիստոնյա և մահմեդական համայնքների միջև տեղի է ունեցել ենթադրյալ կրոնական հողի վրա ընդհարում: Իսկ ենթադրյալ էթնիկական հողի վրա բախում է ծավալվել Դմանիսիում բնակվող վրացախոս և ադրբեջանախոս բնակչության միջև: Այս միջադեպերի հետ կապված իրավապահ մարմնի արձագանքն արդյունավետ չէր՝ բախման կողմերը ֆիզիկական բռնության էին ենթարկում միմյանց ոստիկանների ներկայությամբ, որոնք չէին կարողանում ժամանակին արձագանքել և լիցքաթափել իրավիճակը:

¹ **Հավելյալ տե՛ս** Հուլիսի 5-ին՝ ժամը 11:00-ին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարություն է տարածել. «Այսօրվա հանրահավաքի կազմակերպիչների ետևում դեռևս կանգնած են ռևանշիստական, արմատական խմբավորումները, մասնավորապես՝ Սահակաշվիլիի գլխավորած արմատական ընդդիմությունը: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում են, որ նրանք են ներգրավված, նրանք են կազմակերպում երթը և այս հանրահավաքները: Բնարկե, նրանց նպատակը երկրում քաղաքացիական անկարգություններ ու քառս առաջացնելն է, ինչն, անշուշտ, չի իրականանալու, և մենք դա թույլ չենք տալու: Մեր երկրում ամեն ինչ կլինի այնպես, ինչպես ուզում է մեր ժողովուրդը, մեր բնակչությունը», «Այսօրվա հանրահավաքը քաղաքացիական բախումների սպառնալիք է պարունակում: Ինչպես գիտեք, բնակչության բացարձակ մեծամասնության համար այս հանրահավաքի անցկացումն անընդունելի է: Ուստի կարծում եմ, որ նշված ակցիան չպետք է անցկացվի Ռուսթավելի պողոտայում» <https://cutt.ly/zTGKbeM>; <https://cutt.ly/3TGLdFw>

² Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի առաջարկությունները Վրաստանի դատախազությանը հասանելի են՝ <https://rb.gy/d6pywf>

Բացի այդ, նախընտրական շրջանում ծայրահեղ խնդրահարույց էին տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների աշխատակիցների աշխատանքային իրավունքների սահմանափակման տասնյակ դեպքերը՝ ենթադրյալ քաղաքական հայացքներից ելնելով: Այդ իրավախախտումներն առավելապես դրսևորվել են խտրական հիմքերով պայմանագրի երկարաձգումը մերժելու, պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, աշխատանքից ինքնակամ ազատվելու կապակցությամբ դիմում ներկայացնելու և աշխատանքից հեռացնելու դեպքերում: Դիմումատուներն, անհավասար վերաբերմունքը վերագրել են, հիմնականում, նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի կուսակցության անդամների հետ նրանց կամ նրանց ընտանիքի որևէ անդամի բարեկամական, ընկերական կամ բարեդրացիական հարաբերություններին: Այդ թվում, ոմանք վերագրում էին կուսակցության առաջնորդին սոցցանցերում աջակցություն կամ համակրանք արտահայտող գրառումների կամ մեկնաբանությունների տեղադրմանը/տարածմանը/հաստատմանը:

Ընդհանուր առմամբ, 2021 թվականին Ժողովրդական պաշտպանն ուսումնասիրել է ենթադրյալ խտրականության 161 դեպք, որոնց մեծ մասը՝ 17%-ը, վերաբերել է քաղաքական հայացքների հիման վրա ենթադրյալ խտրականության դեպքերին: Մեծի հիմքով ենթադրյալ խտրական վերաբերմունքի, այդ թվում՝ սեռական ոտնձգության փաստերն այս տարի ևս արդիական էին՝ կազմելով դիմումների 16%-ը: Տարբերվող տեսակետի և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականություն է դրսևորվել 11%-ի դեպքում: Մեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքի բողոք է ներկայացրել դիմումատուների 7%-ը: Դեպքերի 6%-ը կապված է եղել ազգային պատկանելության/քաղաքացիության, 4%-ը՝ կրոնի, իսկ 3%-ը՝ էթնիկական ծագման հիմքերով անհավասարության հետ: Տարիքային անհավասարության հետ կապված դիմումներն այս տարի նվազել են մինչև 3%: 2021 թվականին վարույթ ընդունած դիմումների ամենամեծ մասը՝ 22%-ը, դարձյալ վերաբերում էր այլ հիմքերով ենթադրյալ խտրական վերաբերմունքի փաստերին:

1. Նոր կորոնավիրուսի հետ կապված կանոնակարգերի համապատասխանեցումը հավասարության սկզբունքին

Նոր կորոնավիրուսի համավարակը, հավասարության իրավունքի պաշտպանության տեսանկյունից, 2020 թվականին ծագած խնդիրներին զուգահեռ, 2021 թվականին երևան հանեց հավելյալ մարտահրավերներ:

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում պարզվեց, որ Վրաստանի տարածք մուտք գործելու քաղաքականությունը լիովին չէր համապատասխանում հավասարության իրավունքին: Ավելի կոնկրետ՝ սահմանափակվում էր Վրաստանում մշտական կացության իրավունք ունեցող որոշ անձանց մուտքը երկիր, ինչը հակասում է Վրաստանի հակախտրական օրենսդրությանը:

Հարկ է նշել, որ խոցելի խմբերը մարտահրավերների են բախվում ելնելով նրանից, որ հանրությունը բավականաչափ իրազեկված չէ նրանց կարիքների մասին: Մասնավորապես, այն դեպքում, երբ հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խումբը, ինչպես նաև երեխաները, չեն կարող կրել դիմակ, նրանցից, որոշ դեպքերում անհիմն պահանջել են կրել այն:

Հաշվետու տարում հատկապես կարևորվել է նոր կորոնավիրուսի դեմ պատվաստման մարդու իրավունքների վրա ազդեցություն գործելու հարցը: Հանրության շրջանում հարցեր են ծագել, թե խտրական չէ արդյոք պատվաստման փաստաթուղթ ներկայացնելու պարտավորությունը աշխատանքային հարաբերություններում, ծառայության, առողջապահության, կրթության կամ այլ ոլորտներից օգտվելիս: Ի պատասխան՝ Վրաստանի Ժողովրդական պաշտպանը պարզաբանեց, որ պատվաստված և չպատվաստված անձանց նկատմամբ սահմանափակող կամ խրախուսական միջոցների կիրառումը, համապատասխան հիմնավորման առկայության դեպքում, խտրականություն չի համարվում:

1.1. Վրաստանում մշտական կացության իրավունք ունեցող անձանց ազատ տեղաշարժի սահմանափակումը

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում, նոր կորոնավիրուսի համավարակի պատճառով, մուտքը Վրաստան սահմանափակված էր: Կառավարության սահմանած կանոնակարգերը մշտապես փոփոխվում էին, թեև ողջ հաշվետու տարվա ընթացքում Վրաստանում մշտական կացության իրավունք ունեցող անձինք, իրենց կարգավիճակից ելնելով, չունեին երկիր մուտք գործելու հնարավորություն:

Հարկ է նշել, որ մշտական կացության իրավունք ունեցող անձանց որոշակի կատեգորիան կարող էր հատել սահմանը, սակայն ոչ ուղղակիորեն ելնելով իրենց կացության կարգավիճակից, այլ այլընտրանքային եղանակներով³. Եթե նրանք համարվում էին Վրաստանի քաղաքացու ընտանիքի անդամներ (ամուսին, անչափահաս երեխա), Վրաստանի տարածք մուտք գործելու համար նախատեսված տարբեր ռեժիմների կիրառմամբ,⁴ եթե սահմանին ներկայացնում էին կորոնավիրուսի դեմ ամբողջական պատվաստումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև կառավարությունը սահմանել էր կոնկրետ երկրների փոքր թվարկացանկ, որոնց քաղաքացիները կարող էին մուտք գործել երկիր օդային, ցամաքային և ծովային ճանապարհներով:

Հետևաբար, մշտական կացության իրավունք ունեցող անձանց զգալի մասը մուտք է գործել Վրաստանի տարածք՝ անցնելով Վրաստանի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը: Կարևոր է նաև նշել, որ տարվա ընթացքում ավելանում էին տարբեր ռեժիմների կիրառմամբ Վրաստանի տարածք մուտք գործելու հնարավորությունները/ճանապարհները, հետևաբար մշտական կացության իրավունք ունեցող անձանց վիճակը նույնպես աստիճանաբար բարելավվում էր: Այնուամենայնիվ, գործի քննարկման փուլը մեկնարկելիս Վրաստանի տարածք

³ Երկիր մուտք գործելու ուղիների մասին տեղեկությունը տրված է հարցի ուսումնասիրման ժամանակահատվածի համար գործող կանոններին համապատասխան (23.07.2021թ.):

⁴ Վրաստան մուտք գործելու հատուկ ռեժիմ էր սահմանվել Վրաստանում պաշտոնական այցով գտնվող պատվիրակությունների անդամների, ինչպես նաև Վրաստանի կառավարական և նախագահական պատվիրակությունների անդամների, Վրաստան բիզնես/աշխատանքային գործունեության նպատակով այցելուների, Վրաստանի պաշտպանության նախարարության համակարգում նախատեսված միջազգային գորավարություններին և վարժանքներին մասնակցող օտարերկրյա զինծառայողների/ներկայացուցիչների նկատմամբ, օտարերկրյա այն այցելուների համար, ովքեր Վրաստանից այլ երկրներում հեռակա կարգով բիզնես են վարում/աշխատում, օտարերկրյա ուսանողների նկատմամբ: Տե՛ս Վրաստանի կառավարության «Մեկուսացման և կարանտինի կանոնները սահմանելու մասին» 322-րդ որոշումը, 11¹-11⁵ հոդվածներ.

մուտքի ռեժիմների և երկրում մշտական կացության իրավունք ստանալու նախապայմանների փոխհամադրումն ակնհայտ դարձրեց, որ Վրաստանում կացության իրավունք ունեցող անձանց մի մասը (տեսականորեն) չունեն երկիր մուտք գործելու իրավունք: Նման մոտեցման արդյունքում սահմանափակվում էր երկրում մշտական կացության իրավունք ունեցող անձանց ազատ տեղաշարժը, բացի այդ, նրանք չէին կարող օգտվել նաև Վրաստանի Սահմանադրությամբ նախատեսված այն իրավունքներից, որոնք տարածվում են ոչ միայն Վրաստանի քաղաքացիների վրա:

Այս ամենի հիման վրա անհրաժեշտ էր գնահատել, թե որքանով էին խախտում հավասարության իրավունքը Վրաստանի տարածք մուտք գործելու սահմանափակումները⁵: Ժողովրդական պաշտպանի կողմից հարցի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այս խմբի նկատմամբ գործող կանոնները հակասում են Վրաստանի Սահմանադրությամբ նախատեսված հավասարության իրավունքին և հակախտրական օրենսդրությանը, քանի որ Վրաստանի և երկրում մշտական կացության իրավունք ունեցող անձանց միջև գոյություն ունեին երկարատև և սերտ սոցիալական, տնտեսական, իրավական կամ այլ կապեր, ինչն իրենց կարգավիճակից ելնելով (երկրում մշտական կացության իրավունքի առկայություն) Վրաստան մուտք գործելու նրանց իրավունքի նախապայմանն էր:

Հաշվի առնելով վերը նշվածը, Ժողովրդական պաշտպանը դիմեց Վրաստանի կառավարությանը կացության կարգավիճակի բոլոր ձևերի խտրականության վերացման վերաբերյալ հետևյալ հանձնարարականով⁶՝ Վրաստանում մշտական կացության իրավունք ունեցող անձանց երկիր մուտք գործելու քաղաքականությունը փոխել այնպես, որ ելնելով կացության թույլտվությունից/կարգավիճակից այդ անձինք ունենան անարգել երկիր մուտք գործելու իրավունք: Ըստ Վրաստանի կառավարության վարչության կողմից Ժողովրդական պաշտպանին տրամադրված տեղեկատվության, այս հանձնարարականի իրականացման վերաբերյալ վերջնական միջոցառումներ դեռևս չեն ձեռնարկվել:

1.2. Այսպես կոչված, պարտադիր պատվաստում

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում քննարկման թեման էր կորոնավիրուսի դեմ պատվաստման կարգավիճակի ազդեցությունը հավասարության իրավունքի վրա: Մասնավորապես, չի խախտում արդյոք մարդու իրավունքները, խտրական է, թե ոչ աշխատանքային հարաբերություններում, ծառայությունների, առողջապահության, կրթության կամ այլ ոլորտներում պատվաստման փաստաթուղթ/թեստի բացասական պատասխան ներկայացնելու պարտավորեցումը: Խնդրի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությունը դրսևորվել է նաև Վրաստանի Ժողովրդական պաշտպանին դիմելիության ավելացմամբ:

⁵ Այս հարցն այլ կտրվածքով գնահատելու անհրաժեշտություն առաջացավ նաև 2020 թվականին: Տե՛ս Վրաստանի Ժողովրդական պաշտպանի հատուկ զեկույցը խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին 2020 թ. 7-8, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3IeAr8G>

⁶ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հուլիսի 23-ի հանձնարարականը Վրաստանի կառավարությանը, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3EG0TWR>

Հիմնվելով միջազգային վերջին փորձի և ազգային օրենսդրության վերլուծության վրա՝ Ժողովրդական պաշտպանը համարել է, որ հանրային կյանքի որոշ ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, սոցիալական ծառայությունները, կրթությունը, հանրային ծառայությունները, կորոնավիրուսի դեմ պատվաստման փաստաթուղթ ներկայացնելու պարտավորեցումը չի համարվում խտրական կամ այլ իրավունքները ոտնահարող պրակտիկա:

Անդրադառնալով անմիջականորեն գործատուի կողմից աշխատողից իր պատվաստման կարգավիճակի մասին տեղեկություն տրամադրելու պահանջին՝ Ժողովրդական պաշտպանը համարել է, որ երկրում ստեղծված համաճարակաբանական ծանր իրավիճակից ելնելով կարևոր է, որ մասնավոր ընկերությունները հոգ տանեն աշխատողների/սպառողների համար անվտանգ [աշխատանքային] միջավայր ստեղծելու մասին: Այս օրինական նպատակին հասնելու համար Ժողովրդական պաշտպանը համարել է, որ պատվաստված և չպատվաստված անձանց համար սահմանափակող կամ խրախուսող որոշ միջոցներ չեն լինի խտրական՝ դրանք պատշաճ հիմնավորելու դեպքում: Համապատասխանաբար, գործատուները, ինչպես նաև ծառայություններ մատուցող անձինք ունեն աշխատողից կամ սպառողից ամբողջական պատվաստումը հավաստող փաստաթուղթ կամ թեստի բացասական պատասխան պարբերաբար պահանջելու իրավունք: Նշված կանոնները պետք է նախատեսեն բացառություններ (օրինակ՝ բժշկական տեղեկանք պատվաստումների աննպատակահարմարության մասին), ինչպես նաև ողջամիտ համապատասխան միջոցներ: Նշենք նաև, որ համաճարակաբանական իրավիճակի փոփոխության հետ մեկտեղ կարևոր է վերանայել ընդունված կանոնները:

Բացի այդ, Վրաստանի Ժողովրդական պաշտպանը պարզաբանել է, որ խտրական պրակտիկա չեն համարվում այն կանոնակարգերը, որոնց համաձայն որոշակի հասարակական վայրեր մուտք գործելու իրավունք ունեն պատվաստված մարդիկ, իսկ չպատվաստվածները՝ թեստի բացասական պատասխան և/կամ վերջին շրջանում կորոնավիրուսով վարակվելու մասին փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

Որպես ամփոփում կարող ենք ասել, որ Ժողովրդական պաշտպանի գնահատմամբ և միջազգային պրակտիկայի նախատեսմամբ, պարտադիր պատվաստումն, ինքնին, ենթադրում է միջամտել անհատների իրավունքներին, սակայն նման միջամտությունն արդարացված է այն դեպքում, երբ այն ծառայում է հանրային առողջության օրինական նպատակին և մարդու կյանքի պաշտպանությանը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ պատվաստումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես անհատական իրավունք, այլ նաև որպես հավաքական պատասխանատվություն, որն անհրաժեշտ է հանրային առողջապահության և բնակչության կյանքը փրկելու համար:

Ինչպես նշվեց, այս հարցերի վերաբերյալ Վրաստանի Ժողովրդական պաշտպանը մի շարք դիմումներ է ստացել, սակայն պատվաստման կարգավիճակի հիմքով խտրական վերաբերմունքի փաստ ոչ մի դեպքում չի հաստատվել: Ելնելով դիմելիության բարձր ցուցանիշից և առհասարակ, հանրային քննարկումներում հարցի հրատապությունից, Վրաստանի Ժողովրդական պաշտպանը 2021 թվականի օգոստոսի 25-ին հանդես եկավ համապատասխան հրապարակային

հայտարարությամբ⁷, ինչպես նաև Ժողովրդական պաշտպանի գրասենյակում անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով 2021 թվականի օգոստոսի 26-ին ընդունվեց համապատասխան կարգ:⁸

1.3. Դիմակ կրելու պարտավորության ազդեցությունն անչափահասների և հաշմանդամություն ունեցող անձանց վրա

Հաշվետու ժամանակահատվածում Վրաստանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակն ուսումնասիրել է դեպքեր, որոնք բացորոշել են, որ նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով սահմանված դիմակ կրելու կարգը, գործնականում, մի շարք մարտահրավերներ է առաջացրել խոցելի խմբերի համար:

Վրաստանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակը դիմում է ստացել, ըստ որի՝ կազմակերպություններից մեկում սահմանված ընդհանուր կարգի արդյունքում խտրականություն է դրսևորվել հաշմանդամություն ունեցող երեխայի և նրան ուղեկցող անձի նկատմամբ: Մասնավորապես, ծառայություն մատուցող մասնավոր ընկերությունում գործել է կարգ, որի համաձայն իրենց տարածքում գտնվելիս բոլոր հաճախորդները պարտավորվում էին կրել դիմակ: Հաճախորդներից մեկն այս ընկերության մասնաճյուղ էր եկել աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող իր երեք տարեկան երեխայի հետ: Ծնողը բացատրել է, որ երեխան ունի աուտիզմի սպեկտրի խանգարումներ և չի կարող կրել դիմակ: Չնայած կազմակերպության աշխատակիցներին այս տեղեկատվությունը տրամադրելուն, դիմումատուի երեխային միևնույն է թույլ չեն տվել մուտք գործել մասնաճյուղ: Ժողովրդական պաշտպանի գրասենյակի կողմից գործի քննության փուլում կազմակերպությունը փոխեց խտրական կարգը և համապատասխան անձանց համար սահմանեց ներքին տարածքում առանց դիմակի տեղաշարժվելու կարգ, ինչն իր հերթին, համապատասխանում էր Վրաստանի օրենսդրությանը:⁹

Բացի այդ, Վրաստանի Ժողովրդական պաշտպանը ուսումնասիրել է դիմում, ըստ որի՝ դիմակ կրելու կանոնները խախտելու համար տուգանվել է մտավոր հաշմանդամություն ունեցող անձը, ով չէր կարող կրել դիմակ ելնելով այդ հանգամանքից: Ժողովրդական պաշտպանին Ներքին գործերի նախարարության կողմից ուղղված նամակի համաձայն, այս անձի նկատմամբ կազմած իրավախախտման մասին արձանագրությունը չեղարկվել է:

Այսպիսով, այս դեպքերը ընդգծեցին խոցելի խմբերի կարիքների մասին իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը: Իր հերթին, կարևոր են աշխատավայրում անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելուն ծառայող մասնավոր ընկերությունների նախաձեռնությունները, սակայն այդ նախաձեռնությունները պարտադիր է ծրագրել և իրականացնել Վրաստանի օրենսդրությանը համապատասխան՝ հիմնվելով հավասարության սկզբունքի վրա:

⁷ «Պատվաստված և չպատվաստված անձանց սահմանափակող կամ խրախուսող միջոցների սահմանումը չի համարվում խտրականություն», հայտարարությունը հասանելի է՝ <https://bit.ly/31r1mxb>

⁸ «Ժողովրդական պաշտպանի գրասենյակի աշխատակիցները աշխատանքի վայրում պարտավոր են ներկայացնել Covid-ի փաստաթուղթ», հայտարարությունը հասանելի է՝ <https://bit.ly/326XK45>

⁹ Վրաստանի կառավարության 368-րդ որոշումը՝ «Դիմակ կրելու կարգը հաստատելու մասին»:

2. Կանանց իրավահավասարությունը

Կանանց իրավահավասարության վիճակի տեսանկյունից, սեռական ոտնձգությունների փաստերը, հատկապես աշխատավայրում, այս տարի ևս մարտահրավեր էր: Ինչպես վկայում է Ժողովրդական պաշտպանի պրակտիկան, բարձրացել է սեռական ոտնձգությունն արգելող օրենսդրության և համապատասխան մեխանիզմների մասին իրազեկվածությունը, ինչն արտահայտվել է տարբեր ոլորտներում աշխատող կանանց կողմից դիմելիությամբ:

Բացի այդ, այս տարի Ժողովրդական պաշտպանին առաջին անգամ դիմել են պրոֆեսիոնալ կին ֆուտբոլիստները, ինչը հնարավորություն տվեց քննարկել նրանց իրավական վիճակի համապատասխանեցումը հավասարության սկզբունքին:

Սրա հետ մեկտեղ, 2020 թվականին աշխատանքային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների հավասարության իրավունքի վրա ազդեցությունը ստուգելու նպատակով այս հաշվետու ժամանակահատվածում Ժողովրդական պաշտպանը քննարկել է տղամարդկանց կողմից դեկրետային (հղիության և ծննդաբերության) արձակուրդից օգտվելու հարցը:

2.1. Սեռական ոտնձգություն

Ժողովրդական պաշտպանը ընթացիկ հաշվետու տարում շարունակել է ակտիվորեն ուսումնասիրել սեռական ոտնձգության փաստերը և այն կանխելու ուղղությամբ աշխատանքները: 2019 թվականին օրենսդրության մեջ կատարված էական փոփոխությունները, որոնք սահմանում էին սեռական ոտնձգության վարքագծի կանխատեսելի տարրերը և իրավական պաշտպանության մեխանիզմները, ենթադրյալ գոհի համար ստեղծեցին շատ ավելի պաշտպանված միջավայր: Հարկ է նշել, որ սեռական ոտնձգությունների ենթարկված գոհերին պաշտպանելու ուղղությամբ Ժողովրդական պաշտպանի դրական պրակտիկան բարձրացրել է ինստիտուտի նկատմամբ վստահությունը՝ հանգեցնելով դիմելիության աճի: Ուշագրավ է, որ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի և ՄԱԿ-ի կանանց կազմակերպության համատեղ ջանքերով պատրաստվել է «Հանուն սեռական ոտնձգությունների կանխարգելման» առցանց դասընթաց: Առցանց դասընթացի ստեղծման նպատակն է բարձրացնել հանրային տարածքում և աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ իրազեկվածությունը: Այն նաև շահագրգիռ կողմերին մարդու իրավունքների իրավական դաշտին ծանոթանալու հնարավորություն է ընձեռում, որն օգտագործվում է ամբողջ աշխարհում սեռական ոտնձգությունները կանխելու համար: Դասընթացը տեղադրված է Ժողովրդական պաշտպանի պաշտոնական կայքում և հասանելի է բոլոր ցանկացողների համար:¹⁰

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում Ժողովրդական պաշտպանի կողմից ուսումնասիրված գործերը, այդ թվում, վերաբերում էին աշխատանքային հարաբերությունների և սոցիալական ցանցերում նամակագրության ընթացքում բացահայտված սեռական ոտնձգությունների փաստերին:¹¹ Ոտնձգողի կողմից իրականացվող վարքն արտահայտվում էր

¹⁰ Սեռական ոտնձգությունների վերաբերյալ առցանց դասընթացը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3dkc0se>

¹¹ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի փետրվարի 2-ի հանձնարարականը Լ.Ջ.-ին, հասանելի՝ <https://bit.ly/3lBaiYb>

բանավոր և ֆիզիկական սեռական բնույթի գործողություններով՝ անձնական բնույթի հարցեր տալով, հեռախոսահամարը խնդրելով, սեռական բովանդակության վիրավորական հաղորդագրություններ ուղարկելով, դիմումատուի կյանքը սեռական տեսանկյունից մեկ այլ աշխատակցի հետ քննարկելով, ստիպողաբար համբուրելու փորձով, սեռական հարաբերություններ առաջարկելով և այլն: Նշենք, որ գործերն ուսումնասիրելիս Ժողովրդական պաշտպանը գնահատել է ոչ միայն ոստնձգողի պահվածքն, այլ նաև գործատուի արձագանքը՝ կապված աշխատավայրում տեղի ունեցած սեռական ոստնձգության փաստի հետ:

Հաշվի առնելով սեռական ոստնձգության հատկապես զգայուն բնույթը և ենթադրյալ զոհի կամ աշխատանքային միջավայրի համար դրա էական բացասական հետևանքները, վերջին շրջանում զագալիորեն ավելացել են տարբեր պետությունների և մասնավոր կազմակերպությունների կողմից սահմանվող սեռական ոստնձգություններն արգելելու և դրանց արձագանքելու հետ կապված ներքին կանոնակարգերը: Նշված մեխանիզմը, մի կողմից, գործատուի հայտարարությունը պոտենցիալ ոստնձգողին, առ այն, որ սեռական ոստնձգությունը չի հանդուրժվելու, իսկ մյուս կողմից՝ ենթադրյալ տուժողին, աշխատակցին, առաջարկում է արդյունավետ և վստահելի ընթացակարգ: Սեռական ոստնձգություններին արձագանքելու ներքին մեխանիզմի ներդրումը, միանշանակ, դրական գործողություն է, սակայն, միևնույն ժամանակ, կարևոր է այն արդյունավետ իրականացնել գործնականում: Օրինակ, ինչպես պարզվել է հանրային ծառայության աշխատակցի կողմից ենթադրյալ սեռական ոստնձգության փաստն ուսումնասիրելիս, միջադեպի վերաբերյալ սպառնիչ տեղեկություններ ստանալու համար գերատեսչությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ: Ուստի, չնայած ներքին կանոնակարգերի առկայությանը, դիմումատուի նկատմամբ իրականացված ենթադրյալ սեռական ոստնձգությունների փաստին չի հետևել արդյունավետ արձագանք:

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում ՀԻԻԱ Աշխատանքի տեսչական ծառայությունը Վրաստանի Ժողովրդական պաշտպանին առաջին անգամ է վերահասցեավորել մասնավոր ընկերություններից մեկում աշխատողի կողմից աշխատակցի նկատմամբ իրականացված ենթադրյալ սեռական ոստնձգության փաստը: Գործն ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ ընկերությունը չի կարողացել ապահովել աշխատողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ժողովրդական պաշտպանը, մի կողմից, հորդորել է ոստնձգողին, հետագայում, աշխատավայրում կամ այլ ոլորտում, չդիմել սեռական ոստնձգությունների և անհատների համար չստեղծել վիրավորական, նվաստացնող և/կամ իրենց արժանապատվությանը ոչ պատշաճ միջավայր, և մյուս կողմից, պահանջել ընկերությունից այսուհետ արդյունավետորեն հետաքննել ենթադրյալ սեռական ոստնձգությունների դեպքերը և ձեռնարկել պրոակտիվ քայլեր, այդ թվում՝ սեռական ոստնձգությունների ներքին քաղաքականության փաստաթղթի մշակման և իրազեկվածության բարձրացման¹² տեսանկյունից:

Նշենք, որ սեռական ոստնձգությունների առումով խոցելի խմբերից մեկին են դասվում չամուսնացած կանայք (չամուսնացած, ամուսնալուծված, բաժանված, այրի) և միայնակ մայրերը:

¹² Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի հանձնարարականը Գ.Կ.-ին և ՍՊԸ «Evolution Georgia»-ին, հասանելի է <https://bit.ly/3sXoqzw>

Դա սովորաբար պայմանավորված է ունեցողի ըմբռնմամբ, որ որոշակի սեռական կոնոտացիայի (համանշանակություն) վարքագիծն առավել ընդունելի կլինի չամուսնացած կնոջ, քան ամուսին ունեցող կնոջ համար: Նման դեպք բացահայտվել է հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված գործերից մեկում, որտեղ Ժողովրդական պաշտպանը սեռական ունեցողության փաստը բացահայտել է սոցցանցում նամակագրության ընթացքում:¹³ Դիմումատուն միայնակ մայր է, ում հետ կապվել է մի տղամարդ սոցիալական ցանցում ալիմենտի բռնագանձման գործով փաստաբան փնտրելիս: Հաղորդակցության ընթացքում պատասխանողը դիմումատունին անձնական բնույթի հարցեր է հղել, կնոջ անձնական կյանքի վերաբերյալ մեկնաբանություններ արել և սեփական ազդեցությունն ապացուցելու համար մատնանշել նրա ծանոթների շրջանակը և բարձր եկամուտը: Երբ դիմումատուն պատասխանողի վարքի նկատմամբ դժգոհություն է արտահայտել, նա շեշտը դրել է հենց նրա ամուսնական կարգավիճակի վրա և կնոջ ընտանեկան կարգավիճակը ներկայացրել բացասական և վիրավորական համատեքստում:

2.1.1. Ներքին գործերի նախարարության արձագանքը

Սեռական ունեցողությունների հետ կապված օրենսգրքում 2019 թվականին կատարված փոփոխությունների համաձայն՝ օրենսդիրը հանրային վայրերում իրականացված սեռական ունեցողությունը համարել է վարչական իրավախախտում Վրաստանի Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 166¹-րդ հոդվածով, որի արդյունքում հասարակական վայրերում սեռական ունեցողությունների ենթադրյալ զոհերի համար, ի դեմս Ներքին գործերի նախարարության, ձևավորվեց իրավական պաշտպանության նոր մեխանիզմ: Իր հերթին, Ներքին գործերի նախարարության աշխատակիցները պարտավորվում են գործնականում արդյունավետորեն իրականացնել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 166¹-րդ հոդվածի պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում քննված դեպքերից մեկում խնդրահարույց էր նախարարության արձագանքը ՆԳՆ աշխատակցի կողմից հանրային տարածքում իրականացրած ենթադրյալ սեռական ունեցողության փաստի նկատմամբ: Գործը վերաբերում էր 2021 թվականի ապրիլի 14-ին վարչական կարգով ձերբակալված նախարարության աշխատակցի կողմից կնոջ նկատմամբ իրականացրած ենթադրյալ սեռական ունեցողության փաստին:¹⁴ Ներքին գործերի նախարարության արձագանքի արդյունավետությունը գնահատելու համար Ժողովրդական պաշտպանը մի քանի անգամ տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել գերատեսչությանը: Յուրաքանչյուր անգամ Ժողովրդական պաշտպանին տրվել է հետևյալ պատասխանը՝ աշխատանքային ստուգումները դեռ շարունակվում են, և նշված գործով վերջնական որոշում դեռևս չի կայացվել: Ժողովրդական պաշտպանին նախարարությունից հայտնել են միայն 2021 թվականի դեկտեմբերի 30-ին, որ Պետական տեսուչի ծառայությունը բռնի

¹³ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի փետրվարի 2-ի հանձնարարականը Լ.Ջ.-ին, հասանելի՝ <https://bit.ly/3lBaiYb>

¹⁴ 2021 թվականի ապրիլի 14-ին պարեկային տեսուչը Ներքին գործերի նախարարության շենքի ետնամասում գտնվող ավտոկայանատեղիում ձեռնաշղթաներ հագցնելու նպատակով ոլորել է կնոջ ձեռքերը: Արդյունքում կինը ուժեղ ցավ է զգացել և խնդրել պարեկային տեսուչին հանել ձեռնաշղթաները: Պարեկային տեսուչը պատասխանել է՝ «Դու պատժված ես, եթե ձեռքերդ ցավում են, կարող եմ քեզ գրկել», որից հետո ձեռքերը մոտեցրել է կնոջ դեմքին:

գործողություններ կատարելու կապակցությամբ հետաքննություն է սկսել Վրաստանի Քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 3-րդ մասի «Բ» ենթակետով նախատեսված հանցագործության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ պատշաճ արձագանքի բացակայությունը բացասաբար է անդրադառնում գերատեսչության նկատմամբ քաղաքացիների վստահության վրա: Հետաքննության արդյունավետությունն ու հուսալիությունն ավելի են նվազեցնում երկարաձգված ուսումնասիրության գործընթացները: Ուստի, կարևոր է, որ գերատեսչությունը գործադրի բոլոր ջանքերը ենթադրյալ սեռական ոտնձգության յուրաքանչյուր դեպքի հանգամանքները հետաքննելու և իրավախախտի նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

2.2. Կին մարզիկների իրավունքները

Վրաստանում կին մարզիկների, այդ թվում, ֆուտբոլիստների առջև ծառացած մարտահրավերները բազմակողմանի են, ինչը որոշ դեպքերում բխում է գենդերային կարծրատիպերից, իսկ որոշ դեպքերում՝ կանանց ֆուտբոլի ֆինանսատնտեսական վիճակից: Կին ֆուտբոլիստները անընդհատ ստիպված են ապացուցել, որ ֆուտբոլը միայն տղամարդկանց մարզաձև չէ:¹⁵ Անմիջականորեն մարզական համատեքստով պայմանավորված կարծրատիպերից բացի, կին ֆուտբոլիստները ստիպված են պայքարել նաև այն ընդհանուր թյուր տեսակետի դեմ, որը կանանց համար առաջնահերթություն է սահմանում միայն ընտանիքում հոգ տանողի դերը:

Այս մարտահրավերներին ի պատասխան՝ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան մշակել է «Կանանց և աղջիկների ֆուտբոլի ռազմավարություն 2021-2024»: Բացի այդ, ուշագրավ է, որ 2020 թվականից արտոնագրված հավաքականների թվին ավելացել է նաև կանանց հավաքականը, ինչը նշանակում է, որ 2021 թվականի առաջնությանը կանանց հավաքականի համար նույնպես պարտադիր է դարձել բժշկական անձնակազմ ունենալը:¹⁶ Այնուամենայնիվ, այս միջոցառումները բավարար չեն կին ֆուտբոլիստների առողջության պահպանման իրավունքը լիովին պաշտպանելու համար:

2021 թվականին Վրաստանի Ժողովրդական պաշտպանը գնահատել է կին ֆուտբոլիստների առջև ծառացած որոշ մարտահրավերներ: Վերլուծելով կին ֆուտբոլիստների իրավական կարգավիճակը պարզվել է, որ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից մշակված կանոնները չեն ապահովում կին ֆուտբոլիստների սեռական և վերարտադրողական իրավունքների, ինչպես նաև մայրության իրավունքի պատշաճ պաշտպանությունը, ինչը հակասում է հակախտրական օրենսդրությանը: Միջազգային փորձն ուսումնասիրելու և տեղի բժիշկների հետ խորհրդակցելու արդյունքում Վրաստանի Ժողովրդական պաշտպանը համապատասխան հանձնարարականներ է մշակել Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի համար:

¹⁵ Մշակվել է կանանց ֆուտբոլի զարգացման ռազմավարություն | Ինչ ակնկալիքներ ունեն ֆուտբոլիստները, հասանելի է՝ <https://bit.ly/3diEkeG>, «Ֆիզիկական դաստիարակության և սպորտի մասին» Վրաստանի օրենքի նախագծի գենդերային ազդեցության վերլուծություն, 68, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/332uqfi>

¹⁶ Հավաքականների արտոնագրման դրույթներ 2021, Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիա, Հոդված 32, հասանելի է՝ <https://bit.ly/3pnBAIM>

Ժողովրդական պաշտպանի կողմից Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիային տրված հանձնարարականը երկու հիմնական ուղղություն է ներառում: Առաջին հանձնարարականի համաձայն, կարևոր է, որ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան արտոնագրված հավաքականների բժիշկների համար նախատեսված պարտադիր դասընթացներում հաշվի առնի կին ֆուտբոլիստների սեռական և վերարտադրողական առողջության հարցերը, կին ֆուտբոլիստների սեռական և վերարտադրողական առողջության համատեքստից ելնելով ընդունի ուղղորդող փաստաթուղթ (չափորոշիչներ) կին ֆուտբոլիստների հղիության և հետհղիության շրջանի ֆիզիկական ծանրաբեռնվածության վերաբերյալ: Երկրորդ հանձնարարականի համաձայն՝ կին ֆուտբոլիստների աշխատանքային իրավունքի իրացման նպատակով կարևոր է, որ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հետևի Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի կանոններին: Կանոնակարգերը վերաբերում են հղիության, ծննդաբերության և երեխային խնամելու ժամանակահատվածում կին ֆուտբոլիստների իրավունքների պաշտպանությանը և դրանց խախտման դեպքում մարզական պատժամիջոցների կիրառմանը:¹⁷

Նշենք, որ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ստացած հանձնարարականները նախատեսելու պատրաստակամություն է հայտնել: Կին ֆուտբոլիստների սեռական և վերարտադրողական իրավունքների, ինչպես նաև մայրության իրավունքի պաշտպանության նպատակով Վրաստանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակը շարունակում է համագործակցել Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ:

2.3. Հղիության և ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդի, երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի փոխհատուցումը և երեխայի խնամքի համար արձակուրդի տրամադրումը նաև տղամարդկանց

Հավասարության վիճակի վերաբերյալ նախորդ տարվա զեկույցում Վրաստանի Ժողովրդական պաշտպանը ուշադրությունը կենտրոնացրել էր հղիության և ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդի, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի կարգավորող նորմերում դրական փոփոխությունների և դեռևս անհաղթահարելի խնդիրների վրա:¹⁸ Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում դարձյալ արդիական է հետևյալ մարտահրավերը՝ նման արձակուրդի համար հատկացվող անբավարար վարձատրությունն այն աշխատողներին, որոնց նկատմամբ գործում է «Վրաստանի աշխատանքային օրենսգիրքը»: Բացի այդ, անհավասարության խնդիրը սրվում է, մի կողմից, «Վրաստանի աշխատանքային օրենսգրք» օրգանական օրենքով, իսկ մյուս կողմից՝ «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքով՝ վարձատրության տարբեր չափորոշիչներով: Կարևոր է, որ հղիության և ծննդաբերության արձակուրդի համար պետությունը սահմանի միասնական վարձատրության չափորոշիչ, իսկ վարձատրության չափը և՛ երեխային, և՛ մորը ընձեռի արժանապատիվ կենսապայմաններ

¹⁷ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի հանձնարարականը Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիային հասանելի է՝ <https://bit.ly/3HAmXmI>

¹⁸ Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի վերաբերյալ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի հատուկ զեկույցը 2020 թ. 15-18 հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3IeAr8G>

ստեղծելու հնարավորություն:¹⁹ Վարձատրության չափը և մայրության պաշտպանության իրավունքը իրացնելու համար նպատակահարմար է, որ Վրաստանը վավերացնի Աշխատանքի միջազգային կազմակերպության Մայրության պաշտպանության մասին 183-րդ կոնվենցիան:²⁰

Վրաստանի Ժողովրդական պաշտպանը նշում է, որ երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը ժամանակակից, գենդերային կարծրատիպերից զերծ ըմբռնմամբ, երկու ծնողների իրավունքն ու պարտականությունն է: Բացի այդ, գենդերային հավասարությունն, ընդհանրապես, և կանանց տնտեսական հզորացումն աներևակայելի է միայն նրա մասին առկա կարծրատիպերը կոտրելու հաշվին, անհրաժեշտ է վերանայել տղամարդկանց մասին գոյություն ունեցող թյուր պատկերացումները՝ ընտանիքում նրանց միայն տնտեսական դերի վերաբերյալ: Այս մոտեցումը որոշ չափով կիսում է Վրաստանի օրենսդրությունը:

Ինչպես հայտնի է, 2021 թվականից ուժի մեջ են մտել Վրաստանի Օրգանական օրենքով՝ «Վրաստանի աշխատանքային օրենսգրքով» նախատեսված փոփոխությունները, որոնց շրջանակներում երկու ծնողին տրվել է երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի վճարովի մասից օգտվելու հնարավորություն,²¹ ինչպես նաև երեխայի հորը տրվել է հղիության և ծննդաբերության արձակուրդի այն օրերից օգտվելու իրավունք, որոնք չի օգտագործել երեխայի մայրը:²² Վրաստանի Ժողովրդական պաշտպանի համար կարևոր էր ուսումնասիրել այս փոփոխությունների հետևանքները: Ըստ ՀԻԻԱ Սոցիալական ծառայության գործակալությունից ստացած տեղեկատվության՝ պետական վճարումների միասնական հաշվառման բազայի համաձայն 2021 թվականի հունվարից նոյեմբեր ամիսը ներառյալ երեխայի խնամքի համար վճարովի արձակուրդից օգտվել է 381 աշխատող, այդ թվում՝ 333 կին և 48 տղամարդ: Այս 48 տղամարդկանցից 46-ը երեխայի խնամքի համար արձակուրդը վերցրել է 57 օրվա չափով (մեկ դեպքում՝ 30 օր և ևս մեկ դեպքում՝ 19 օր) և նրանց փոխհատուցվող գումարը (բացառությամբ 7 դեպքի) կազմել է 1000 լարի՝ ընդհանուր առմամբ 48 տղամարդու տրվել է 45310 լարի²³: Ինչ վերաբերում է մոր հղիության և ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդի

¹⁹ Իր հերթին, հարկ է նշել, որ նշված հարցերը Վրաստանի և Եվրամիության միջև կնքված Ասոցացման համաձայնագրի և համապատասխան օրակարգերի մաս են կազմում, իսկ «Վրաստանի աշխատանքային օրենսգրքում» կատարված վերջին փոփոխությունները համապատասխանում են այդ պարտավորություններին:

²⁰ Աշխատանքի միջազգային կազմակերպության 183-րդ կոնվենցիայի համաձայն՝ վարձատրության հետ կապված չորս չափորոշիչ է գործում: Առաջին չափորոշիչի համաձայն՝ վարձատրությունը պետք է սահմանվի մոր նախորդ եկամտի առնվազն երկու երրորդի չափով: Երկրորդ չափորոշիչի համաձայն՝ վարձատրությունը պետք է կազմի միջին աշխատավարձի առնվազն երկու երրորդը: Երրորդ չափորոշիչի համաձայն՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի համար նախատեսված վարձատրությունը պետք է համարժեք լինի աշխատողի անաշխատունակության ժամանակահատվածի համար նախատեսված վարձատրությանը: Չորրորդ չափորոշիչի համաձայն՝ եթե երկրի տնտեսական վիճակը թույլ չի տալիս պահպանել վերը նշված չափանիշը, ապա սահմանված վարձատրությունը անընդհատ պետք է աճի, և այս դեպքում պետությունը համապատասխան բացատրություններ պետք է ներկայացնի Աշխատանքի միջազգային կազմակերպությանը:

²¹ Վրաստանի օրգանական օրենք՝ «Վրաստանի աշխատանքային օրենսգիրք», 37-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև 39-րդ հոդվածը:

²² Վրաստանի օրգանական օրենք՝ «Վրաստանի աշխատանքային օրենսգիրք», 37-րդ 4-րդ կետը, ինչպես նաև Հոդված 39-ը:

²³ Սոցիալական ծառայության գործակալության 2021 թվականի նոյեմբերի 22-ի № 04/11476 պաշտոնական նամակը:

չօգտագործված օրերից հոր կողմից օգտվելու փաստերին՝ արձանագրվել է 3 դեպք (երկու դեպքում՝ 126 օր և մեկ դեպքում՝ 115 օրվա չափով) և յուրաքանչյուրի համար փոխհատուցվող գումարը կազմել է 1000 լարի:²⁴ Բացի այդ, Ժողովրդական պաշտպանի գրասենյակը տեղեկություններ է ստացել մի քանի մասնավոր ընկերություններից, որոնց պատասխանների համաձայն, ընթացիկ տարում երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից ոչ մի տղամարդ չի օգտվել: Նրանցից մեկը նշել է, որ նախատեսվելով Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունները, իրենց կանոնակարգում առանձին սահմանվել է երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից հոր կողմից օգտվելու իրավունքը:

Երկրում գենդերային հավասարության հաստատման գործընթացում կարևոր է, որ Վրաստանի օրենսդրության մեջ երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի հետ կապված կատարվեն ավելի շատ փոփոխություններ՝ հիմնվելով այլ երկրների փորձի և միջազգային կամ տարածաշրջանային մակարդակով գործող չափորոշիչների վրա: Օրինակ՝ Եվրամիության 2019/1158 դիրեկտիվը յուրաքանչյուր ծնողի համար առանձին-առանձին նախատեսում է արձակուրդ առնվազն 4 ամիս ժամկետով, որից առնվազն երկու ամիսն օգտագործվում է բացառապես ծնողներից մեկի կողմից, իսկ երկու ամիսը կարող է փոխանցվել մյուս ծնողին:²⁵ Յուրաքանչյուր ծնողի երկամսյա բացառիկ արձակուրդը պետք է վարձատրվի պատշաճ կերպով, որպեսզի ծնողն ունենա լրացուցիչ մոտիվացիա դրանից օգտվելու համար:²⁶ Կարևոր է նշել նաև հայրության արձակուրդի հետ կապված նույն դիրեկտիվով թարմացված չափորոշիչը:²⁷ Փաստաթղթով սահմանվել է հայրության արձակուրդը,²⁸ որը ծնողը կարող է վերցնել երեխայի ծնվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայրության արձակուրդը վճարովի է առնվազն անաշխատունակության համար սահմանված ազգային սակագնի համաձայն: Անդամ պետությունները մինչև 2022 թվականի օգոստոսի 2-ը պետք է գործարկեն սույն դիրեկտիվի պահանջներին համապատասխանող անհրաժեշտ օրենքը, կանոնակարգերը և վարչական դրույթները:

Այսպիսով, կարևոր է, որ օրենսդրության մեջ չարտացոլվեն գենդերային կարծրատիպեր և այն համահունչ լինի լավագույն միջազգային փորձին, որը երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ակտիվ մասնակից է դիտարկում ոչ միայն երեխայի մորը, այլև երկու ծնողներին:

²⁴ Սոցիալական ծառայության գործակալության 2021 թվականի նոյեմբերի 22-ի № 04/11476 պաշտոնական նամակը:

²⁵ Directive (EU) 2019/1158 of the European Parliament and of the Council of 20 June 2019 on work-life balance for parents and carers and repealing Council Directive 2010/18/EU, Art. 5.

²⁶ Directive (EU) 2019/1158 of the European Parliament and of the Council of 20 June 2019 on work-life balance for parents and carers and repealing Council Directive 2010/18/EU, Art. 8 (3).

²⁷ Վրաստանի Ժողովրդական պաշտպանն օգտագործում է միջազգային փորձը, որը տարբերակում է մայրության արձակուրդը, հայրության արձակուրդը և ծնողների արձակուրդը: Մայրության արձակուրդը ներառում է [Վրաստանի օրենսդրությամբ սահմանված] հղիության և ծննդաբերության արձակուրդը, հայրության արձակուրդը՝ երեխայի ծնվելուց հետո ընկած ժամանակաշրջանը [արձակուրդի այս ձևը ճանաչված չէ Վրաստանի օրենսդրությամբ], իսկ ծնողներին տրամադրվող արձակուրդը վերաբերում է երկու ծնողներին և ներառում է Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված երեխայի խնամքի համար արձակուրդի հասկացությունը:

²⁸ Օրիգ. paternity leave.

Այս փոփոխությունները կբարելավեն կանանց իրավական վիճակը, բացի այդ, նման մոտեցումը դրական ազդեցություն կունենա երեխայի հուզական և մտավոր զարգացման վրա:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավահավասարությունը

Ժողովրդական պաշտպանը տարիներ շարունակ նշում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավական վիճակի վրա բացասաբար է անդրադառնում հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձանց բժշկական մոդելը, ինչը, գործնականում, տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց թույլ չի տալիս ստանալ իրենց անհատական կարիքները բավարարող նպաստը: Այս խնդիրը հատկապես ակնհայտ է առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում:

Դարձյալ մարտահրավեր է ֆիզիկական կամ այլ հասանելիության ապահովումը, ինչը լրջագույն խոչընդոտ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց համար ինքնուրույն կյանք վարելու հարցում: 2021 թվականին այս խնդիրը բացահայտվել է հաշմանդամություն ունեցող հղի կանանց իրավունքների համատեքստում: Ինչպես վկայում է Ժողովրդական պաշտպանի փորձը, նրանք խոչընդոտների են բախվում առողջության պահպանման ծառայություններից օգտվելիս: Մասնավորապես, բացահայտվել են ինչպես ֆիզիկական հարմարվողականության խնդիրներ նախաձննդյան (անտենատալ) ծառայություններ մատուցող հաստատություններում, այնպես էլ առողջության հետ կապված տեղեկատվության հասանելիության առումով առկա մարտահրավերներ:

Դեռևս մարտահրավեր է մնում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին կրթական միջավայրը հարմարեցնելու հարցը, որն այս տարի որպես խնդիր է բացահայտվել ոչ ֆորմալ կրթություն ստանալու գործընթացում:

3.1. Հաշմանդամության բժշկական մոդելից բխող խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանում ևս բացահայտվել են խնդիրներ, որոնք անմիջականորեն կապված են Վրաստանում գործող հաշմանդամության կարգավիճակի սահմանման բժշկական մոդելի հետ: Տարիներ շարունակ Ժողովրդական պաշտպանը մատնանշում է հաշմանդամության կարգավիճակի տրամադրման սոցիալական մոդելի լիարժեք ներդրման անհրաժեշտությունը:²⁹ Այս մոդելը ենթադրում է, որ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակի որոշումը և սոցիալական նպաստների տրամադրումը (նյութական կամ ոչ նյութական) պետք է սահմանվի ոչ միայն բժշկական գնության արդյունքում հաստատված ախտորոշման, այլ նաև կոնկրետ անձի անհատական կարիքների և շրջակա միջավայրի գործոնների անհատական գնահատման հիման վրա:

Հաշմանդամության կարգավիճակի տրամադրման թերի մոդելը գործնականում խնդիրներ է ստեղծում հատկապես առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում, և այս

²⁹ Ժողովրդական պաշտպանի 2017 թվականի խորհրդարանական զեկույցը Վրաստանում Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ, 33: Ժողովրդական պաշտպանի 2016 թվականի խորհրդարանական զեկույցը Վրաստանում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ, 663-78:

ուղղությամբ խոցելի խմբերին աջակցությունը չափազանց կարևոր է: 2021 թվականին Վրաստանի Ժողովրդական պաշտպանը բացահայտեց խտրական պրակտիկա, ըստ որի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համընդհանուր առողջապահության շրջանակներում չեն փոխհատուցվում ծախսերն այն բժշկական ծառայության համար (օրթոպեդիկ էնդոպրոթեզավորում), որը պետության կողմից ֆինանսավորվում է որոշ խմբերի դեպքում: Մասնավորապես, կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի թիվ 36 որոշման հիման վրա օրթոպեդիկ էնդոպրոթեզավորումը ֆինանսավորվում է միայն ծանր հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ժողովրդական պաշտպանը գտնում է, որ չնայած նրան, որ հաշմանդամություն ունեցող անձանց գնահատման բժշկական մոդելի պայմաններում հատկապես խոցելի խումբ են համարվում ծանր հաշմանդամություն ունեցող անձինք, այնուամենայնիվ, նախքան գնահատման բժշկական մոդելը սոցիալական մոդելով փոխարինելը, անհրաժեշտ է, որ առողջապահական ծրագրերն անդրադառնան հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքներին: Խտրական փաստը հաստատելուց հետո Ժողովրդական պաշտպանը համապատասխան հանձնարարականով դիմել է Վրաստանի վարչապետին:³⁰

Բացի այդ, այս տարի Վրաստանի Ժողովրդական պաշտպանը քննարկել է դիմում, որում նշվում է, որ հաշմանդամության կարգավիճակ սահմանելու հարցում խնդիրների են բխվում Դաունի համախտանիշ ունեցող երեխաները, քանի որ համապատասխան նորմատիվ ակտերը նոգոլոգիաների ցանկում չեն ներառում Դաունի համախտանիշը: Ըստ դիմումի՝ նման տրամաբանության են ենթարկվում նաև աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաները: Վրաստանի Ժողովրդական պաշտպանը նշված գործով պարզաբանել է, որ ներկա փուլի համար հիմնական խնդիրը Վրաստանում գործող գնահատման համակարգն է, որը հիմնվում է հաստատված բժշկական ախտորոշման վրա: Ուստի, անհրաժեշտ է այն փոխարինել սոցիալական մոդելով, որը պատշաճ վարչարարական պայմաններում ունի ռեսուրսներ՝ բավարարելու խոցելի խմբերի կարիքները և ապահովելու նրանց ինտեգրումը հասարակության մեջ: Ելնելով դրանից, Ժողովրդական պաշտպանը խտրականություն չի համարել համապատասխան դիմումի նոգոլոգիաների ցանկում Դաունի համախտանիշի և/կամ աուտիզմի սպեկտրի բացակայությունը: Բացի այդ, այս ախտորոշումներից ելնելով, ներկայիս մոդելի հիման վրա չի բացառվում հաշմանդամություն ունեցող երեխային կարգավիճակի շնորհումը, կան նաև մի շարք նպատակային ծրագրեր, որոնց ընդգրկվելը կախված չէ հաշմանդամություն ունեցող երեխայի կարգավիճակի շնորհումից:

3.2. Մատչելիության խնդիրը հղի կանանց իրավունքների համատեքստում

Վրաստանի Ժողովրդական պաշտպանը երկար տարիներ մատնանշում է շարունակական աշխատանքի կարևորությունը՝ մատչելի միջավայր ապահովելու և դրա ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքները մյուսներին հավասարապես

³⁰ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հուլիսի 9-ի հանձնարարականը Վրաստանի կառավարությանը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3GdsfUs>

իրացնելու տեսանկյունից:³¹ Հաշվետու ժամանակահատվածում մատչելիության խնդիրները սուր են դրսևորվել հատկապես վերաբրտադրողական իրավունքներից օգտվելու ոլորտում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Վրաստանի օրենքը առանձնահատուկ կերպով ընդգծում է հաշմանդամություն ունեցող կանանց և աղքիկներին խտրականությունից պաշտպանելու պարտավորությունը և պահանջում նախատեսել կանանց և աղքիկների յուրահատուկ կարիքները:³² Օրենքն ուղղակիորեն սահմանում է պետության պարտավորությունը՝ խթանելու հաշմանդամություն ունեցող կանանց վերաբրտադրողական առողջության պահպանման իրավունքից օգտվելու մատչելիությունը մյուս կանանց հետ հավասար հիմունքներով:³³ Այդ նպատակով պետք է ապահովել, այդ թվում, ֆիզիկական միջավայրի, շենքերի, տեղեկատվության, բժշկական հաստատությունների և այլ ծառայությունների մատչելիությունը:³⁴

Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի փորձը վկայում է, որ հաշմանդամություն ունեցող հղի կանայք խոչընդոտների են բխվում առողջապահական ծառայություններից օգտվելիս: Մասնավորապես, բացահայտվել են ինչպես ֆիզիկական հարմարվողականության խնդիրներ նախածննդյան (անտենատալ) ծառայություններ մատուցող հաստատություններում, այնպես էլ առողջության հետ կապված տեղեկատվության հասանելիության առումով առկա մարտահրավերներ:³⁵

2020 թվականից նախածննդյան (անտենատալ) ծառայություններ մատուցող հաստատություններում մեկնարկեց գնահատման գործընթաց, որը պետք է ավարտվեր մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Իսկ 2022 թվականի հունվարի 1-ից ծառայություններ պետք է մատուցեին միայն այն հաստատությունները, որոնք լիովին կբավարարեին գնահատման գործիքներով սահմանված պահանջները, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայր ապահովելու պահանջը: Սակայն 2021 թվականի մայիսին համապատասխան հրամանում փոփոխություն է կատարվել, որով գործընթացը հետաձգվել է 1 տարով:³⁶ Համապատասխանաբար, մինչև 2023 թվականի հունվարի 1-ը հղիության հետ կապված

³¹ Ժողովրդական պաշտպանի 2018 թվականի հատուկ զեկույցը՝ Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին, էջ. 11-12: Ժողովրդական պաշտպանի 2019 թվականի հատուկ զեկույցը՝ Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին, էջ 15-18: Ժողովրդական պաշտպանի 2020 թվականի հատուկ զեկույցը՝ Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության մասին, էջ 21-22:

³² «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Վրաստանի օրենք» Հոդված 3, կետ 4:

³³ Նույն տեղում՝ Հոդված 6, կետ 3:

³⁴ Նույն տեղում՝ Հոդված 4, կետ 5 («Զ»):

³⁵ Տե՛ս Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հուլիսի 9-ի ընդհանուր առաջարկները Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերով նախարարին, հասանելի են՝ <https://rb.gy/reyzlg>; <https://rb.gy/arozlw>

³⁶ Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերով նախարարի 2021 թվականի մայիսի 14-ի N01-46/N հրամանը «Անտենատալ և պերինատալ ծառայությունների տարածաշրջայնայնության մակարդակները և բուժառուի ուղղորդման չափանիշները հաստատելու մասին» Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական ապահովման հարցերով 2015 թվականի հունվարի 15-2/Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին:

ծառայությունները կշարունակեն մատուցվել, այդ թվում այն հաստատություններում, որոնք չեն բավարարում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ միջավայրի պայմանները: Մա իր հերթին ազդում է հաշմանդամություն ունեցող հղիների՝ «Մոր և մանկան առողջության» պետական ծրագրով նախատեսված անվճար ծառայություններից առանց էական խոչընդոտների օգտվելու հնարավորության վրա:

Հաշմանդամություն ունեցող հղիների համատեքստում զգալի խնդիրներ է առաջացնում նաև այն հանգամանքը, որ բուժհաստատություններում սահմանված չէ տեսողությունից զուրկ անձանց համար ընկալելի ձևով բժշկական փաստաթղթեր տրամադրելու պարտավորությունը, արդյունքում բուժառույն չի կարողանում ինքնուրույն ծանոթանալ իր առողջության հետ կապված տեղեկություններին, ինչը նրան կախվածության մեջ է դնում երրորդ անձանցից և ստիպում բացահայտել իր անձնական տվյալները:

Ուշագրավ է, որ հղիությունը կնոջ համար յուրահատուկ շրջան է և ինքնին, նրա կարիքներին հարմարեցված միջավայրի ապահովում է պահանջում: Ուստի, համապատասխան կարիքները չնախատեսելու դեպքում, հաշմանդամություն ունեցող հղի կանայք կհայտնվեն շատ ավելի ծանր անբարենպաստ վիճակում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ պաշտպանելու անմիջականորեն այս երկու նշանները կրող անձանց իրավունքները: Նշվածը հաստատում է Ժողովրդական պաշտպանի կողմից սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների վերաբերյալ անցկացված հետազոտությունը, ըստ որի տեսողությունից զուրկ և տեղաշարժման խնդիրներ ունեցող կանայք դրսևորվել են որպես նախաձննդյան ծառայություններից օգտվելիս յուրահատուկ խոչընդոտների բախվող խումբ:³⁷

Հաշվի առնելով վերը նշվածը Ժողովրդական պաշտպանն անհրաժեշտ է համարում մի կողմից արագացնել նախաձննդյան ծառայություններ մատուցող հաստատությունների գնահատման գործընթացը, մյուս կողմից՝ առողջական վիճակի մասին տեղեկատվություն պարունակող բժշկական փաստաթղթերի մատչելիությունն ապահովելու համար ներդնել օժանդակ միջոցներ: Բացի այդ, անհրաժեշտ է համակարգված վերլուծել հաշմանդամություն ունեցող հղի կանանց կարիքներն առողջապահական ծառայությունների մատչելիության առումով և ձեռնարկել համապատասխան միջոցներ այդ կարիքները բավարարելու համար:

3.3. Երեխայի խելամիտ հարմարեցումը կրթական գործընթացին

Խելամիտ հարմարեցման ապահովումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավահավասարության պաշտպանության կարևոր բաղադրիչն է, քանի որ այս սկզբունքը պահանջում է, որ հաշվի առնվեն ոչ միայն որևէ խմբի, այլ կոնկրետ անհատի շահերը: Ընթացիկ հաշվետու տարվա փորձը ցույց է տվել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքից հավասարապես օգտվելու մատչելիությունը դեռևս լուրջ մարտահրավեր է համարվում:

³⁷ «Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ. ազգային գնահատական», Վրաստանի Ժողովրդական պաշտպան, 2019, էջ. 13, հասանելի է՝ <https://rb.gy/694oaj>

Նախորդ տարվա ընթացքում կրթության ոլորտում հաշմանդամության հիմքով խտրականության, մասնավորապես՝ խելամիտ հարմարեցումից հրաժարվելու փաստեր բացահայտվել են ինչպես հանրակրթական,³⁸ այնպես էլ բարձրագույն կրթությունն ստանալու փուլերում:³⁹ Այս տարի խնդրահարույց էր հաշմանդամություն ունեցող երեխաների համար ոչ ֆորմալ կրթության ապահովումը:⁴⁰

Ժողովրդական պաշտպանն ուսումնասիրել է Դաունի համախտանիշ ունեցող երեխային ուսումնական հաստատության կողմից ծառայություններ մատուցելուց հրաժարվելու հարցը: Ծառայություններից հրաժարվելիս հաստատությունը չի դիտարկել խելամիտ հարմարեցման սկզբունքի հիման վրա համապատասխան այլընտրանքները և ուսումնական գործընթացի մոդիֆիկացիայի հնարավորությունը, ինչը կարող էր օգնել ծնողին միջավայրին հարմարվելու գործընթացում (ծնողին կտրվեր հնարավորություն կարճ ժամանակով, հաստատության անձնակազմի հետ միասին, ներկա գտնվել դասապրոցեսին և օգնել երեխային ընդգրկվել տարբերակալիություններում), ինչպես նաև մանկական հոգեբանի հետ խորհրդակցությունը:

Հարկ է նշել, որ ոչ ֆորմալ կրթությունը նպաստում է դեռահասների գրագիտությանը, ինչպես նաև կենցաղային հմտությունների ձևավորմանը և սոցիալական կամ մշակութային զարգացմանը: Նմանատիպ ծրագրերը հաճախ լրացնում են ֆորմալ կրթության ոլորտում առկա բացերը: Բացի այդ, ոչ ֆորմալ կրթությունն առանձնահատուկ նշանակություն ունի ներառական կրթության համատեքստում, քանի որ ճկուն և կոնկրետ համատեքստին ուղղված պայմաններից ելնելով, այն ավելի լավ է արձագանքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքներին: Հետևաբար, դեռահասների համար ոչ ֆորմալ կրթական տարածքներ ստեղծելու պատասխանատվությունը ստանձնող հաստատությունները, պարտավոր են ճիշտ գնահատել հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր երեխայի կարիքները և առաջարկած ծառայությունները հնարավորինս հարմարեցնեն նրանց անհատական կարիքներին:

4. Ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող դատապարտյալների կրոնական կարիքները

Նախորդ տարվա նման⁴¹, 2021 թվականին ևս իրենց հրատապությունը չեն կորցնում կրոնական կարիքների լուծման հետ կապված խնդիրները: Հաշվետու ժամանակահատվածում Ժողովրդական պաշտպանի գրասենյակի առջև մարտահրավեր է ծառացել ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող դատապարտյալների հետ կապված: Մասնավորապես, հարցեր են

³⁸ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2020 թվականի հուլիսի 20-ի հանձնարարականը ՍՊԸ «Նյուտոնի ռոբոտիկայի դպրոցի» տնօրենին, հասանելի է՝ <https://bit.ly/3oova6A>

³⁹ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2020 թվականի դեկտեմբերի 7-ի դիմումը Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և Գնահատման ու քննությունների ազգային կենտրոնին, հասանելի է՝ <https://bit.ly/3oph7xF>

⁴⁰ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի հանձնարարականը ՍՊԸ «Արտ-Թայմ Ստուդիա»-ին, հասանելի է՝ <https://bit.ly/3eM6fo7>

⁴¹ Խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին Ժողովրդական պաշտպանի 2020 թվականի հատուկ զեկույց, էջ. 26-27:

ծագել քրեակատարողական հիմնարկներում աղոթատեղիների բացակայության և կրոնական տոների ժամանակ թույլատրված սննդակարգի վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկվածության հետ կապված:

Թե՛ միջազգային,⁴² թե՛ ազգային⁴³ նորմատիվ չափորոշիչները երաշխավորում են, որ նույնիսկ ազատազրկման պայմաններում դատապարտյալները հնարավորինս լիարժեք կարողանան իրացնել իրենց կրոնի կամ համոզմունքի արտահայտման իրավունքը, ինչը ներառում է ինչպես կրոնական ծիսակատարություններին մասնակցելն, այնպես էլ կրոնական տոներ նշելը և համապատասխան սննդակարգ պահպանելը:⁴⁴ Թեև Ժողովրդական պաշտպանի գրասենյակի փորձը վկայում է, որ նշվածի իրականացումը կապված է խնդիրների հետ: Տարիների ընթացքում մի շարք դատապարտյալներ դիմումներ են ներկայացրել ինչպես կրոնական տոների հետ կապված սննդակարգի, այնպես էլ աղոթքները պատշաճ կատարելու հնարավորության խնդիրների հետ կապված: Դեպքերի ուսումնասիրությունը, մեծ մասամբ, բացահայտում էր դատապարտյալների ոչ համարժեք տեղեկացվածությունը համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ:

2021 թվականին գործավարության համար հիմք հանդիսացավ բանտարկյալներից մեկի հեռախոսազանգը, ով պնդում էր, որ չնայած իր բազմաթիվ խնդրանքներին, քրեակատարողական հիմնարկների տարածքներում չի փակցվել Կուրբան-Բայրամի հետ կապված թույլատրված սննդամթերքների ցանկը, այն դեպքում երբ նման գործողությունն իրականացվում է քրիստոնեական տոների հետ կապված: Ժողովրդական պաշտպանի գրասենյակի կողմից տեղեկատվություն ստանալու հարցմանն ի պատասխան՝ հատուկ քրեակատարողական ծառայությունը պարզաբանեց, որ թույլատրված սննդամթերքի մասին տեղեկատվությունը կփակցվի քրեակատարողական հիմնարկների տարածքի տեսանելի տեղում:⁴⁵ Գերատեսչության տվյալներով, ինչպես ուղղափառ, այնպես էլ ոչ գերիշխող կրոնական տոների վերաբերյալ⁴⁶ տեղեկատվությունը հանրությունը ստանում է նաև ծառայության պաշտոնական կայքի (sps.gov.ge) միջոցով: Սակայն ծառայության կայքում հասանելի են հայտարարություններ, որոնք մատնանշում են, որ հանրությունը տեղեկացվում է միայն այնպիսի տոների կապակցությամբ, ինչպիսիք են Սուրբ Ծնունդը, Զատիկը, Մարիամոբան՝ Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը, Գիորգոբան՝ Սուրբ Գևորգի տոնը և Ամանորը:⁴⁷ Նմանատիպ

⁴² «Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններ» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 70/175 բանաձև, կարգ 6, 42, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2006)2 հանձնարարականը անդամ պետություններին Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ, կետ՝ 29.1-29.2, 22.1:

⁴³ Վրաստանի պատժակատարողական, պրոբացիայի և իրավաբանական աջակցության հարցերով նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N187 «Մեղադրյալների/դատապարտյալների՝ կրոնական ծեսերին մասնակցելու և հոգևորականների հետ հանդիպելու իրավունքից օգտվելու իրավունքի մասին» հրամանը: Հոդված 4, Կալանավորման օրենսգիրք, Հոդ. 23, Կետ 6:

⁴⁴ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի № 22 ընդհանուր մեկնաբանությունը. Հոդված 18 (Մտքի, խղճի և կրոնի ազատություն), 1993, CCPR/C/21/Rev.1/Add.4, պար. 4, 8.

⁴⁵ Հատուկ քրեակատարողական ծառայության 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №292813/01 պաշտոնական նամակը:

⁴⁶ Նույն տեղում

⁴⁷ Հասանելի է՝ <https://rb.gy/vr0uqx>

հայտարարություններ են հրապարակվում նաև սոցցանցի միջոցով:⁴⁸ Ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցողների կրոնական տոների հետ կապված նման տեղեկություն չի որոնվում: Համապատասխան հղումներ նշված չեն նաև հատուկ քրեակատարողական ծառայությունից հարցման արդյունքում ստացած տեղեկատվության մեջ:

Ինչ վերաբերում է աղոթատեղիներին, ապա բոլոր քրեակատարողական հիմնարկներում գործում է ուղղափառ աղոթատուն, մինչդեռ այլ կրոնների պատկանող բանտարկյալների համար աղոթատեղիներ են հատկացված միայն երկու (№3 և №5) քրեակատարողական հիմնարկներում, իսկ մնացած հիմնարկներում այլ կրոնական հավատք ունեցող բանտարկյալները կրոնական ծիսակատարությունները կատարում են իրենց բանտախցերում:⁴⁹

Հետևաբար, կարելի է ասել, որ կրոնական տոների կապակցությամբ թույլատրված սննդամթերքի մասին ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող դատապարտյալներին իրազեկելը և արդյունքում այդ հնարավորությունից լիարժեք օգտվելը, կախված է այս կամ այն քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունից, ում նկատմամբ կան հարցեր՝ կապված համապատասխան պարտավորությունների պատշաճ կատարման հետ: Ռիսկերը հիմնականում ապահովագրված են ուղղափառ եկեղեցու հետևորդ բանտարկյալների նկատմամբ, քանի որ հատուկ քրեակատարողական ծառայությունը կարևորագույն տոներից առաջ հրապարակայնորեն տեղեկացնում է հանրությանը, ինչը բանտարկյալների ընտանիքի անդամներին թույլատրված ապրանքների մասին տեղեկություններ ձեռք բերելու և քրեակատարողական հիմնարկներ սննդամթերքներն ուղարկելու հնարավորություն է ընձեռում:

Միևնույն ժամանակ, կրոնական փոքրամասնություններին պատկանող դատապարտյալների համար բավարար աղոթատեղիների բացակայությունը տպավորություն է ստեղծում, որ հատուկ քրեակատարողական ծառայությունը ֆորմալ կերպով է վերաբերվում համապատասխան չափորոշիչների կամ նորմերի համաձայն այս առումով առկա կրոնական կարիքները, հնարավորության սահմաններում, բավարարելու վերաբերյալ սահմանումներին:⁵⁰ Ժողովրդական պաշտպանը մասնավորապես նշում է, որ երկրում հավասարության իրավունքը երաշխավորելու համար բավական չէ, որ պետությունն ուղղակի գերծ մնա խտրական օրենսդրություն կամ գործելակերպ մշակելուց: Այս առումով ամենամեծ մարտահրավերը

⁴⁸ Տե՛ս օրինակ՝ <https://rb.gy/l4qarg>; <https://rb.gy/uzmiri>; <https://rb.gy/30zru0>

⁴⁹ Հատուկ քրեակատարողական ծառայության 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №292813/01 պաշտոնական նամակը: Նշենք, որ հաշվետու ժամանակահատվածում ստացված դիմումում դիմումատուն խնդրում էր փոքր տարածք հատկացնել, քանի որ, ըստ նրա, բանտախցում հնարավոր չէ աղոթք կատարվել անբավարար տարածքի պատճառով: Բացի այդ, խցում կա զուգարան, իսկ նման տարածքում աղոթելը հակասում է համապատասխան կրոնական կանոններին:

⁵⁰ Սա հաստատում է գերատեսչությունից հարցման արդյունքում ստացած տեղեկությունը, ըստ որի՝ սոցաշխատողները տարբեր կրոնական հավատք ունեցող դատապարտյալներից տեղեկատվություն են ստանում իրենց կրոնական կարիքների մասին, որից հետո, հնարավորության սահմաններում, բավարարվում են մեղադրյալների/դատապարտյալների բացահայտված կարիքները (Հատուկ քրեակատարողական ծառայության 2021 թվականի դեկտեմբերի 6-ի №292813/01 գրությունը):

պետության կողմից իր դրական պարտավորություններ կատարելն է՝ կոնկրետ միջոցներ ձեռնարկելը:

Ելնելով վերը նշվածից, կարևոր է, որ հատուկ քրեակատարողական ծառայությունը խորապես ուսումնասիրի ազատագրված հիմնարկներում առկա ենթակառուցվածքային ռեսուրսները և, հաշվի առնելով այդ հիմնարկներում գտնվող դատապարտյալների կրոնական կարիքները, շոշափելի քայլեր ձեռնարկի ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող բանտարկյալների համար աղոթատեղիներ հատկացնելու նպատակով: Բացի այդ, կրոնական տոների հետ կապված թույլատրելի սննդամթերքների վերաբերյալ դատապարտյալներին իրազեկելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել առավել արդյունավետ միջոցներ, ինչն, ի թիվս այլնի, պահանջում է քրեակատարողական հիմնարկների վարչակազմի անդամներին պարբերաբար տրամադրել ուղղորդիչ ցուցումներ, որպեսզի նրանք համապատասխան (այդ թվում, ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցողների) տոներից առաջ, ողջամիտ ժամկետում, համապատասխան ցուցակները փակցնեն բանտարկյալների համար տեսանելի տեղում: Սրա հետ մեկտեղ, հատուկ քրեակատարողական ծառայությունը ծանրոցների ընդունման գործընթացի մեկնարկի մասին հրապարակային հայտարարության տեսքով հանրությանը պետք է ծանուցի նաև կրոնական փոքրամասնությունների հիմնական տոների ժամանակ: Ցանկալի է, այդ հայտարարություններին (ցանկացած տոնի դեպքում) կցել թույլատրված մթերքների ցանկը:

5. Ոչ գերիշխող էթնիկ խմբերի ներկայացուցիչների իրավահավասարությունը

Հավասարության իրավունքի խախտման փաստերի հետ կապված ոչ գերիշխող էթնիկ ծագում ունեցող անձանց կողմից Ժողովրդական պաշտպանին ուղղված դիմելիության ցուցանիշը ոչ այնքան բարձր է, ինչը պայմանավորված է մի կողմից մարդու իրավունքների և համապատասխան իրավական մեխանիզմների մասին իրազեկվածության ցածր մակարդակով, իսկ մյուս կողմից՝ առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները հոգալու առաջնահերթ անհրաժեշտությամբ: Ելնելով դրանից, Ժողովրդական պաշտպանի գրասենյակը հաշվետու ժամանակահատվածում մի շարք դեմ առ դեմ հանդիպումներ է անցկացրել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,⁵¹ որոնց արդյունքում բացահայտվել են համակարգային խնդիրները, այդ թվում՝ հանրային ծառայությունների մատչելիության հետ կապված խոչընդոտները և մեսխեթական համայնքի առջև ծառացած մարտահրավերները: Ուշագրավ էր նաև Դմանիսիում տեղի բնակիչների միջև տեղի ունեցած առճակատումը:

5.1. Հանրային ծառայությունների մատչելիությունը

Հանրային ծառայությունների համընդհանուր մատչելիության ապահովումը ներառման էական մասն է կազմում,⁵² քանի որ համապատասխան ծրագրերից և ծառայություններից օգտվելը կարևոր դեր է խաղում հավասար սոցիալ-տնտեսական հնարավորությունների ստեղծման

⁵¹ Մանրամասն տեղեկությունները տե՛ս 11.3 գլխում:

⁵² Եվրոպայի տնտեսական և սոցիալական կոմիտեի տեսակետը «ԵՄ անդամ երկրներում բազմազանության կառավարման» մասին, պար. 3.5, հասանելի՝ <https://rb.gy/30o5i8>

գործում:⁵³ Վրաստանի կառավարությունը դեռևս 2009 թվականին հանձնարարականներ է ընդունել բազմալեզու պետական ծառայություններ ապահովելու վերաբերյալ, քանի որ հանրային ծառայություններից օգտվելը մարտահրավեր էր ոչ վրացալեզու՝ մայրենի լեզվով խոսող փոքրամասնությունների համար:⁵⁴ Հենց այս ժամանակաշրջանից՝ հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների գործողությունների պլանի⁵⁵ մշակմամբ, ինտեգրման ոլորտում սկսեց ձևավորվել միասնական քաղաքականություն: Թեև, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարությունը ևս ընդունում է, որ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները տնտեսական իրավունքների իրացման և սոցիալական բարիքներից օգտվելու տեսանկյունից դարձյալ խնդիրների են բախվում:⁵⁶

Այս ուղղությամբ հիմնական խոչընդոտը լեզվական պատնեշն է: Չնայած նրան, որ վերջին տարիներին պետական լեզվի ուսուցման առումով մի շարք դրական միջոցառումներ են իրականացվել⁵⁷, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության մեջ իրավացիորեն նշվում է, որ լեզվի ուսուցման նախադպրոցական, դպրոցական, մասնագիտական, բարձրագույն և մեծահասակների կրթության մակարդակներում առկա է հետևողական, շարունակական և միասնական համակարգի ձևավորման խնդիրը:⁵⁸ Ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների այցելությունները էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններ ընդգծեցին մեծահասակների շրջանում պետական լեզվի ուսուցման ժողովրդականացման անհրաժեշտությունը: Բացի այդ, դպրոցականները դժգոհ են վրաց լեզվի ուսուցման որակից:

Ուշագրավ է, որ ծնողների մեծ մասը ցանկություն է հայտնում, որ նախադպրոցական և դպրոցական տարիքում իրենց երեխաները ստանան բազմալեզու կրթություն՝ ազգությամբ վրացի աշակերտների հետ միասին: Նրանց կարծիքով՝ դա մի կողմից կբարելավի վրաց լեզվի ուսուցումը

⁵³ «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021 - 2030 թվականների պետական ռազմավարության և Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2022 թվականների պետական ռազմավարության 2021-2022 թվականների գործողությունների պլանի հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2021 թվականի հուլիսի 13-ի №356 որոշումը, հավելված1, էջ՝ 32-33:

⁵⁴ Մեկուսացման շրջանի ձեռքում. Փոքրամասնությունների իրավունքները Վրաստանում այսօր, Minority Rights Group International (ՄՐԳ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի խորհրդատվական կարգավիճակ ունեցող միջազգային ոչ կառավարական կազմակերպություն), 2009, էջ. 4, 7, հասանելի է՝ <https://rb.gy/baklhq>

⁵⁵ Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի N348 կարգադրությունը «Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործողությունների պլանի հաստատման մասին»:

⁵⁶ «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021 - 2030 թվականների պետական ռազմավարության և Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության 2021-2022 թվականների գործողությունների պլանի հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2021 թվականի հուլիսի 13-ի №356 որոշումը, հավելված 1, էջ՝ 33:

⁵⁷ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2018 թվականի խորհրդարանական զեկույց, էջ. 291-292

⁵⁸ «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021 - 2030 թվականների պետական ռազմավարության և Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության 2021-2022 թվականների գործողությունների պլանի հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2021 թվականի հուլիսի 13-ի №356 որոշումը, հավելված 1, էջ՝ 16:

(ի տարբերություն ոչ վրացալեզու դպրոցների և սեկտորների, որտեղ հաղորդակցությունը, փաստացիորեն, ամբողջովին մայրենի լեզվով է ընթանում, այդ թվում՝ երկլեզու ուսուցիչների կողմից), իսկ մյուս կողմից՝ համատեղ ուսուցումը կնպաստի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրման գործընթացին վաղ տարիքից, քանի որ նրանք ակտիվորեն կշփվեն էթնիկ վրացի դաստիարակների և աշակերտների հետ: Այն փաստը, որ էթնիկ վրացի ուսանողների հետ միասին բարձրագույն կրթություն ստացած, այսպես կոչված 1+4 ծրագրի շրջանավարտների մեծ մասը համեմատաբար վարժ է տիրապետում վրացերենին,⁵⁹ հաստատում է նման մտահոգությունների հիմնավորվածությունը:

Թեև, այս ծրագիրը նույնպես չի համարվում լիովին արդյունավետ, քանի որ համապատասխան լեզվական խմբերին հատկացվող դրամական միջոցների գումարի չափից ելնելով, մեծ թվով ուսանողներ զրկվում են ֆինանսավորումից:⁶⁰ Այս իրավիճակում առավել խնդրահարույց է նորմատիվ սահմանափակումը, ըստ որի վրաց լեզվի նախապատրաստական կրթական ծրագրի շահառուների վրա չի տարածվում այն ծրագրային ուղղությունների ֆինանսավորումը, որի դեպքում ուսանողի ուսման վարձն ամբողջությամբ ֆինանսավորվում է պետության կողմից:⁶¹ Հետևաբար, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները բախվում են այն իրականությանը, որ միասնական ազգային քննություններին աղբյուրներ են, հայերեն կամ օսերեն և արխագերեն թեստեր հանձնելիս, ուսումը շարունակելու համար բավարար ֆինանսական աջակցության բացակայության դեպքում, կասկածի տակ է առնվում նրանց կողմից բարձրագույն կրթության ստանալու հնարավորությունը: Բացի այդ, ուշադրության է արժանի հաշվետու ժամանակահատվածում Ժողովրդական պաշտպանի գրասենյակի առջև դրված բարձրագույն ուսումնական հաստատություններում աղբյուրներ/հայերեն լեզու և գրականություն առարկաների բացակայության հարցը, ինչը թույլ չի տալիս ուսանողներին մասնագիտանալ այդ ոլորտներում և ստիպում նրանց համապատասխան կրթությունը ստանալ Աղբյուրներում/Հայաստանում: Ժողովրդական պաշտպանը կարևոր է համարում 2022 թվականին կրթության ոլորտում նախատեսվող օրենսդրական փոփոխությունների և բարեփոխումների շրջանակում նշված խնդիրների նկատառումը:

Լեզվական պատնեշի պատճառով ոչ դոմինանտ էթնիկ խմբերի ներկայացուցիչները չեն կարողանում պատշաճ կերպով օգտվել հանրային ծառայություններից՝ ինչը տեղի բնակչությունը կապում է ծառայություններ մատուցող հաստատություններում իրենց մայրենի լեզվի իմացությամբ անձանց անբավարար թվով աշխատակիցների փաստի հետ (հատկապես սպառողների հետ առաջնային շփման օղակներում (օպերատորներ, խորհրդատուներ և այլն)): Հաճախակի բնույթ են կրում նաև սխալ հաղորդակցությունները, որոնք երբեմն վերաճում են

⁵⁹ Նույն տեղում, էջ 23, Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2018 թվականի խորհրդարանական զեկույց, էջ. 291:

⁶⁰ Ժողովրդական պաշտպանի 2019 թվականի խորհրդարանական զեկույց, էջ. 382, Ժողովրդական պաշտպանի 2020 թվականի խորհրդարանական զեկույց, էջ. 411-412:

⁶¹ «2021-2021 ուսումնական տարում Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատություններին ծրագրային ֆինանսավորման տրամադրման կանոններն ու պայմանները հաստատելու մասին» Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2021 թվականի հուլիսի 21-ի №50/զ հրամանը, Հոդված 6, կետ 5:

ագրեսիայի ոչ վրացալեզու շահառուների նկատմամբ: Խնդիրն ավելի է սրվում այն դեպքերում, երբ քաղաքացիները համապատասխան ծառայությունները ստիպված են լինում ստանալ խոշոր քաղաքներում կամ մայրաքաղաքում: Օրինակ, նման անհրաժեշտությունը պարբերաբար առաջանում է առողջապահական ծառայություններ ստանալիս, ինչը հիմնականում պայմանավորված է գյուղական բնակավայրերում առաջնային առողջապահության խնդիրներով:⁶² Բացի այդ, բուժառուների բժշկական կարիքները չեն սահմանափակվում միայն առաջնային բուժօգնության օղակով նախատեսված ծառայություններով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ նման տրվածությունից ելնելով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ստիպված են լինում իրենց հետ տանել ընտանիքի անդամներին, հարազատներին կամ բարեկամներին և նրանց օգնությամբ խոսել բժշկի հետ, ինչն, ինքնին, կապված է հավելյալ ռիսկ-գործոնների հետ:⁶³ Հաղորդակցման խնդիրներ են դրսևորվել նաև ազգային փոքրամասնությունների սոցիալական և տնտեսական իրավունքների իրացման համար անհրաժեշտ ծառայություններ մատուցող հետևյալ հաստատություններում՝ Արդարադատության տներում, Սոցիալական ծառայության գործակալության տարածքային գրասենյակներում և առևտրային բանկերի մասնաճյուղերում:

Համապատասխան ծրագրերից և ծառայություններից օգտվելուն խոչընդոտում է նաև դրանց մասին տեղեկությունների սակավությունը: Այս առումով մեծ նշանակություն է տրվում «Պետական լեզվի մասին» Վրաստանի օրենքով նախատեսված երաշխիքներին, որոնց համաձայն՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված մունիցիպալիտետներում, պետական և մունիցիպալ մարմիններն իրավասու են սահմանել Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով նախատեսվածից տարբերվող կանոն, որը ենթադրում է, անհրաժեշտության դեպքում, ազգային փոքրամասնությանը պատկանող անձի կողմից մունիցիպալ մարմինն տվյալ ազգային փոքրամասնության լեզվով ներկայացված դիմումի, բողոքի, դրան տրված պատասխանի թարգմանություն:⁶⁴ Մունիցիպալ մարմինն, անհրաժեշտության դեպքում, ապահովում է իր կողմից ընդունված նորմատիվ ակտի թարգմանությունը տվյալ ազգային փոքրամասնության լեզվով:⁶⁵

Ժողովրդական պաշտպանի գրասենյակն, այս տեսանկյունից, առկա իրավիճակն ուսումնասիրելու նպատակով տեղեկություններ ստանալու հարցում է ներկայացրել այն մունիցիպալիտետներին, որոնց էթնիկ կազմի կեսից ավելին պատկանում է ոչ գերիշխող էթնիկ

⁶² Տե՛ս Վրաստանի Ժողովրդական պաշտպանի հատուկ գեկույցը «Գյուղական բժիշկ» պետական ծրագրի շրջանակներում բնակչությանն առաջնային առողջապահական ծառայության մատչելիության մոնիթորինգ, 2020 թ, հասանելի է՝ <https://rb.gy/esme13>

⁶³ Առողջական վիճակի մասին տեղեկատվության բացահայտում (անձնական տվյալների հատուկ կատեգորիա), անհարմարություն, պակաս ազնվություն, այցելության հետաձգում ուղեկցող անձանց անկարողության/սպասման պատճառով, վրացերենի և բժշկական լեզվի իմացության անբավարար մակարդակ և այլն: Տե՛ս, օրինակ, Վրաստանում մահմեդական կանանց կենցաղը և նրանց ճնշումների բազմաշերտ նկարագրությունը, սոցիալական արդարության կենտրոն, 2021, էջ. 12-13, հասանելի է՝ <https://rb.gy/1zbnt4>

⁶⁴ Վրաստանի օրենք «Պետական լեզվի մասին», Հոդ. 11, կետ 4:

⁶⁵ Նույն տեղում՝ Հոդված 12, կետ 2:

խմբերին:⁶⁶ Ստացած գրազրույթան⁶⁷ համաձայն՝ Նինոծմինդայի, Դմանիսիի և Ախալքալաքիի մունիցիպալիտետների քաղաքապետարանները դիտարկում են ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուներով կազմած դիմումները, սակայն տեղեկությունները տրամադրում են պետական լեզվով: Դմանիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը հավելում է նաև, որ պատասխանը պատրաստ լինելուց հետո շահագրգիռ անձանց այդ մասին ծանուցում են իրենց համար հասկանալի լեզվով: Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի դիմումները ներկայացվում են վրաց լեզվով: Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը նույնպես դիտարկում է միայն վրաց լեզվով ներկայացված դիմումները, պատճառաբանելով այն հանգամանքը, որ գործավարությունն իրականացվում է հատուկ ծրագրի միջոցով, որը կենտրոնացված կերպով ստեղծված է պետական լեզվով և վրացերենից բացի թույլ չի տալիս ընդունել դիմումներ այլ լեզուներով: Սակայն մունիցիպալիտետը հավելում է, որ քաղաքացիների սպասարկման և գործավարության բաժնում աշխատում են էթնիկ ադրբեջանցի և հայ պետական ծառայողներ, ովքեր անհրաժեշտության դեպքում սպասարկում են քաղաքացիներին մայրենի լեզվով:

Ըստ տեղական ինքնակառավարման մարմինների՝ ցանկացած էթնիկ պատկանելության բնակչության համար յուրաքանչյուր տարի իրականացվում են սոցիալական և առողջապահական ծրագրեր: Բացի այդ, ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված քաղաքներում և գյուղերում պետական և մունիցիպալ սոցիալական և առողջապահական ծրագրերի մասին տեղեկատվությունը տարածվում է տեղի բնակչության մայրենի լեզվով: Սակայն այդ ծրագրերին ծանոթանալը, համապատասխան տեղեկություններ տրամադրելը և խորհրդատվությունը հնարավոր է ոչ թե մունիցիպալիտետի կողմից համապատասխան նորմատիվ ակտերի թարգմանությամբ, այլ միայն մասնագետների, ներկայացուցիչների և ավագանու անդամների օգնությամբ: Այս առումով Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը նշում է ակտիվ համագործակցությունը «Բոլնիս» թերթի հետ, ինչը ենթադրում է մունիցիպալիտետի գործունեության և քաղաքապետի ակտիվությունների մասին տեղեկությունների ադրբեջաներեն լեզվով տեղադրումը թերթի կայքում,⁶⁸ ինչն, անշուշտ, ողջունելի է:

Ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված 6 մունիցիպալիտետներից ոչ գերիշխող էթնիկ խմբերի մայրենի լեզվով թարգմանվում է միայն Ախալքալաքիի մունիցիպալիտետի

⁶⁶ Ըստ Ժողովրդական պաշտպանին կից հանդուրժողականության կենտրոնի կայքում առկա էթնիկ բազմազանության քարտեզի՝ <https://rb.gy/1pyfqc>

⁶⁷ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի 29.11.2021 թվականի №122-1222133335 պաշտոնական նամակը, Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի №09/2520 պաշտոնական նամակը, Դմանիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի №108-1082133461 պաշտոնական նամակը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի 02.12.2021թ. №116-1162133646 գրությունը, Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի 14.12.2021թ. №106-10621348103 պաշտոնական նամակը, գրասենյակը պատասխան չի ստացել Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանից:

⁶⁸ Տե՛ս <https://rb.gy/egrsus>, մունիցիպալիտետը նաև նշում է, որ ամիսը մեկ անգամ թերթի տպագիր տարբերակում տեղադրվում է ադրբեջանական ներդիր, որտեղ էթնիկ ադրբեջանցի քաղաքացիներին տեղեկություններ են տրամադրվում մունիցիպալիտետում իրականացվող ենթակառուցվածքային, սոցիալական, մշակութային և մարզական նախագծերի մասին:

պաշտոնական կայքը:⁶⁹ Համեմատաբար ավելի լավ վիճակ է սոցցանցերի դեպքում՝ Ախալքալաքի⁷⁰ մունիցիպալիտետից բացի, աղբբեջաներեն և/կամ հայերեն լեզվով տեղեկություններ են տեղադրում նաև Նինոծմինդայի⁷¹ և Մառնեուլիի մունիցիպալիտետները:⁷² Ճիշտ է, ի պատասխան Ժողովրդական պաշտպանի գրասենյակի գրագրության, Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը նույնպես նշում է, որ բոլոր կարևոր, այդ թվում՝ պետական ծրագրերի ու ծառայությունների մասին տեղեկությունները սոցցանցում տեղադրվում են նաև աղբբեջաներեն լեզվով, սակայն էջը ստուգելու արդյունքում պարզվել է, որ աղբբեջաներեն լեզվով մատչելի է միայն կորոնավիրուսին վերաբերող մի քանի նյութ:⁷³ Ծալկայի⁷⁴ և Դմանիսիի⁷⁵ մունիցիպալիտետները տեղեկությունները տեղադրում են միայն վրացերենով: Հատկանշական է, որ Ծալկայի մունիցիպալիտետի հաղորդմամբ՝ տեղեկատվությունը սոցցանցում տեղադրվում է աղբբեջաներեն և հայերեն լեզուներով, սակայն, ըստ երևույթին, դա պետք է դիտարկենք որպես ապագայի ծրագիր, այնպես, ինչպես Դմանիսիի մունիցիպալիտետի դեպքում, որը նշում է, որ այդ ուղղությամբ ծառայություններ մատուցելու համար աշխատանքներ են ընթանում:

Այսպիսով, ոչ գերիշխող էթնիկ խմբերի համար հասկանալի լեզվով հանրային ծրագրերի և ծառայությունների մասին պատշաճ ծանուցումը խնդրահարույց է օրենքով անմիջականորեն նախատեսված դեպքերում ևս և նույնիսկ ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված մունիցիպալիտետներում, ինչն, անշուշտ, վկայում է այլ մունիցիպալիտետներում առավել ցավալի վիճակի մասին: Ողջունելի է, որ մունիցիպալիտետները խոսում են տեղի բնակչության հետ ակտիվ հաղորդակցությունից: Դմանիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի հաղորդմամբ, քաղաքապետի ներկայացուցիչների աշխատասենյակները (վարչական բաժանմունքներում) համալրվում են համակարգիչներով և ապահովվում համացանցով՝ բնակչությանը տեղում ծառայություններ մատուցելու համար: Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը նշում է, որ էթնիկ փոքրամասնություններով բնակեցված գյուղերում ներկայացուցիչները էթնիկ հայեր և աղբբեջանցիներ են՝ մունիցիպալ ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու և իրենց կարիքները ինքնակառավարման մարմիններին արագորեն հասցնելու գործընթացը քաղաքացիների համար դյուրինացնելու նպատակով: Սակայն միայն ներկայացուցիչների ընդգրկվածությունն ու բանավոր հաղորդակցությունը բավարար չեն խնդրի լուծման համար:

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարությունը սոցիալ-տնտեսական պայմանները և հնարավորությունները բարելավելու նպատակով կիրառում է խնդիր 8.1-ը՝ բարձրացնել էթնիկ փոքրամասնությունների ներգրավվածությունը պետական սոցիալ-տնտեսական ծրագրերում: Այդ խնդիրն

⁶⁹ Տե՛ս <http://akhalkalaki.ge/>, <https://rb.gy/spwi6b>, <https://www.tsalka.gov.ge/>, <https://www.dmanisi.gov.ge/>, <https://bolnisi.gov.ge/>, <https://www.marneuli.gov.ge/>

⁷⁰ <https://rb.gy/sgvswe>

⁷¹ <https://rb.gy/qofcxu>

⁷² <https://rb.gy/r2tyvk>

⁷³ <https://rb.gy/rmbgxz>

⁷⁴ <https://rb.gy/brexwz>

⁷⁵ <https://rb.gy/byozuc>

իրականացնելու համար 2021-2022 թվականների գործողության պլանը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տարեկան առնվազն 2 անգամ նախատեսում է անցկացնել Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերով նախարարության և նրա ՀԻԲԱ-ների կողմից սոցիալական և առողջապահական ծրագրերի հետ կապված տեղեկատվական հանդիպումներ (40 շահառու) և Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի ու Կախեթիի մունիցիպալիտետների քաղաքապետարանների կողմից տեղեկատվական հանդիպումներ անցկացնել առնվազն 3000 շահառուների հետ՝ էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջաններում բնակչությանը սոցիալ-տնտեսական ծրագրերի մասին իրազեկելու նպատակով (8.1.1.3-8.1.1.4 ակտիվություններ):⁷⁶

Ժողովրդական պաշտպանը կարևորում է այս միջոցառումները և հույս ունի, որ տեղեկատվական հանդիպումները չեն կրի հատվածական բնույթ: Թեև, հարկ է նշել, որ նման ակտիվություններ իրականացվել են 2017-2018 թվականներին:⁷⁷ Այդուհանդերձ, Սոցիալական հետազոտությունների և վերլուծությունների ինստիտուտի 2019 թվականի հետազոտության համաձայն, հարցված էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների 69,9%-ը նշել է, որ տեղական ինքնակառավարման մարմիններին չի դիմել անձնական կամ ընտանեկան կարիքներից ելնելով: Բացի այդ, վիճակագրորեն հավաստի կապ է դրսևորվել տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու և վրացերենի իմացության փոփոխականների միջև: Մասնավորապես, հարցումը ցույց է տվել, որ անձնական և հասարակական կարիքների հետ կապված երբևէ չդիմած հարցվողների վրացերենի իմացության ինդեքսի միջին ցուցանիշն ավելի ցածր է, քան նրանց, ովքեր առնվազն մեկ անգամ դիմել են այս կամ այն կարիքի հետ կապված:⁷⁸

Ելնելով վերը նշվածից, նախքան քաղաքացիական հավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության հաստատումը, Ժողովրդական պաշտպանն այդ մասին իր ներկայացված տեսակետներում՝ տեղեկատվությունը տեղի բնակչության մայրենի լեզվով պրոակտիվ կերպով տարածելու հետ մեկտեղ, առաջարկել է, որ ռազմավարության նպատակին՝ լրատվամիջոցների և տեղեկատվության հասանելիության բարելավմանն, ավելանա հետևյալը՝ էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջանների ինքնակառավարման մարմինների կայքերի և սոցիալական ցանցերի էջերի թարգմանությունը տեղի բնակչության մայրենի լեզվով:⁷⁹ Սա, ոչ գերիշխող էթնիկ խմբերի անդամներին թույլ կտա

⁷⁶ Հասանելի է՝ <https://rb.gy/ftl06r>

⁷⁷ Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և գործողությունների պլանի իրականացման մոնիթորինգի արդյունքները, Ժողովրդական պաշտպանին կից գործող հանդուրժողականության կենտրոն, Ազգային փոքրամասնությունների խորհուրդ, էջ. 15-16, հասանելի է՝ <https://rb.gy/jthm33>

⁷⁸ Քաղաքական կյանքում էթնիկ փոքրամասնությունների մասնակցության հետազոտություն, սոցիալական հետազոտության և վերլուծության ինստիտուտ, Բաց հասարակություն հիմնադրամ, 2019, էջ. 78, հասանելի է՝ <https://rb.gy/yclqqa>

⁷⁹ Հանձնարարականների շնորհանդեսը տեղի է ունեցել 2021 թվականի ապրիլի 14-ին, տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/hieexp>

ծամանակին ծանոթանալ և պարբերաբար տեղեկատվություններ ստանալ համապատասխան ծառայությունների և ընթացակարգերի մասին:

Հենց այդ նպատակով, չնայած այն հանգամանքին, որ Ժողովրդական պաշտպանի Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի գրասենյակներում աշխատում են վրացերենին հավասար աղբյուրներեն և հայոց լեզուներին վարժ տիրապետող և տեղի բնակչության հետ ակտիվորեն հաղորդակցվող անձինք, որոնք կարևոր շփման օղակ են համարվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների և գրասենյակի այլ գերատեսչությունների միջև, անվճար է նաև Վրաստանի Ժողովրդական պաշտպանի կողմից շահագրգիռ անձանց տրամադրվող ծառայությունը և ինստիտուտի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը հասանելի է ինչպես աղբյուրներեն, այնպես էլ հայերեն լեզուներով:⁸⁰

Հանրային այլ ծառայությունների հասանելիության հարցի հետ կապված, հարկ է նշել նաև, որ սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառով ոչ գերիշխող էթնիկ խմբերի ներկայացուցիչները բախվում են նաև ֆինանսական խոչընդոտների, քանի որ վճարովի են մի շարք ծառայություններ: Օրինակ, Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջաններում կրիտիկական է գյուղատնտեսական հողատարածքների սեփականության իրավունքի գրանցման հարցը:⁸¹ Այս առնչությամբ Ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում տեղի բնակչությունը նշում էր, որ ի թիվս այլ խնդիրների, սեփականության իրավունքի գրանցման գործընթացում իրենց համար հավելյալ խնդիր է նաև համապատասխան ծառայություն ստանալու⁸² և այդ նպատակով ներկայացվող փաստաթղթերը պատրաստելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձեռքբերումը: Սոցիալապես անապահով վիճակը զգալի խոչընդոտ է հանդիսանում նաև առողջապահական ծառայություններից օգտվելու տեսանկյունից: Վերջերս կատարված հետազոտության համաձայն, օրինակ, Մառնեուլիում և Աջարիայում կանանց մեծ մասը բժշկի է դիմում միայն այն դեպքում, երբ առողջական վիճակը սաստիկ վատթարանում և ցավն անտանելի է դառնում, այլ դեպքերում նրանք համակերպվում են ցավի հետ:⁸³

Այսպիսով, այն պայմաններում, երբ ազգային փոքրամասնությունների համար հանրային ծառայությունների հասանելիությունը կապված է այնպիսի խոչընդոտների հետ, ինչպիսիք են լեզվական պատնեշը, ծառայություններ մատուցող հաստատություններում իրենց մայրենի լեզվի իմացությամբ աշխատող անձանց անբավարար թվաքանակը և ֆինանսական խնդիրները, Ժողովրդական պաշտպանն անհրաժեշտ է համարում այս խնդիրների լուծման համար իրականացվող աշխատանքներին զուգահեռ, համապատասխան ծրագրերի և ծառայությունների մասին տեղեկատվությունը պրոակտիվ կերպով տարածել տեղի բնակչության մայրենի լեզվով, ոչ

⁸⁰ Տե՛ս <https://ombudsman.ge/aze>; <https://ombudsman.ge/arm>

⁸¹ Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության քննադատական գնահատական, Սոցիալական արդարության կենտրոն, էջ. 10, հասանելի է՝ <https://rb.gy/vbdbwd>

⁸² Գույքի իրավունքի գրանցման ծառայությունների վճարների մասին տեղեկատվությունը հասանելի է՝ <https://rb.gy/umedlq>

⁸³ Մուսուլման կանանց կենցաղը Վրաստանում և նրանց ճնշումների բազմաշերտ նկարագրությունը, սոցիալական արդարության կենտրոն, 2021, էջ. 10-20, հասանելի է՝ <https://rb.gy/1zbnt4>

միայն տեղեկատվական արշավների, այլ նաև համապատասխան ծրագրերի և հանրային ծառայությունների մատուցող հաստատությունների (հատկապես էթնիկ աղբյուրներից) և հայերով խիտ բնակեցված մունիցիպալիտետներում) կայքերը և սոցցանցերի էջերը էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզվով թարգմանելու միջոցով:

Ի լրումն վերը նշվածի, Ժողովրդական պաշտպանը կարևորում է պետական մարմինների և ոչ գերիշխող էթնիկ խմբերի ներկայացուցիչների ակտիվ և արդյունավետ համագործակցությունը՝ հանրային ծառայությունների հասանելիության և ազգային փոքրամասնությունների հետ կապված այլ հարցերին վերաբերող որոշումների կայացման գործընթացին էթնիկ խմբերի ներկայացուցիչներին մասնակցելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Այս առումով դրական քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունն ի հայտ է եկել հաշվետու ժամանակահատվածում, երբ Ժողովրդական պաշտպանի գրասենյակին դիմել են օրենսդիր մարմնի հետ հաղորդակցվելու գործընթացում էթնիկ փոքրամասնության ներկայացուցչի համար խոչընդոտներ ստեղծելու և նրա նկատմամբ ոչ էթնիկական վարք դրսևորելու փաստով, որն ուղեկցվում էր նաև էթնիկ հողի վրա անհանդուրժելի համատեքստով:⁸⁴ Հաշվի առնելով, որ Վրաստանի համար դեռևս մարտահրավեր է մնում էթնիկ փոքրամասնությունների լիակատար ինտեգրումը երկրի քաղաքական և հասարակական կյանքին, որոշումներ կայացնող մարմինների հետ հարաբերությունների խնդիրները բացասաբար են անդրադառնում ոչ գերիշխող էթնիկ խմբերի իրավահավասարության վրա, քանի որ նրանք զրկվում են այնպիսի գաղափարներ մշակելու և իրենց բացառիկ փորձի վրա հիմնված դիրքորոշումներ հնչեցնելու հնարավորությունից, որոնք կարող են ազդեցություն գործել իրենց իրավական վիճակի բարելավման վրա:

5.2. Մեսխեթական համայնքի առջև ծառացած մարտահրավերները

Հանրային ծառայությունների հասանելիությունը և ինտեգրումը խնդրահարույց է մեսխեթական համայնքի համար, ինչն, ի վերջո, անդրադառնում է նրանց իրավական կարգավիճակի վրա:

Համաձայն Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի գրասենյակի կայքում գետեղված տեղեկատվության՝⁸⁵ 1944 թվականի նոյեմբերի 15-17-ը խորհրդային իշխանությունն արտաքսել և Կենտրոնական Ասիայում է վերաբնակեցրել Հարավային Վրաստանում, հիմնականում՝ Մեսխեթի տարածաշրջանում բնակվող շուրջ 20000 ընտանիքի: Հետագա միգրացիոն գործընթացների արդյունքում տեղահանված անձինք ու նրանց ժառանգները վերաբնակեցվել են Ադրբեջանում, Ռուսաստանի Դաշնությունում, Դոդգեստում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Թուրքիայում, Ուկրաինայում և ԱՄՆ-ում: Տեղահանվածների ժառանգները Վրաստան են վերադարձել 1970-ականների վերջին և ներկայումս բնակվում են Գուրիայի, Իմերեթիի, Շիդա Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջաններում: Եվրոպայի խորհրդին անդամակցվելիս (1999 թ.), Վրաստանը ստանձնեց խորհրդային վարչակարգի կողմից տեղահանված մեսխեթցիների

⁸⁴ Դիմումատուն նշել է, որ Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման կոմիտեի հետ նախատեսված հանդիպումը չի կայացել, ինչի մասին նախօրեին իրեն տեղեկացրել են հեռախոսով: Դիմումի համաձայն՝ հանդիպման չեղարկման պատճառ է դարձել դիմողի «*հայի հետ հարաբերությունները*» և ներկաների ցուցակում համապատասխան անձի ընդգրկված լինելու փաստը:

⁸⁵ Հասանելի է՝ <https://rb.gy/ykn4fe>

հայրենադարձության և ինտեգրման, այդ թվում, Վրաստանի քաղաքացիության իրավունքի մասին իրավական բազա ստեղծելու պարտավորություն:

Այս ուղղությամբ շոշափելի քայլեր ձեռնարկվեցին միայն 2007 թվականին ընդունված օրենքով, որի համաձայն սահմանվեցին հայրենադարձի կարգավիճակ շնորհելու ընթացակարգերը և հայրենադարձներին շնորհվեց պարզեցված եղանակով Վրաստանի քաղաքացիություն ստանալու իրավունք:⁸⁶ Օրենքի հիման վրա, հայրենադարձի կարգավիճակ է շնորհվել 1998 անձի, որոնցից 494-ը պետությանը դիմել է քաղաքացիություն ստանալու համար և նրանց շնորհվել է պայմանադրված քաղաքացիություն:⁸⁷

Հավանաբար, պայմանավորված այն հանգամանքով, որ Եվրոպայի խորհրդին անդամակցվելուց հետո, մեսիսեթցիների հայրենադարձության գործընթացն ավարտելու համար Վրաստանին տրված էր 12 տարվա ժամկետ,⁸⁸ վերոնշյալ օրենքի համաձայն, հայրենադարձի կարգավիճակ ձեռք բերելու մասին դիմում ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվեց 2009 թվականի հուլիսի 1-ը⁸⁹ (պետք է հաշվի առնել, որ հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձը կարգավիճակ շնորհելուց երկու տարվա ընթացքում պարտավորվում էր ներկայացնել դիմում Վրաստանի քաղաքացիություն ստանալու վերաբերյալ⁹⁰): Այսօրվա դրությամբ, «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց կողմից Վրաստանի քաղաքացիությունը պարզեցված եղանակով ստանալու մասին» Վրաստանի կառավարության որոշումը համարվում է անվավեր:⁹¹

Սակայն 1944 թվականին Վրաստանից արտաքսված (շուրջ 20000 ընտանիք) և Վրաստան վերադառնալուց հետո Վրաստանի քաղաքացիություն ստացած մեսիսեթցիների (494 անձ) քաղաքական հարաբերակցությունը հաստատում է, որ մեսիսեթական համայնքի հայրենադարձության գործընթացը չի կարող համարվել ավարտված: Նույն գնահատականն է արտացոլվել 2019 թվականին Ազգային փոքրամասնությունների պաշտպանության

⁸⁶ «XX դարի 40-ական թվականներին նախկին ԽՍՀՄ-ի կողմից Վրացական ԽՍՀ-ից ներքին տեղահանվածների հայրենադարձության մասին» Վրաստանի օրենք, Հոդ. 9, կետ 1:

⁸⁷ Վրաստանի պայմանադրված քաղաքացիությունը պարզեցված եղանակով տրամադրելու մասին հրամանագրի հրապարակումից հետո 5 տարվա ընթացքում նրանք պետք է հրաժարվեն այլ երկրի քաղաքացիությունից, տեղեկատվությունը հասանելի է՝ <https://rb.gy/ykn4fe>

⁸⁸ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1999 թվականի եզրակացությունը 209, կետ 10.2 («ե»), հասանելի է՝ <https://rb.gy/ntyumz>

⁸⁹ «XX դարի 40-ական թվականներին նախկին ԽՍՀՄ-ի կողմից Վրացական ԽՍՀ-ից ներքին տեղահանվածների հայրենադարձության մասին» Վրաստանի օրենք, Հոդ. 4, կետ 7:

⁹⁰ «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց կողմից Վրաստանի քաղաքացիությունը պարզեցված եղանակով ստանալու մասին» Վրաստանի կառավարության 2010 թվականի մարտի 30-ի №87 որոշումը, Հոդված 2:

⁹¹ «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց կողմից Վրաստանի քաղաքացիությունը պարզեցված եղանակով ստանալու մասին», Վրաստանի կառավարության 2010 թվականի մարտի 30-ի թիվ 87 որոշումն անվավեր ճանաչելու մասին» Վրաստանի կառավարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի №570 որոշումը:

շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի կարծիքներում, երբ նշվել է, որ իրականում Վրաստան է վերադարձել արտաքսված մեսիսթեթիկների չնչին մասը:⁹²

Տարբեր տարածաշրջաններում համայնքի անդամների հետ հանդիպումների⁹³ և իրավապաշտպան կազմակերպությունների ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ որոշ մեսիսթեթիկներ չեն կարողանում ստանալ քաղաքացիություն, քանի որ արդեն բաց են թողել քաղաքացիություն ստանալու պարզեցված ընթացակարգից օգտվելու ժամկետը, մինչդեռ քաղաքացիություն ստանալու այլ գործող ընթացակարգերը նրանց համար անհաղթահարելի խոչընդոտներ են ստեղծում, այդ թվում՝ լեզվի չիմացության, այլ երկրի քաղաքացիների, Վրաստանում մշտապես և շարունակաբար բնակվելու փորձի բացակայության պայմաններից ելնելով:⁹⁴ Բացի այդ, Ժողովրդական պաշտպանի գրասենյակի հաղորդմամբ, մեսիսթեթական համայնքի ավանդույթների համաձայն, ամուսնությունն ընդունված է մեսիսթեթի տղամարդու և մեսիսթեթի կնոջ միջև: Ուստի, Վրաստանում բնակվող մեսիսթեթի տղամարդիկ (որոնցից ոմանք Վրաստանի քաղաքացիներ են) հաճախ ամուսնանում են այլ երկրի քաղաքացիություն ունեցող մեսիսթեթի կանանց հետ, ինչը վկայում է այն մասին, որ վերաբնակեցված անձանց վերադարձը Վրաստան շարունակական գործընթաց է և կայուն իրավական երաշխիքներ է պահանջում: Հակառակ դեպքում, անխուսափելի են քաղաքացիություն չունենալու պատճառով, այդ թվում առողջապահական ծրագրերից կամ հանրային այլ ծառայություններից օգտվողների շրջանակից մեսիսթեթիկներին հեռացնելու հետ կապված իրավական և սոցիալական խնդիրները:⁹⁵ Հարկ է նշել, որ որոշ դեպքերում խնդրահարույց է նաև նրանց մշտական կացության թույլտվության շնորհումը:

Ստեղծված իրավիճակում մեսիսթեթիկներին քաղաքացիություն շնորհելու միակ միջոցը օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված ստանդարտ պայմանների կիրառումն է, ինչն, ի թիվս այլնի, կապված է Վրաստանի պետական լեզվի իմացության հետ:⁹⁶ Ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ մեսիսթեթական համայնքի ներկայացուցիչները հայտարարեցին, որ վրաց լեզուն փորձում են սովորել ինքնուրույն՝ իրենց երեխաների դասագրքերի միջոցով, ինչն, անշուշտ, բավարար չէ Վրաստանի քաղաքացիություն ձեռք բերելու համար:

Ուստի, նախքան քաղաքացիական հավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության հաստատումը, Ժողովրդական պաշտպանն այդ մասին իր տեսակետներում ներկայացրել է հանձնարարական, առաջարկելով նախատեսել փաստաթղթում հետևյալը՝ խառը ընտանիքների այն անդամներին կամ Վրաստանում բնակվող մշտական

⁹² Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի կարծիքը Վրաստանի մասին, 2019, պար. 43, հասանելի է՝ <https://rb.gy/g0rx5r>

⁹³ Մանրամասն տեղեկությունները տե՛ս 11.3 գլխում:

⁹⁴ Սոցիալական արդարության կենտրոնի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի հայտարարությունը, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/95xvos>

⁹⁵ Տե՛ս, օրինակ, Սոցիալական արդարության կենտրոնի տեսանյութը՝ «Մեսիսթեթիկների կյանքը «օտարության մեջ», հասանելի է՝ <https://rb.gy/2gd94n>

⁹⁶ «Վրաստանի քաղաքացիության մասին» Վրաստանի օրգանական օրենք, Հոդ. 12, կետ 1 («բ»), Հոդ. 14, կետ 1:

բնակություն ունեցող էթնիկ փոքրամասնությունների այն ներկայացուցիչներին, ովքեր չունեն Վրաստանի քաղաքացիություն և չեն տիրապետում վրաց լեզվին, տրամադրել վրացերենի անվճար դասընթացներ, որոնք այդ թվում, ուղղված կլինեն Վրաստանի քաղաքացիություն ստանալու համար պետական լեզվի քննությանը: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ պետությունը մոռացության չմատնի մեսխեթցիների պատմական կապը հայրենիքի (Վրաստանի) հետ և նորից ներդնի պարզեցված եղանակով քաղաքացիություն շնորհելու ընթացակարգերը: Նշենք, որ 2014 թվականին Վրաստանի կառավարությունը հաստատել է հայրենադարձության մասին պետական ռազմավարությունը, սակայն ռազմավարությունը վերաբերում է անձանց միայն այն խմբին, ովքեր արդեն ձեռք են բերել հայրենադարձի կարգավիճակ և/կամ Վրաստանի քաղաքացիություն:⁹⁷ Տրամաբանական է, որ 2019 թվականին Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն հորդորել է Վրաստանին շարունակել իր ջանքերը՝ նպաստելու տեղահանված մեսխեթցիների կամավոր վերադարձին:⁹⁸

5.3. Դմանիսիի առճակատումը

Այն դեպքում, երբ միջմշակութային երկխոսությունը քաղաքացիական իրավահավասարության ոլորտում պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթություններից է,⁹⁹ ինտեգրման գործընթացի վրա բացասաբար են անդրադառնում այնպիսի իրադարձությունները, ինչպիսին էր օրինակ, Դմանիսիում տեղի բնակչության միջև 2021 թվականի մայիսի 16-17-ին տեղի ունեցած բռնի միջադեպը:

Տեղում ձեռքբերված տեղեկությունների համաձայն՝ ընդհարումը սկսվել է կենցաղային հողի վրա և վերաճել երկօրյա չկառավարվող խմբային բռնի առճակատման:¹⁰⁰ Հարկ է նշել, որ տարբեր լրատվամիջոցների և կազմակերպությունների կողմից առճակատումը լուսաբանելու և անդրադառնալու արդյունքում որպես հակամարտող կողմեր էին դիտվում էթնիկ վրացի և էթնիկ ադրբեջանցի քաղաքացիները:¹⁰¹ Հետևաբար, Ժողովրդական պաշտպանը զարգացումներին հանրայնորեն արձագանքելիս, մասնավորապես, նշել է Դմանիսիի բազմազգ բնակչության միջև առճակատման վտանգը և պետության կողմից անհապաղ ու արդյունավետ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ ապագայում նմանատիպ դեպքերը կանխելու, նման ընդհարումների

⁹⁷ «XX դարի 40-ական թվականներին նախկին ԽՍՀՄ-ի կողմից Վրացական ԽՍՀ-ից ներքին տեղահանվածների հայրենադարձության մասին, պետական ռազմավարության մասին» Վրաստանի կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի №1671 կարգադրությունը, պրեամբուլա:

⁹⁸ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի կարծիքը Վրաստանի մասին, 2019, պար. 48, հասանելի է՝ <https://rb.gy/g0rx5r>

⁹⁹ «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021 - 2030 թվականների պետական ռազմավարության և Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության 2021-2022 թվականների գործողությունների պլանի հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2021 թվականի հուլիսի 13-ի №356 որոշումը, հավելված 1, էջ՝ 56:

¹⁰⁰ Տե՛ս. Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի մայիսի 18-ի հրապարակային հայտարարությունը, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/cctjo3>

¹⁰¹ Տե՛ս, օրինակ, <https://rb.gy/dfe3zf>; <https://rb.gy/hykauu>; <https://rb.gy/9edqte>, Դմանիսի առճակատում – կենցաղային հողի վրա սկսված առճակատման էթնիկ շտրիխներ, Սոցիալական արդարության կենտրոն, 2021 թ., հասանելի է՝ <https://rb.gy/4pv4jb>

պատճառները ճիշտ գնահատելու և գիտակցելու, քաղաքացիական ինտեգրման տեսանկյունից ավելի ակտիվ քաղաքականություն վարելու նպատակով:¹⁰²

Ժողովրդական պաշտպանի գրասենյակը իրավապահ մարմիններից տեղեկություններ է պահանջել, այդ թվում՝ հակադրված կողմերի միջև կոնֆլիկտային իրավիճակը լուծելու համար ձեռնարկված և նախատեսվող կանխարգելիչ միջոցառումների մասին:¹⁰³ Թեև, պատասխան նամակներում նշված է, որ գործով իրականացված քննչական գործողությունների արդյունքում Դմանիսիի առճակատումը չի սկսվել ազգամիջյան հողի վրա, հետաքննության ընթացքում չի եղել նաև էթնիկ հիմքով ատելության դրդապատճառ:¹⁰⁴ Տուժող է ճանաչվել վեց անձ, 7 անձի մեղադրանք է առաջադրվել Վրաստանի քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-րդ մասի «բ» և «գ» ենթակետերով (ծեծ կամ այլ բռնի գործողություններ, խմբային, երկու կամ ավելի անձանց նկատմամբ):¹⁰⁵

Ժողովրդական պաշտպանը ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ատելության հիմքով հանցագործությունները կարող են ունենալ մեկից ավելի դրդապատճառներ:¹⁰⁶ Շատ հանցագործություններ տեղի են ունենում այլ պատճառներով սկսված միջադեպերի ժամանակ, օրինակ՝ ավտովթարի հետևանքով ծագած կոնֆլիկտը, և այդ դրդապատճառները միջադեպի ժամանակ վերաճում են այս կամ այն բացասական տրամադրվածության հանցագործության: Իսկ արդեն վեճի ընթացքում հաճախ օգտագործվում են ռասիստական, էթնիկական, կրոնական վիրավորական արտահայտություններ:¹⁰⁷ Խտրականության արգելքի սկզբունքը դրական պարտավորություն է դնում պետության վրա՝ բոլոր հնարավոր միջոցներով հետաքննել խտրական դրդապատճառի և բռնության փաստի միջև ենթադրյալ կապը:¹⁰⁸

Հաշվի առնելով Դմանիսիի առճակատման կողմերի էթնիկական կազմը և այն գործոնը, որ տարբեր աղբյուրներ վկայում են առճակատման ընթացքում գործածված էթնիկական հիմքով վիրավորական արտահայտությունների մասին,¹⁰⁹ Ժողովրդական պաշտպանը գտնում է, որ բռնություն առաջացնող միջադեպի կենցաղային հողի վրա զարգանալու փաստը չի բացառում ենթադրյալ էթնիկական դրդապատճառի առկայությունը, որը կարող էր հանգեցնել

¹⁰² Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի մայիսի 18-ի հրապարակային հայտարարությունը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/cctjo3>

¹⁰³ Ժողովրդական պաշտպանի գրասենյակի 2021 թվականի մայիսի 17-ի №13-1/4684 պաշտոնական նամակը: Ժողովրդական պաշտպանի գրասենյակի 2021 թվականի նոյեմբերի 4-ի №13-1/ 10547 պաշտոնական նամակը:

¹⁰⁴ Վրաստանի Ներքին գործերի նախարարության 2021 թվականի մայիսի 28-ի №MIA 1 21 01340546 պաշտոնական նամակը, Վրաստանի Ներքին գործերի նախարարության 2021 թվականի նոյեմբերի 12-ի №MIA 8 21 02982973 պաշտոնական նամակը:

¹⁰⁵ Վրաստանի Գլխավոր դատախազության 2021 թվականի նոյեմբերի 29-ի №13/72133 պաշտոնական նամակը:

¹⁰⁶ Ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն, գործնական ուղեցույց, ԵԱՀԿ, էջ. 63, հասանելի է՝ <https://rb.gy/qx9hwh>

¹⁰⁷ Մանրամասն տես՝ Ժողովրդական պաշտպանի դատարանի բարեկամի կարծիքը Վիտալի Սաֆարովի սպանության գործով, հասանելի է՝ <https://rb.gy/wyfkst>

¹⁰⁸ Մանրամասն տես՝ Ժողովրդական պաշտպանի «Իրավապահների դրական պարտավորությունները անապահով խմբերի իրավահավասարության պաշտպանության առումով» զեկույցը, հասանելի է՝ <https://rb.gy/devxsf>

¹⁰⁹ Տես՝ օրինակ՝ <https://rb.gy/hykauu>, Դմանիսիի ընդհարումը՝ կենցաղային հողի վրա սկսված տարաձայնության էթնիկական շտրիխներ, Սոցիալական արդարության կենտրոն, 2021, էջ. 8, հասանելի է՝ <https://rb.gy/4pv4jb>

առճակատման էսկալացիայի և դրսևորված մասշտաբով զարգացման: Հետևաբար, դեռևս օրակարգային է տեղի ունեցած միջադեպի իրավական գնահատման, առճակատման վրա ազդող բոլոր գործոնների խորը ըմբռնման, և ապագայում նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով քաղաքացիական ինտեգրման քաղաքականության ամրապնդման անհրաժեշտությունը:

6. ԼԳԲՏ + համայնքի իրավահավասարությունը

ԼԳԲՏ+ համայնքի իրավունքների պաշտպանության առումով, այս տարի, անշուշտ դրամատիկ էին մարտի 5-ի Արժանապատվության երթին ընդդիմացող բռնի խմբերի գործողություններն, ինչին ի պատասխան իրավապահների անգործությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Բռնարար խմբերի հարձակումների հետևանքով տուժեցին տարբեր լրատվամիջոցների աշխատակիցներ, իրավապահներ և այլ քաղաքացիներ: Չնայած մի քանի գործով հետաքննությունների մեկնարկին, ուլտրաաջ ծայրահեղական խմբերի առաջնորդների կողմից բռնություն հրահրելու փաստերին չի հետևել իրավական արձագանք:

Այս տարի ևս խնդրահարույց էր համայնքի անդամների սոցիալական, տնտեսական և առողջապահական իրավունքների լիարժեք իրացումը: Մարտահրավերները կապված էին աշխատանքային իրավունքների, բնակարանային կամ առողջապահական ծառայություններից օգտվելու հետ կապված խոչընդոտների, կրթության ոլորտի, տնտեսական ռեսուրսների հասանելիության և այլնի հետ:

6.1. ԼԳԲՏ + համայնքի իրավահավասարությունը խոսքի և հավաքների ազատության համատեքստում

Մեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությունը Վրաստանում դեռևս շարունակում է մնալ կարևոր մարտահրավեր: Պետության իրավական և քաղաքական անգործությունը, հակաժողովրդավարական քաղաքական շարժումների ակտիվացման պատճառները, հոմոֆոբիայի քաղաքական և սոցիալական հետևանքների վերլուծության բացակայությունը հանգեցնում են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության, խտրականության և նրանց համար սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներից ու ազատություններից օգտվելու խաթարման:

Դեռևս կրիտիկական է ԼԳԲՏ+ համայնքի հավաքների և արտահայտման ազատության իրացման հետ կապված իրավիճակը: ԼԳԲՏ+ համայնքի անդամները/ակտիվիստները տարիներ շարունակ պայքարում են անվտանգ հավաքների և հանրային տարածքներից օգտվելու համար, և այս առումով ընթացիկ հաշվետու ժամանակահատվածը նույնպես ակնհայտորեն վկայում է, որ իրավիճակը ոչ թե բարելավվել, այլև կտրուկ վատթարացել է: Ժողովրդական պաշտպանը դեռևս 2019 թվականին կոչ է արել ՆԳ նախարարին և Վրաստանի վարչապետին պետական քաղաքականության մակարդակով ըմբռնել վերջին տարիներին ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների խոսքի և հավաքների ազատության սահմանափակման առանձին փաստերը և այս ուղղությամբ ծրագրել միասնական կանխարգելիչ և հակազդիչ միջոցառումներ: Ժողովրդական պաշտպանը նշում էր, որ ԼԳԲՏ+ անձանց խոսքի ազատության պաշտպանությանն ուղղված ՆԳՆ ձեռնարկած միջոցառումները մշուշոտ էին և չէին հաստատում իրավունքների պաշտպանության համակարգային տեսլականի առկայությունն ու փաստերի հնարավոր

հետևանքների վերլուծությունը:¹¹⁰ Բացի այդ, 2019 թվականի իրավահավասարության վիճակի մասին հատուկ զեկույցում Ժողովրդական պաշտպանը նշել է, որ ուլտրաաջ խմբավորումների ուժեղացման ցուցանիշը տագնապալի է, և կարևոր է, որ այդ խմբավորումների առաջնորդների հայտարարություններին հետևի պատշաճ և արագ իրավական արձագանք:¹¹¹

2021 թվականի հուլիսի 1-ին «Հպարտության շաբաթը» Թբիլիսիում բացվեց մշակութային միջոցառումներով, ներառյալ վավերագրական ֆիլմերի ցուցադրությունը և քվիր երաժշտության փառատոնը: «Հպարտության շաբաթվա» մշակութային միջոցառումներն անցկացվեցին քիչ թե շատ ոչ բռնի միջավայրում և ԼԳԲՏ+ համայնքին ընձեռնվեց հավաքների ազատությունից օգտվելու հնարավորություն:

Շաբաթը պետք է ավարտվեր հուլիսի 5-ին «Արժանապատվության երթով», սակայն իշխանության կողմից անվտանգության երաշխիքների բացակայության և հուլիսի 5-ին տեղի ունեցած բռնի գործողություններին ոչ համարժեք արձագանքից ելնելով «Արժանապատվության երթը» չեղարկվեց:

2021 թվականի հուլիսի 5-ին «Արժանապատվության երթը» խափանելու նպատակով բռնի խմբավորումներն առավոտից հավաքվել էին Ռուսթավելի պողոտայում, իրականացնելով բռնի գործողություններ, որոնք օրվա ընթացքում զգալիորեն խրախուսվել են քննչական մարմինների անգործությամբ: 2021 թվականի հուլիսի 5-ին «Թբիլիսի Փրայդ»-ի հակառակորդների կողմից հարձակումների հետևանքով վիրավորվել են տարբեր լրատվամիջոցների աշխատակիցներ, իրավապաշտպաններ և այլ քաղաքացիներ: Բռնի խմբավորումները խոչընդոտում էին լրագրողների աշխատանքն՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:¹¹² Հոգևորականներից մեկը ցույցին հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ՝ «Ոչ թե, ոչ բռնությանը, այլև դուք պարտավոր եք բռնություն գործադրել»:¹¹³ Բացի այդ, բռնի խմբավորումների անդամները բարձրացել են «Թբիլիսի Փրայդ»-ի գրասենյակի պատշգամբ ու հանել դրոշները, ինչպես նաև ներխուժել գրասենյակ և վնասել «Թբիլիսի Փրայդ»-ին պատկանող գույքը,¹¹⁴ Անկարգություններ են տեղի ունեցել նաև «Ամոթ է» շարժման գրասենյակի տարածքում, ցուցարարները տարբեր առարկաներ են նետել այն շենքի բնակիչների պատշգամբներ, որտեղ գտնվում է «Ամոթ է» շարժման գրասենյակը, ինչպես նաև ջարդել «Ամոթ է» գրասենյակի

¹¹⁰ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2019 թվականի նոյեմբերի 4-ի ընդհանուր առաջարկը Վրաստանի ներքին գործերի նախարարին և Վրաստանի վարչապետին հասանելի է՝ <https://cutt.ly/UTG7Dma>

Ընդհանուր առաջարկով Ժողովրդական պաշտպանը անդրադարձել է ԼԳԲՏ+ անձանց արտահայտվելու ազատության իրացման հետ կապված երկրում տիրող իրավիճակին՝ 2018 թվականի սեպտեմբերից 2019 թվականի հուլիսը տեղի ունեցած փաստերի լույսի ներքո: Մասնավորապես, ուշադրությունը կենտրոնացնելով 2018 թվականի սեպտեմբերի 9-ին ֆուտբոլի դաշտում ԼԳԲՏ+ սիմվոլիկայի ներմուծման արգելքի, ինչպես նաև 2019 թվականի հունիսի 18-23-ը նախատեսված «Արժանապատվության երթի» շուրջ զարգացած իրադարձությունների և ԼԳԲՏ+ մարդկանց դեմ տրամադրված ուլտրաաջ խմբերի հզորացման միտման վրա:

¹¹¹ Տե՛ս նաև՝ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի հատուկ զեկույց խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին, 2019թ., էջ. 23 <https://cutt.ly/DTP57nT>

¹¹² Տե՛ս <https://cutt.ly/7Yj6oXO> <https://cutt.ly/YYj6lAy>

¹¹³ Տե՛ս <https://cutt.ly/gYj6UQg>

¹¹⁴ Տե՛ս <https://cutt.ly/FYj65bE> <https://cutt.ly/kYkqzUU>

պատուհանների ապակիները:¹¹⁵ Հարձակումներ են տեղի ունեցել նաև «Մարդու իրավունքների տան» վրա, որի տարածքում պայթեցրել են պիրոտեխնիկա:¹¹⁶ Մի քանի քաղաքացի ֆիզիկական բռնության է ենթարկվել հագուստի պատճառով:¹¹⁷

Այն դեպքում, երբ բռնի խմբավորումները բացահայտ ագրեսիա էին դրսևորում լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ, լարվածությունն էլ ավելի սրեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիի հայտարարությունը,¹¹⁸ ով «Արժանապատվության երթը» որակեց որպես քաղաքացիական առճակատման պատճառ և նշեց, որ Փրայդին աջակցում են «ռևանշիստական և արմատական քաղաքական ուժերը»: Բացի այդ, վարչապետն ուղղակիորեն հայտարարեց, որ աննպատակահարմար է համարում «Արժանապատվության երթ» անցկացնելը, և հանրահավաքը չպետք է անցկացվեր Ռուսթավելի պողոտայում: Ցավոք, պատասխանատվությունը վերագրելով ԼԳԲՏ+ համայնքին՝ վարչապետը խրախուսեց ատելություն տարածող խմբերի գործողությունները: Այս հայտարարությունը հաստատում է, որ իշխանությունները ոչ միայն չեն ապահովում ԼԳԲՏ+ համայնքի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, այլ որոշ դեպքերում նույնիսկ օրինականացնում համայնքի նկատմամբ տրամադրված բռնի խմբավորումների գործողությունները:

Միևնույն ժամանակ, հուլիսի 5-ի իրադարձություններին նախորդել են բռնի խմբավորությունների առաջնորդների և այլ անդամների կողմից հրապարակային կոչերը՝ ուղղված բռնության և այդ նպատակով հասարակության որոշակի խմբերի մոբիլիզացմանը: Բռնության բազմաթիվ կոչեր են հնչել նաև հուլիսի 5-ին: Այս հարցի կապակցությամբ Ժողովրդական պաշտպանը դիմել է Վրաստանի դատախազություն՝ *Զուրաբ Մախարաձեի և Սպիրիդոն Յքիփուրիշվիլիի* նկատմամբ քրեական գործ հարուցելու պահանջով:¹¹⁹ Զուրաբ Մախարաձեին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջը հիմնված էր հրապարակայնորեն տարածված

¹¹⁵ Տե՛ս <https://cutt.ly/vYkqLCT>

¹¹⁶ Տե՛ս <https://cutt.ly/5YkwvZN>

¹¹⁷ Տե՛ս <https://cutt.ly/xYkwMxL> <https://cutt.ly/kYkw6dk> <https://cutt.ly/4YkeeWj>

¹¹⁸ **Տե՛ս նաև՝** Հուլիսի 5-ի, ժամը 11:00-ի, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիի հայտարարությունը՝ «Այսօրվա հանրահավաքի կազմակերպիչների ետևում դեռևս կանգնած են ռևանշիստական, արմատական խմբավորումները, մասնավորապես՝ Սահակաշվիլիի գլխավորած արմատական ընդդիմությունը: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում են, որ նրանք են ներգրավված, նրանք են կազմակերպում երթը և այս հանրահավաքները: Բհարկե, նրանց նպատակը երկրում քաղաքացիական անկարգություններ ու քաոս առաջացնելն է, ինչն, անշուշտ, չի իրականանալու, և մենք դա թույլ չենք տալու: Մեր երկրում ամեն ինչ կլինի այնպես, ինչպես ցանկանում է մեր ժողովուրդը, մեր բնակչությունը», «Այսօրվա հանրահավաքը քաղաքացիական բախումների սպառնալիք է պարունակում: Ինչպես գիտեք, բնակչության բացարձակ մեծամասնության համար այս հանրահավաքի անցկացումն անընդունելի է: Ուստի կարծում եմ, որ նշված հանրահավաքը չպետք է անցկացվի Ռուսթավելի պողոտայում», <https://cutt.ly/zTGKbeM>, <https://cutt.ly/3TGLdFw>:

¹¹⁹ Ժողովրդական պաշտպանն իրավասու է պահանջել հետաքննություն և/կամ քրեական հետապնդում սկսել, երբ առկա են հանցագործության նշաններ՝ «Վրաստանի Ժողովրդական պաշտպանի մասին» Օրգանական օրենքի 21-րդ հոդվածի «գ» ենթակետ: Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի առաջարկը Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեին հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://cutt.ly/QTGMbdg>: Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի առաջարկը Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեին հասանելի է՝ <https://cutt.ly/zTGMAQM>

տեսանյութերի վրա¹²⁰, որոնք հաստատում են, որ հուլիսի 5-ի բռնի գործողություններից առաջ Զուրաբ Մախարաձեն և այլ անձինք «Ալտ Ինֆո»-ի եթերով շարունակաբար բռնություն էին հորդորում «Թբիլիսի Փրայդ» կողմից նախատեսված միջոցառման մասնակիցների նկատմամբ: Բռնության կոչեր են հնչել նաև լրագրողների նկատմամբ: Բացի այդ, նույն անձինք հեռուստատեսությամբ տեղեկատվություն են տարածել խմբերի ստեղծման մասին, որոնց անմիջական նպատակը պետք է լիներ հուլիսի 5-ի բռնությունը: Ժողովրդական պաշտպանը հիմնավորել է, որ հուլիսի 5-ին Զուրաբ Մախարաձեն անմիջականորեն ղեկավարել է խմբային բռնությունը, այդ թվում՝ հեռացրել օրենսդիր մարմնի առջև տեղադրված ընդդիմադիրների վրանները և տարբեր խմբեր հասկացրել «Ամոթ է» և «Թբիլիսի Փրայդ»-ի գրասենյակներն ավերելու նպատակով:

Ժողովրդական պաշտպանը Գլխավոր դատախազությանը դիմել է բռնի գործողությունների հրահրման հրապարակային կոչեր անելու ևս մեկ փաստով և պահանջել քրեական գործ հարուցել ավագ քահանա Սպիրիդոն Ցքիփուրիշվիլիի նկատմամբ: Մասնավորապես, հուլիսի 5-ին ավագ քահանան բարձրախոսների միջոցով քաղաքացիներին կոչ է արել բռնություն գործադրել՝ այդպիսով հեռանալով խոսքի ազատության իրավունքի շրջանակներից և իրականացնելով Վրաստանի Քրեական Օրենսգրքի 239¹ հոդվածով արգելված գործողություն՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչ, որը բռնի գործողություն կատարելու հստակ, ուղղակի և էական սպառնալիք է ստեղծում:

Ի պատասխան Ժողովրդական պաշտպանի առաջարկների՝ Վրաստանի գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ Սպիրիդոն Ցքիփուրիշվիլիի և Զուրաբ Մախարաձեի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել:¹²¹

Հատուկ կերպով պետք է նշել, որ մտահոգիչ է լրագրողների ու օպերատորների նկատմամբ վերջին ժամանակներում երկրում առկա սպառնալից ու թշնամական միջավայրը: Լրատվամիջոցների հրապարակած կադրերից հստակ երևում էր, թե ինչպես են բռնի խմբավորումները հարձակվում լրատվամիջոցների ներկայացուցիչների վրա: Սարսափելի է «TV Պիրվելի» օպերատոր Լեքսո Լաշքարավայի մահվան փաստը, ով հուլիսի 5-ին տեղի ունեցած դաժան հարձակումների զոհերից էր, իսկ հուլիսի 11-ին ընտանիքի անդամները նրան մահացած են գտել սեփական տանը: Ժողովրդական պաշտպանը կոչ է արել ՆԳՆ-ին արդյունավետորեն հետաքննել Լեքսո Լաշքարավայի մահվան փաստը և պատճառահետևանքային կապ հաստատել Լեքսո Լաշքարավայի մարմնական վնասվածքների, հուզահոգեբանական սթրեսի և ծագած արդյունքի միջև:¹²²

Չնայած նրան, որ Ժողովրդական պաշտպանի գնահատմամբ, հրապարակայնորեն տարածված ապացույցները համապատասխանում են առնվազն երկու անձի մեղադրանք առաջադրելու չափորոշիչներին, 2021 թվականի հուլիսի 5-ի բռնի իրադարձությունների կազմակերպիչների նկատմամբ Վրաստանի դատախազությունը դեռևս չի հարուցել քրեական գործ: 2021 թվականի

¹²⁰ Տե՛ս <https://cutt.ly/HYkykaz>

¹²¹ Վրաստանի Գլխավոր դատախազության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի №13/74440 պաշտոնական նամակը:

¹²² Տե՛ս <https://cutt.ly/jYkoUF6>

դեկտեմբերի 9-ին տրված պատասխանում Վրաստանի դատախազությունը, առանց կոնկրետ անձանց անուններ տալու, նշել է, որ մեղադրանք է առաջադրվել միայն 3 անձի՝ «Թբիլիսի Փրայդ»-ի գրասենյակ ներխուժելու և վնասելու, այդ թվում՝ խմբային բռնություն կազմակերպելու փաստով:

Վրաստանի Ներքին գործերի նախարարության կողմից տրված պատասխանների¹²³ համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 5-ին հետաքննություն է սկսվել Ռուսթավելի պողոտայում լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության և բռնություն գործադրելու սպառնալիքով մասնագիտական գործունեությունը ապօրինաբար խաթարելու,¹²⁴ «Ամոթ է» շարժման գրասենյակ ներխուժելու և ավերելու,¹²⁵ «Թբիլիսի Փրայդ»-ի գրասենյակ ներխուժելու և ավերելու,¹²⁶ «Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ոչ կառավարական կազմակերպության նկատմամբ դրսևորած բռնության և գույքը վնասելու,¹²⁷ պարեկային ոստիկանության դեպարտամենտին և քաղաքացիներին պատկանող ավտոմեքենաները վնասելու,¹²⁸ Ռուսթավելի պողոտայում Վրաստանի խորհրդարանի շենքի դիմաց բարձրացված Եվրամիության դրոշը վնասելու,¹²⁹ Ռուսթավելի պողոտայում հավաքված LGBS+ անդամների նկատմամբ իրականացված բռնության¹³⁰ և 2021 թվականի հուլիսի 6-ին իրավապահների վրա հարձակվելու և դիմադրություն ցուցաբերելու փաստերով:¹³¹

Ի պատասխան Ժողովրդական պաշտպանի դիմումի՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ին Վրաստանի գլխավոր դատախազության կողմից տրամադրված ծանուցման մեջ նշվում է, որ 2021 թվականի հուլիսի 5-ից 21-ն ընկած ժամանակահատվածում 31 անձի մեղադրանք է առաջադրվել գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման հիմքով անհանդուրժողականություն դրսևոտելու փաստով: Այդ անձանցից 28-ին մեղադրանք է առաջադրվել լրագրողի մասնագիտական գործունեությունն ապօրինաբար խոչընդոտելու և բռնություն գործադրելու

¹²³ Վրաստանի ՆԳՆ 2021 թվականի սեպտեմբերի 6-ի MIA 3 21 02348936 պաշտոնական նամակը, Վրաստանի ՆԳՆ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի MIA 2 21 03461514 պաշտոնական նամակը:

¹²⁴ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, 154-րդ հոդվածի երկրորդ մասով և 239¹ –րդ հոդվածի երկրորդ մասով:

¹²⁵ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի I մասով:

¹²⁶ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի I մասով:

¹²⁷ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի I մասով և 126-րդ հոդվածի առաջին մասով:

¹²⁸ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի I մասով:

¹²⁹ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի I մասով:

¹³⁰ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 126-րդ հոդվածի I մասով:

¹³¹ Հանցագործություն՝ նախատեսված Քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի I մասով և 353-րդ Պրիմա հոդվածի առաջին մասով:

տարբեր փաստերով:¹³² Իսկ «Թբիլիսի Փրայդ»-ի գրասենյակ ներխուժելու և ավերելու փաստով մեղադրանք է առաջադրվել 3 անձի:¹³³

Դատախազության պատասխանի համաձայն՝ տուժող է ճանաչվել 53 անձ, այդ թվում, 42 լրագրող և օպերատոր,¹³⁴ 7 քաղաքացի,¹³⁵ 3 իրավապաշտպան¹³⁶ և 1 հասարակական կազմակերպություն:¹³⁷ Մինևույն ժամանակ, Ժողովրդական պաշտպանը Ներքին գործերի նախարարությանը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել կապված հետևյալ հարցերի հետ՝ *հուլիսի 5-ին բռնի խմբավորումների քանի՞ ներկայացուցիչ էր հավաքվել Ռուսթավելի պողոտայում և օրվա ո՞ր ժամերին, ո՞ր պաշտոնատար անձն էր պատասխանատու հուլիսի 5-ին Ռուսթավելի պողոտայում կանխարգելիչ և հակազդիչ միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ որոշում կայացնելու և համապատասխան կարգադրություններ տալու համար, ի՞նչ կանխարգելիչ և հակազդիչ միջոցառումներ է իրականացրել Ներքին գործերի նախարարությունը՝ 2021 թվականի հուլիսի 5-ին Ռուսթավելի պողոտայում հավաքված քաղաքացիական անձանց և լրատվամիջոցների ներկայացուցիչներին բռնի խմբավորումներից պաշտպանելու համար, այդ թվում՝ ո՞ր կառուցվածքային միավորի աշխատակիցներն էին մոբիլիզացված անմիջապես Ռուսթավելի պողոտայում և դրա հարակից տարածքներում, մոբիլիզացված էին արդյոք Ռուսթավելի պողոտայում կամ դրա հարակից տարածքներում պաշտպանության հատուկ միջոցներ, հանգամանքների մանրամասն բացատրություն՝ որոնց նախատեսմամբ Ռուսթավելի պողոտայում և/կամ հարակից տարածքներում իրավիճակի սրման հետ մեկտեղ չէր իրականացվում իրավապահների պատշաճ մոբիլիզացում և նրանց թվաքանակի համապատասխան ավելացում, ինչու՞նչ նպատակահարմար չի համարվել իրավապահների*

¹³² Ցուցում՝ **15 անձի մեղադրանք է առաջադրվել** Վրաստանի քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով: **8 անձի մեղադրանք է առաջադրվել** Վրաստանի քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով: **3 անձի մեղադրանք է առաջադրվել**՝ Վրաստանի քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և 5-րդ մասի «ե» ենթակետով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով: **1 անձի մեղադրանք է առաջադրվել** Վրաստանի քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով: **1 անձի մեղադրանք է առաջադրվել** Վրաստանի քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով և 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով:

¹³³ Հանցագործություն նախատեսված է Վրաստանի քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, 160-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և 3-րդ մասի «Ա» ենթակետերով և 225-րդ հոդվածի առաջին և 2-րդ մասերով:

¹³⁴ Մակա Ջաբուա, Ռատի Ծվերավա, Լևան Բրեզվաձե, Միրանդա Բաղաթուրիա, Ջուրաբ Ցերցվաձե, Մարիամ Քոմսիաշվիլի, Սալոմե Բոկուչավա, Շոթա Կերվալիշվիլի, Իրակլի Բախտաձե, Դիմիտրի Դիրիմիշվիլի, Գիորգի Պերտիա, Գուգա Դվալիշվիլի, Ջուրաբ Մանագաձե, Շոթա Միկինձալաշվիլի, Ալեքսանդր Լաշքարավա, Թոմսիկե Մանդարիա, Դեա Մամիսեիշվիլի, Թամար Թաթարաշվիլի, Անի Փացիա, Իլիա Թվալիաշվիլի, Գիորգի Գաբունիա, Մարիամ Գոցիրիձե, Անրի Ջոխարիձե, Ռոմա Տարուղիշվիլի, Թեոնա Սուսարեիշվիլի, Դավիթ Քորիձե, Գիորգի Նիկոլիշվիլի, Թոմսիկե Բարնաբիշվիլի, Դավիթ Ախալաձե, Վախթանգ Քարելի, Թամունա Չքարեուլի, Լուկա Խաչիձե, Լևան Գաբունիա, Վաթա Չխաիձե, Գուրամ Մախտուրաձե, Նինո Վարձելաշվիլի, Մերաբ Ցաավա, Լևան Կալանդիա, Նիկոլոզ Քալիաշվիլի, Գիորգի Մախտուրաձե, Բեկա Մշվիլոձե և Բեկա Աթաբեգաշվիլի:

¹³⁵ Ն.Զ., Գ.Բ., Ն.Ն., Ա.Բ., անչափահասներ՝ Լ.Բ, Ն.ՈԲ. և Գ.Բ.:

¹³⁶ Խատիա Ախալաիա-Կոճուխիձե, Նաթիա Կոբերիձե, Գիորգի Թաբաղարի:

¹³⁷ ՀԻԲԱ «Թբիլիսի Փրայդ»

նախապես մոբիլիզացումը «Ամոթ է» և «Թբիլիսի Փրայդ» շարժման գրասենյակների մոտ: Ժողովրդական պաշտպանի գնահատմամբ Ներքին գործերի նախարարությունը բռնությունը կանխելու նպատակով չի ձեռնարկել արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ, իսկ քրեական փաստերին դեռևս չի տրվել լիարժեք և համարժեք արձագանք: Ի պատասխան՝ Ներքին գործերի նախարարությունը պարզաբանել է,¹³⁸ որ Վրաստանի ՆԳ նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 30-ի №1002 հրամանով հաստատված «Հավաքների և ցույցերի ժամանակ Վրաստանի Ներքին գործերի նախարարության ծառայողների վարքագծի ուղեցույցի» 5-րդ հոդվածի առաջին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, որպես կանոն, հավաքների/ցույցերի ժամանակ մշակվում է անվտանգության գործողությունների պլան, իսկ ինքնաբուխ հավաքների/ցույցերի դեպքում անվտանգության գործողությունների պլանը մշակվում է ինքնաբուխ հավաքը /ցույցը սկսվելուց հետո ողջամիտ ժամկետում: Գործողությունների պլանը հաստատում է Վրաստանի ներքին գործերի նախարարը կամ նրա կողմից լիազորված անձը՝ պահպանելով պետական գաղտնիության պահանջները: Գործողությունների պլանը, ի թիվս այլնի, ներառում է տվյալներ՝ հատուկ միջոցառումների իրականացման տեղում գտնվող ղեկավարների, հատուկ միջոցառումների գործընթացին մասնակցող նախարարության համապատասխան ստորաբաժանումների, դրանց գործառույթների և գործողությունների հաջորդականության, հատուկ միջոցառման անցկացման համար նախարարության համապատասխան պատասխանատու անձի/անձանց, անձնակազմի քանակի մասին և այլն: Հարկ է նշել, որ տրամադրվող տեղեկատվությունը կրում է ընդհանուր բնույթ և կոնկրետ պատասխաններ չի տալիս պահանջվող տեղեկատվությանը:

Ժողովրդական պաշտպանը ևս մեկ անգամ կոչ է անում Վրաստանի Ներքին գործերի նախարարությանը, Վրաստանի դատախազությանը և պաշտոնյաներին, հիմնվելով նախորդ տարիների ծանր փորձի վրա, միջոցներ ձեռնարկել, որոնք իրականում կպաշտպանեն «Արժանապատվության երթի» մասնակիցների անվտանգությունը, արտահայտման և հավաքների ազատության իրավունքը, ինչպես նաև անպատժելիության զգացումից և ապագայում նմանատիպ միջադեպերից խուսափելու նպատակով անցկացնել հուլիսի 5-ին կատարված բոլոր հանցագործությունների անհապաղ և արդյունավետ հետաքննություն, ծրագրել միջոցներ հավասարության մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով և ի աջակցություն ԼԳԲՏ+ համայնքի հնչեցնել հրապարակային հայտարարություններ:

6.2. ԼԳԲՏ + համայնքի կողմից տնտեսական և սոցիալական իրավունքների իրացում

Ժողովրդական պաշտպանի ներկայացուցիչներն ընթացիկ տարում Վրաստանի տարբեր քաղաքներում հանդիպումներ են անցկացրել ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների, ակտիվիստների և ԼԳԲՏ+ իրավապաշտպանների հետ՝ համայնքի առջև ծառացած մարտահրավերների քննարկման և տեղեկությունների/փորձի փոխանակման նպատակով: Հանդիպումները բացահայտեցին, որ ԼԳԲՏ+ համայնքի առջև ծառացած մարտահրավերները բազմակողմանի են և բարդացնում են համայնքի անդամների՝ իրենց սոցիալական, տնտեսական և առողջապահական իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունը:

¹³⁸ Վրաստանի ՆԳՆ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի նամակը MIA 2 21 03461514:

Մարտահրավերները կապված են աշխատանքային իրավունքների, բնակարանային կամ առողջապահական ծառայություններից օգտվելու հետ կապված խոչընդոտների, կրթության ոլորտի, տնտեսական ռեսուրսների հասանելիության և այլնի հետ: Այս մարտահրավերների համակցումը սուր խնդիրներ և որոշ դեպքերում էկզիստենցիալ սպառնալիքներ է ստեղծում համայնքի անդամների համար:

Խնդրի սրության մասին է վկայում նաև ԼԳԲՏ+ համայնքի անդամների կողմից սոցիալական, տնտեսական և առողջապահական իրավունքների պաշտպանության կապակցությամբ դիմելիության ցածր ցուցանիշն, ինչն էլ իր հերթին կապված է ակնկալվող բացասական հետևանքների հետ: Օրինակ՝ աշխատանքային իրավունքների խախտման մասին բացահայտ խոսելը ԼԳԲՏ+ համայնքի անդամին կարող է ամբողջությամբ զրկել նույն/նման ոլորտում աշխատելու հնարավորությունից: Առանց այն էլ ծանր վիճակն ավելի է բարդացրել կորոնավիրուսի համավարակը, և աշխատանքը կորցնելու ու տնտեսական դժվարությունների հետևանքով, որոշ դեպքերում համայնքի անդամները ստիպված են եղել վերադառնալ բռնի միջավայր և/կամ հայտնվել անօթևան մնալու վտանգի առաջ:

Մտահոգիչ է նաև բժշկական ծառայությունների մատչելիության հարցը, ներառյալ այն փաստը, որ որոշ դեղամիջոցներ կամ հորմոնալ բուժումներ չեն ֆինանսավորվում համընդհանուր առողջապահական ծրագրի շրջանակներում, գոյություն չունի նաև տրանսգենդերների յուրահատուկ կարիքներին հարմարեցված հատուկ ծրագիր: Մարտահրավերներ կան նաև կրթության իրավունքի տեսանկյունից թե՛ մասնագիտական կրթության մատչելիության ապահովման, թե՛ բարձրագույն կրթություն ստանալու առումով:

Կարևոր է, որ սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանությունն ամրապնդելու նպատակով պետությունն անհապաղ ձեռնարկի իրական քայլեր, այդ թվում՝ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների/ակտիվիստների/ իրավապաշտպանների հետ ակտիվ համագործակցության միջոցով, ինչը կօգնի նախատեսել համայնքի կարիքները, բարձրացնել ներառականության մակարդակը և պատշաճ կերպով պաշտպանել ու իրականացնել սոցիալ-տնտեսական իրավունքները:

7. Անհավասարությունը սոցիալական պաշտպանության համակարգում

Սոցիալական պաշտպանության համակարգում անհավասարությունն ակնհայտ է մի շարք ուղղություններում: Հաշվետու այս ժամանակահատվածում խնդիրներ են դրսևորվել այսպես կոչված սոցիալական վարկերից օգտվելու հարցում՝ «Լիբերթի Բանկը» տոկոսադրույքը սահմանելիս պատշաճ կերպով չի նախատեսում սոցիալական վարկերից օգտվողների սոցիալ-տնտեսական տարբերվող կարգավիճակը, ինչը հանգեցնում է այդ անձանց անարդարացիորեն ոչ բարենպաստ վիճակի:

Բացի այդ, հավասարության սկզբունքին անհամապատասխան է գնահատվել փորձը, որի համաձայն արգելվում է պետությունից մեկից ավելի սոցիալական նպաստ ստանալը (բացառությամբ մի քանի դեպքերի), չնայած դրանց նպատակի:

7.1. Խտրականություն քանկային ծառայություններ մատուցելիս

Դեռևս արդիական է քանկային ծառայությունների մատուցման խտրական պրակտիկան: Հաշվետու ժամանակահատվածում ոչ բարենպաստ վերաբերմունք է դրսևորվել տարիքի և սոցիալական կարգավիճակի հիման վրա: Մի կողմից բացահայտվել է, որ Վրաստանում գործող առևտրային բանկերը մի շարք վարկային պրոդուկտների (սպառողական վարկեր, ապառիկներ, հիփոթեքային վարկեր) տրամադրման չափանիշ են սահմանում տարիքը (հիմնականում 70 տարեկանը), որից ավելի բարձր տարիքային խմբի անձանց, սովորական դարձած կարգով, մերժում են տրամադրել նման ծառայություն: Մյուս կողմից, խտրական արդյունքներ է առաջացնում «Լիբերթի բանկի» կողմից սոցիալական վարկերի (այսպես կոչված՝ «կենսաթոշակային վարկեր») համար սահմանված տարեկան տոկոսադրույքի չափը (30.69%):

Ժողովրդական պաշտպանը հատկապես մատնանշում է միջազգայնորեն և ազգային մակարդակով ճանաչված այն հայեցակարգերի կարևորությունը, ինչպիսիք են *Հասարակությունը՝ բոլոր տարիքային խմբերի համար և Ակտիվ ծերացումը*,¹³⁹ և նշում, որ անթույլատրելի է մերժել վարկի տրամադրումը միայն տարիքի հիման վրա, քանի որ նման մոտեցումը հակասում է նշված նպատակներին և հավասարության սկզբունքին:¹⁴⁰ Յուրաքանչյուր դիմորդի ֆինանսական վիճակը պետք է գնահատվի անհատապես, բարձր ռիսկը հաստատվի կոնկրետ հիմնավոր տվյալներով և հիմնված չլինի այն թյուր պատկերացումների վրա, որ կենսաթոշակային տարիքի հասնելուց հետո մարդիկ ինքնաբերաբար դադարում են ակտիվորեն ներգրավված լինել աշխատանքային, տնտեսական կամ այլ գործունեություններում:

Միևնույն ժամանակ, ռիսկերի ապահովագրության նպատակով կիրառվող պայմանները չպետք է բարդացնեն սպառողների վիճակն այնպես, ինչպես դա դրսևորվում է «Լիբերթի բանկ»-ի կողմից սահմանված սոցիալական վարկերի տարեկան տոկոսադրույքի չափի արդյունքում:¹⁴¹

Ժողովրդական պաշտպանն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ սոցիալական վարկերի շահառուներն այն դրամական վճարներ ստացողներն են, որոնց հիմնական նպատակը անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է շահառուների արժանապատիվ կյանքի համար և նրանց տարրական կենսապահովման միջոցներով ապահովելը (պետական կենսաթոշակ, պետական փոխհատուցում, կենցաղային սուբսիդիա, սոցիալական փաթեթ, սոցիալական օգնություն դրամական տեսքով՝ կենսապահովման նպաստ, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց նպաստ և այլն):¹⁴² Բացի այդ, վարկը մարվում է հաճախորդի հաշվին ամսական մուտքագրված

¹³⁹ Տե՛ս տարեցների հիմնախնդիրների վերաբերյալ Երկրորդ համաշխարհային վեհաժողովի քաղաքական հռչակագիր, Հոդված 1, հասանելի է՝ <https://rb.gy/lkyhrh>, Ակտիվ ծերացում, քաղաքականության շրջանակային փաստաթուղթ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, էջ. 12, հասանելի է՝ <https://rb.gy/5gxlqg>, «Վրաստանում բնակչության ծերացման հարցով պետական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» Վրաստանի խորհրդարանի որոշումը (№5146-II):

¹⁴⁰ Տե՛ս՝ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի օգոստոսի 2-ի ընդհանուր առաջարկը Վրաստանի Ազգային բանկի նախագահին, հասանելի է՝ <https://rb.gy/2z8xyy>

¹⁴¹ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի ընդհանուր առաջարկը՝ <https://bit.ly/3HxjGV8>

¹⁴² Սոցիալական նպաստ ստացողի քանկային հաշվի սպասարկման պայմանները, Գետ 1.1.27, 1.1.1, հասանելի է՝ <https://rb.gy/nyoa3j>

սոցիալական նպաստների գումարից:¹⁴³ Հետևաբար, սահմանված տարեկան տոկոսադրույքի արդյունքում սոցիալական վարկերից օգտվողները ստիպված են երկար ժամանակ մարել այդ գումարն իրենց կենսապահովման համար տրամադրվող պետական վճարների մեծ մասից: Իսկ վարկի ժամկետի ընթացքում վճարման ենթակա ընդհանուր գումարը (մայր գումար և տոկոս) մոտ 75%-ով գերազանցում է որպես վարկ ստացած գումարը:

Հարցն ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ սպասարկող բանկի կողմից տրված վարկերի տոկոսադրույքների սահմանման պրակտիկան դրանք հաշվարկելիս նախատեսված գործոնների տիպորինակ է և այդ գործընթացում հաշվի չի առնվում սոցիալական վարկերի և այլ վարկերի սպառողների տարբերվող սոցիալ-տնտեսական կարգավիճակը, մինչդեռ խտրականության իրավունքը խախտվում է, այդ թվում, այն դեպքում, երբ առանց օրինական նպատակի և ողջամիտ արդարացման, տարբեր կերպ չեն վերաբերվում մարդկանց, ում վիճակն էապես տարբեր է:¹⁴⁴

Ժողովրդական պաշտպանը գտնում է, որ պետությունն անպայման պետք է ձեռնարկի գործուն քայլեր բանկային ծառայությունների մատուցման գործընթացում տարիքը, որպես ծառայությունների մատուցումը միանշանակորեն մերժելու հիմք սահմանելու պրակտիկան վերացնելու համար: Բացի այդ, նման գործելակերպի պայմաններում և հաշվի առնելով այն փաստը, որ սպառողները սոցիալական վարկերն օգտագործում են հիմնականում կենսական նշանակություն ունեցող այն ապրանքները (դեղորայք, վառելափայտ, մթերքներ և այլ կենսամիջոցներ),¹⁴⁵ գնելու համար, որոնց ձեռքբերման համար չեն բավարարում պետական մյուս վճարները, այս առումով բացահայտված խնդրի լուծման համար ձեռնարված միջոցներն, արդյունքում չպետք է սահմանափակեն սոցիալական վարկերի մատչելիությունը: Անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել տոկոսադրույքի չափի նվազեցման գործընթացի զարգացմանը խոչընդոտող պատճառները և դրսևորված հիմքերը վերացնելու համար բանկային ծառայությունների մատուցման պայմաններում ներմուծել հատուկ դրույթներ՝ կապված պետական վճարների բաշխման/տրամադրման հետ:¹⁴⁶

7.2 Սոցիալական աջակցության և կենսաթոշակային բաշխողական համակարգ

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում արդիական էր սոցիալական նպաստների քաղաքականության համապատասխանեցումը հավասարության իրավունքին:¹⁴⁷ Այս հարցն ուսումնասիրելու արդյունքում Վրաստանի Ժողովրդական պաշտպանը համարեց, որ խտրական է այն պրակտիկան, որն արգելում է պետությունից ստանալ մեկից ավելի սոցիալական նպաստ

¹⁴³ Նույն տեղում՝ կետ 11.20:

¹⁴⁴ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը հետևյալ գործով՝ *THLIMMENOS v. GREECE*, պար. 44.

¹⁴⁵ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://rb.gy/nrib84>; <https://rb.gy/8gga4g>; <https://rb.gy/giqpsr>

¹⁴⁶ Տե՛ս «Որոշ պետական նպաստների բաշխման/տրամադրման նպատակով բանկային սպասարկման պայմանները սահմանելու մասին միջգերատեսչական հանձնաժողովի կազմի և դրույթների հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2021 թվականի հուլիսի 28-ի №1290 կարգադրությունը:

¹⁴⁷ Նմանատիպ թեմաներով տե՛ս. Վրաստանի Ժողովրդական պաշտպանի խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին հատուկ զեկույցը 2020 թ. 24-26, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3IeAr8G>

(բացառությամբ չնչին դեպքերի): Նման ընդհանուր կանոններով չեն իրականացվում սոցիալական փաթեթների նպատակները և այդ կանոններում նախատեսված չեն նաև խոցելի խմբերի անհատական կարիքները:

Այս ընդհանուր կանոնի հակասությունը հավասարության իրավունքին Վրաստանի Ժողովրդական պաշտպանի կողմից հաստատվել է երկու կոնկրետ դեպքերի հիման վրա: Մասնավորապես, խնդրահարույց է երկքաղաքացիություն ունեցող անձի նկատմամբ կիրառվող կանոնը, ըստ որի՝ անձը Վրաստանում չի կարող օգտվել սոցիալական փաթեթից, եթե կենսաթոշակ է ստանում այլ երկրից: Վրաստանում գործող կանոնակարգի համաձայն՝ երկքաղաքացիություն ունեցող անձի կողմից ցանկացած տեսակի սոցիալական փաթեթից օգտվելու պահանջի դեպքում ներկայացվող փաստաթղթերը ներառում են տեղեկանք առ այն, որ տվյալ անձը կենսաթոշակ չի ստանում այն երկրից, որտեղ ևս ունի քաղաքացիություն:¹⁴⁸

Երկրորդ դեպքում Վրաստանի Ժողովրդական պաշտպանն անհիմն սահմանափակում է համարում կանոնակարգը, ըստ որի՝ հաշմանդամություն ունեցող տարեց անձանց արգելվում է ստանալ միաժամանակ երկու և ավելի սոցիալական նպաստ: Իր հերթին, Վրաստանի Ժողովրդական պաշտպանի համար ակնհայտ է, որ սոցիալական նպաստների քաղաքականությունը մեծապես կախված է պետության ֆինանսական միջոցներից և դրանց բաշխման փուլից, առաջնահերթությունները որոշելիս կառավարությունն ունի նկատառումների լայն շրջանակ: Այդուհանդերձ, Վրաստանի Ժողովրդական պաշտպանը գտնում է, որ խոցելի խմբերին սոցիալական նպաստների բաշխման տրամաբանությունը լիովին պետք է համապատասխանի հավասարության սկզբունքին:

Ելնելով վերը նշվածից, Վրաստանի Ժողովրդական պաշտպանն ընդհանուր առաջարկով դիմել է¹⁴⁹ Վրաստանի կառավարությանը՝ կոչ անելով վերանայել «սոցիալական փաթեթի սահմանման վերաբերյալ» № 279 որոշմամբ սահմանված կանոնները և հարմարեցնել դրանք քաղաքացիների շահերին:

8. Խտրականությունն աշխատանքային հարաբերություններում և գործունեություն իրականացնելիս

2021 թվականին Վրաստանում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնք ևս մեկ անգամ ընդգծեցին նախընտրական շրջանում քաղաքական հայացքների պատճառով մարդկանց աշխատանքից ազատելու և աշխատանքային իրավունքների այլ հնարավոր խախտումների տագնապալի միտումը: Հարկ է նշել է, որ Ժողովրդական պաշտպանը սկսել է քաղաքական հողի վրա աշխատանքային իրավունքների հնարավոր խախտման տասնյակ դեպքերի քննություն:

¹⁴⁸ Վրաստանի կառավարության 279-րդ որոշումը՝ «սոցիալական փաթեթի սահմանման մասին», Հոդված 7-ի, կետ 2-ի ե) ենթակետ (23 հուլիսի, 2012 թ.):

¹⁴⁹ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի օգոստոսի 4-ի ընդհանուր առաջարկը Վրաստանի կառավարությանը, հասանելի՝ <https://bit.ly/3xVuRTW>

Ուշագրավ է նաև, որ Ժողովրդական պաշտպանն առաջին անգամ խտրականություն է արձանագրել հարթակի միջոցով աշխատող անձանց (Platform Workers), մասնավորապես՝ «Bolt»-ի առաքիչների նկատմամբ, որոնց համար ընկերությունը, բողոքի ակցիաներ կազմակերպելու և արհմիություն ձևավորելու պատճառով, անժամկետ արգելափակեց «Bolt» հավելվածի հասանելիությունը և դադարեցնեց նրանց հետ աշխատանքային հարաբերությունները:

Խնդրահարույց էր նաև աշխատանքից ազատելու փաստը, երբ հանքափորը բողոքում էր աշխատանքային անվտանգության մասին կանոնների ոչ պատշաճ պահպանման դեմ, հատկապես աշխատանքային տեսչության եզրահանգման հիման վրա, որը հաստատում էր դիմումատուի կողմից նշված խնդիրների առկայությունը:

8.1. Նախընտրական շրջանում քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականություն աշխատանքային հարաբերություններում

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում, Ժողովրդական պաշտպանն ակտիվորեն հետևել է նախընտրական փուլում մարդու իրավունքների խախտումներին և ուսումնասիրել ենթադրյալ քաղաքական հայացքներով պայմանավորված տասնյակ անձանց աշխատանքից հեռացնելու փաստերը: Դեպքերը վերաբերում էին աշխատանքային իրավունքի այն խախտումներին, ինչպիսիք են՝ խտրականության պատճառներով պայմանագիրը երկարաձգելու մերժումը, պայմանագրի վաղաժամկետ լուծումը, սեփական կամքով աշխատանքից ազատվելու պահանջով դիմումը և աշխատանքից ազատումը:

Դիմումատուներն, անհավասար վերաբերմունքը վերագրել են, հիմնականում, նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի կուսակցության անդամների հետ նրանց կամ նրանց ընտանիքի որևէ անդամի բարեկամական, ընկերական կամ բարեղրացիական հարաբերություններին: Այդ թվում, ոմանք նման վերաբերմունքը վերագրում էին սոցցանցերում կուսակցության առաջնորդին աջակցություն կամ համակրանք արտահայտող գրառումների կամ մեկնաբանությունների տեղադրմանը/տարածմանը/հաստատմանը: Ուշագրավ է նաև այն, որ դիմումատուները հիմնականում նշում են ասոցացված (գուգորդված) խտրականությունը, քանի որ նրանց իրավունքների սահմանափակումը, հավանաբար, պայմանավորված է եղել իրենց ընտանիքի անդամի կամ իրենց հետ որևէ կապ ունեցող անձի քաղաքական հայացքներով կամ գործունեությամբ:¹⁵⁰

Պարզվել է, որ խախտումների մեծ մասը արձանագրվել է տեղական ինքնակառավարման մարմիններում, մունիցիպալ ծառայություններում և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված ոչ առևտրային իրավաբանական անձանց շրջանում: Բացահայտվել է նաև Ներքին գործերի նախարարության աշխատակցի աշխատանքից ազատելու փաստը: Ուշագրավ է նաև, կրթության ոլորտում քաղաքական հողի վրա ենթադրյալ հետապնդման դեպքը, որը դրսևորվել է ներքին աուդիտի կողմից հետաքրքրվելու հիման վրա, հետաքննություն

¹⁵⁰ Ցուցում՝ ասոցացված (գուգորդված) խտրականությունը ուղղակի խտրականության ձև է, որի դեպքում պաշտպանված նշանը՝ հիմքը, որի պատճառով հավասար իրավիճակում գտնվող անձանցից մեկին անհավասար (անարդար, անբարենպաստ) վերաբերմունք են ցուցաբերում, ունի ոչ թե անմիջապես տոժողը, այլ այն անձը, ում հետ ասոցացվում է տոժողը:

է սկսվել՝ բացահայտելու ռեսուրս կենտրոնի տնօրենի կողմից իրականացված ենթադրյալ խախտումները: Առողիտի հետազոտության արդյունքների համաձայն, դիմումատուն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, ինչը նա վերագրել է այն փաստին, որ ընկալվել է որպես ընդդիմադիր թեկնածուի աջակից, և ակտիվորեն չի մասնակցել իշխանական թեկնածուին սատարելու գործում:

Ժողովրդական պաշտպանի գրասենյակին տրամադրած տեղեկատվությունը վկայում է նաև, որ աշխատանքից ազատվելու մասին դիմում գրելու պահանջը բխել է անմիջապես վերադասներից և/կամ դիմումատուները մեկ այլ անձի միջոցով տեղեկացվել են, որ պետք է հեռանան աշխատանքից, ինչին ումանք համաձայնել են, իսկ ումանք՝ ոչ, որից հետո նրանք աշխատանքից ազատվել են այլ հիմքերով:

Ցավոք, որոշ դեպքերում քաղաքական հողի վրա խտրականության բացահայտմանը խոչընդոտում են ապացույցներ ձեռք բերելու բարդությունները: Խտրական դրդապատճառները, հաճախ, բացահայտվում են բանավոր հաղորդակցության ընթացքում, մինչդեռ պատասխանող կողմերն, իհարկե, ժխտում են ծառայությունից հեռանալու մասին ներկայացրած պահանջը: Այնուամենայնիվ, աշխատանքից սեփական կամքով հեռանալու փաստը կասկած է հարուցում անժամկետ աշխատանքի ընդունված անձի և/կամ այն դեպքերում, երբ պայմանագրի երկարաձգումը մերժվել է միայն մեկ աշխատողի, այն դեպքում, երբ պատասխանող կողմը հաստատում է աշխատանքային հարաբերությունների շարունակությունն այլ անձանց հետ:

Հաշվետու ժամանակահատվածում, քաղաքական հայացքների հիմքով ասոցացված խտրականությունը վերացնելու վերաբերյալ հանձնարարականով Ժողովրդական պաշտպանը դիմել է նաև կրթության և գիտության նախարարությանը: Պարզվել է, որ դիմումատուին, ով զբաղեցնում էր Մցխեթայի մունիցիպալիտետի հանրակրթական դպրոցներից մեկի տնօրենի պաշտոնը, մերժվել էր վերանշանակվել որպես տնօրենի պաշտոնակատար՝ ինչը պայմանավորված էր իր կնոջ և որդու ընդդիմադիր կուսակցությանն աջակցելու քաղաքական գործունեությամբ: Ժողովրդական պաշտպանի գնահատմամբ, հաշվի առնելով կրթական համակարգի քաղաքականացման և խտրական հիմքերով անձանց աշխատանքից հնարավոր հեռացման ավելացած ռիսկերը, կասկած էր հարուցում այն փաստը, որ դիմումատուի պաշտոնում վերանշանակումը համընկել է կնոջ և որդու քաղաքական գործունեության հետ: Բացի այդ, պատասխանող կողմը չի ներկայացրել իրական հիմք, որը նախարարության կողմից հաստատված պրակտիկայի համաձայն, կարդարացներ տնօրենի պաշտոնակատարի վերանշանակման մերժումը:¹⁵¹

Հարկ է նշել, որ Ժողովրդական պաշտպանը բազմիցս կոչ է արել¹⁵² կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական այլ հիմնարկների ղեկավարներին՝ *կանխել քաղաքական հողի վրա աշխատողների խտրականությունը և աշխատանքից ազատումը և հատուկ ուշադրություն դարձնել հանրակրթական համակարգում և մանկապարտեզներում աշխատողների պաշտպանությանը քաղաքական ճնշումներից, խտրականությունից և*

¹⁵¹ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հուլիսի 9-ի հանձնարարականը Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխեիլ Չխենկելիին, հասանելի է՝ <https://cutt.ly/ETW2jDs>

¹⁵² Հավելյալ տե՛ս <https://cutt.ly/cTWKFfN> ; <https://cutt.ly/gTEqsWK>

հետապնդումներից: Բացի այդ, Ժողովրդական պաշտպանը կոչ է արել նաև Վրաստանի դատախազությանը և ՆԳՆ-ին՝ ժամանակին հետաքննել հետապնդման վերոնշյալ փաստերի վերաբերյալ Ժողովրդական պաշտպանի կողմից տրամադրած տեղեկատվությունը և արձագանքել համապատասխան կերպով:

8.2. Խտրականության դրսևորումը ռիսկեր պարունակող գործունեության մեջ

Ինչպես և նախորդ հաշվետու ժամանակահատվածում, աշխատանքային հարաբերություններում գործատուի կողմից ենթադրյալ խտրականության ամենատարածված պատճառը դեռևս այլակարծությունն է:

Ժողովրդական պաշտպանն առաջին անգամ խտրականություն է արձանագրել հարթակի միջոցով աշխատող անձանց, մասնավորապես՝ «Բոլտի»-ի (Bolt Food) առաքիչների նկատմամբ, և հաստատել, որ առաքիչներն ընկերության կողմից խտրականության են ենթարկվել տարբեր տեսակետներ արտահայտելու պատճառով:¹⁵³ Մարտ ամսին, «Բոլտի» առաքիչները դադարեցնելով աշխատանքը բողոքի ցույց են կազմակերպել, ի թիվս այլ հարցերի, պահանջելով բարձրացնել սակագները և վերանայել բոնուսային համակարգը: Ի պատասխան՝ ընկերությունը խզել է նրանց հետ աշխատանքային հարաբերությունները՝ արգելափակելով հավելվածի հասանելիությունը:

«Բոլտ» ընկերությունը Ժողովրդական պաշտպանի գրասենյակին տեղեկացրել է, որ առաքիչների հետ իրավահարաբերությունները կարգավորվում են ոչ թե աշխատանքային, այլ համագործակցության պայմանագրով, և որ «գործընկեր առաքիչները արգելափակվել են հարթակից ոչ թե բողոք արտահայտելու, այլ կազմակերպված միջոցառումներին մասնակցելու համար՝ դրանով իսկ խոչընդոտելով Bolt Food-ի և գործընկեր ռեստորանների գործունեությունը: Չնայած հարթակի ընկերությունների կողմից առաքիչներին շնորհված «գործընկերոջ» կարգավիճակին, Ժողովրդական պաշտպանն առաջնորդվել է միջազգային ինստիտուտների և տարբեր երկրների դատարանների կողմից մշակված վերջին չափորոշիչներով և հաստատել, որ հարթակի միջոցով աշխատողներն ընկերության հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձինք են, ուստի աշխատանքային օրենսդրությունից ելնելով ունեն աշխատանքային երաշխիքներից օգտվելու իրավունք: Ժողովրդական պաշտպանի որոշումը նախադեպային է նաև այն տեսանկյունից, որ պաշտպանության կարևոր ազգային չափորոշիչ է ձևավորում ոչ միայն «Բոլտի» առաքիչների, այլ նաև բոլոր, այսպես կոչված, հարթակի միջոցով աշխատողների համար:

Առաքիչներն, իրենց ստանձնած պարտականությունները, կատարում են վտանգելով իրենց կյանքը և առողջությունը և, հաշվի առնելով իրենց գործառույթները, հենց նրանք են հանդիսանում Bolt Food-ի սպասարկման առանցքը: Այդ իսկ պատճառով, ընկերությունը պետք է առանձնապես նրբազգաց լինի և աշխատակիցների նկատմամբ չձեռնարկի անօրինական ու անհամաչափ միջոցներ: Ուստի, Ժողովրդական պաշտպանը «Բոլտ» ընկերությանը կոչ է արել անհապաղ վերականգնել առաքիչների հարթակից օգտվելու հասանելիությունը, ինչպես նաև հանձնարարականով հաստատված չափորոշիչը տարածել բոլոր այն առաքիչների վրա, որոնց

¹⁵³ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հունիսի 14-ի հանձնարարականը ՍՊԸ «Բոլտ Ֆուդ» (Bolt Food) -ի տնօրեն Բ. Պ.-ին, հասանելի է՝ <https://cutt.ly/nTIDIES>

հավելվածից օգտվելու հասանելիությունը նույնպես արգելափակվել է բողոք արտահայտելու պատճառով, սակայն նրանք չեն դիմել Վրաստանի Ժողովրդական պաշտպանին:

Խնդրահարույց էր նաև «Շուքրութի+» ՍՊԸ-ի կողմից հանքափորներից մեկին աշխատանքից ազատելու փաստը, ելնելով նրանից, որ վերջինս դիմել էր ընկերությանը աշխատավայրում աշխատանքի անվտանգության չափորոշիչներին առկա անհամապատասխանությունները շտկելու խնդրանքով: Իր անմիջական ղեկավարի մոտ դիմումատուն նշել է նաև, որ հաճախ պիտանի չէ սնունդը, իսկ ջրացնցուղի բաղնիքներում պահպանված չեն սանիտարահիգիենիկ նորմերը: «Շուքրութի+» ՍՊԸ-ի տնօրինությունը դիմումատուից պահանջել է լռել խնդիրների հետ կապված և չդիմել համապատասխան մարմիններին: Ժողովրդական պաշտպանը, գործն ուսումնասիրելիս, հիմնվել է Աշխատանքի տեսչության եզրակացության վրա, որով հաստատվել է աշխատանքային անվտանգության ուղղությամբ խնդիրների առկայությունը, ըստ որի՝ դիմումատուի մտահոգությունները իրական են և ընկալված չեն սուբյեկտիվորեն, իսկ պատասխանող կողմի արձագանքը՝ ոչ պատշաճ: Աշխատանքի տեսչության արդյունքները հաստատել են, որ աշխատավայրում առկա են մի շարք խնդիրներ: Եզրահանգման մեջ խնդիրների ցանկը ոչ միայն լիովին էր ներկայացված, այլև նույնիսկ գերազանցում էր դիմումատուի կողմից նշված խնդիրների քանակն ու սրությունը: Պատասխանող կողմը, բացի նրանից, որ չի կարողացել փարատել խտրական վերաբերմունքի կասկածները, չի ներկայացնել նաև նյութեր, որոնք կապացուցեին դիմումատուի կողմից ներքին կանոնակարգը և/կամ անվտանգության նորմերը հաճախակի խախտելու փաստերը:¹⁵⁴

Ցավոք, բողոք կամ այլ տեսակետ արտահայտելու պատճառով աշխատողին աշխատանքից ազատելը, հետապնդելը կամ աշխատանքային իրավունքների այլ խախտումները սովորական երևույթ են համարվում ինչպես պետական ծառայության, այնպես էլ մասնավոր հատվածում: Աշխատակիցների համար արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու համար կարևոր է արդյունավետ կերպով կիրառել հակախտրական օրենսդրությունը, ինչպես նաև գործատուների կողմից վարել հավասարության քաղաքականություն:

8.3. Աշխատանքի տեսչության մանդատն աշխատավայրում խտրականությունը վերացնելու ուղղությամբ

2021 թվականի հունվարի 1-ից ՀԻԻԱ Աշխատանքի տեսչական ծառայությունը (այսուհետ՝ Աշխատանքի տեսչություն) սահմանվել է որպես աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ Վրաստանի Օրգանական օրենքի՝ «Վրաստանի Աշխատանքային օրենսգրքի» իրագործումն ու դրանց արդյունավետ օգտագործումն ապահովելու հարցում իրավասու մարմին, որին շնորհվում է գործատուին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը: Նշված մանդատի շրջանակներում Աշխատանքի տեսչությունը վերահսկում է նաև խտրականության բացառման սկզբունքների պահպանումը, ինչն իրականացնում է ինչպես շահագրգիռ անձի դիմումի, այնպես էլ սեփական նախաձեռնության հիման վրա: Ուստի, Վրաստանի Ժողովրդական

¹⁵⁴ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի հանձնարարականը ՍՊԸ «Շուքրութի +» - ին, հասանելի է <https://bit.ly/3Ksb1Wp>

պաշտպանի համար կարևոր էր ձեռք բերել տեղեկություններ Աշխատանքի տեսչության աշխատանքի մեկ տարվա արդյունքների մասին՝ ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում աշխատավայրում հավասարության վիճակը ստուգելու նպատակով:

Աշխատանքի տեսչության կողմից Ժողովրդական պաշտպանի գրասենյակին տրամադրված տեղեկատվության համաձայն¹⁵⁵ տեսչությունն ուսումնասիրել է, ընդհանուր առմամբ 21 խտրականության դեպք, որից 9-ի համար դիմել են շահագրգիռ անձինք, իսկ 12-ը՝ տեսչությունը քննել է իր նախաձեռնությամբ: Նշվածներից 15-ի դեպքում Աշխատանքի տեսչությունը հաստատել է խտրականության փաստ և կազմել համապատասխան արձանագրություն, իսկ 5-ը դեռևս ստուգման փուլում է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ 15 արձանագրության վերլուծությունը բացահայտեց հետևյալ միտումները՝ խտրական ճանաչված դեպքերի ճնշող մեծամասնությունը, վերաբերում էր աշխատանքային օրենսդրության հետ նախապայմանագրային փուլի և խտրական թափուր աշխատատեղերի (*սեռի, տարիքի, արտաքին տեսքի հատկանիշներով*) համապատասխանության հարցերին: Պարզվել է, որ խտրական թափուր աշխատատեղերը քննարկելիս, որոշ դեպքերում, աշխատանքի տեսչությունը դիտարկում է միայն *տարիքային* չափանիշը, սակայն անտեսում՝ *սեռի* չափանիշը: Կարևոր է հավասարապես ուշադրություն դարձնել բոլոր խտրական չափանիշներին, քանի որ գործի միայն մասամբ լուծումը կարող է ստիպել գործատուին մտածել, որ ծառայության կոնկրետ դիրքում (*օրինակ՝ վարորդ, բեռնիչ, ատաղձագործ, պահեստի աշխատող*) սեռի մասին հիշատակումն արդարացված էր, ինչը հետագայում ևս կնպաստի տարածել խտրական թափուր աշխատատեղերի հայտարարություններ: Կարևոր է նաև, որ Աշխատանքի տեսչությունն անմիջականորեն հորդորի ընկերությանը թափուր աշխատատեղի հայտարարությունից անհապաղ հեռացնել խտրական չափանիշները, մանավանդ, որ նրանց կողմից նման փորձն արդեն առկա է, և կարևոր է, որ այս ցուցումը հավասարապես կիրառվի բոլոր ընկերությունների դեպքում:

Աշխատանքի տեսչությունն ուսումնասիրել է նաև այլ գործեր, ստուգելու՝ թե արտացոլված են արդյոք խտրականությունը բացառող դրույթները ընկերության կանոնադրության մեջ և որքանով է ընկերությունն իրագործում դրանք: Ուշագրավ է, որ երեք դեպքերում Աշխատանքի տեսչությունը համարել է, որ աշխատանքային կանոնակարգում ընկերությունը պարտավոր է արտացոլել հակախտրական դրույթներ, իրազեկել այդ մասին ընկերության աշխատակիցներին և ապահովել դրա արդյունավետ կիրարկումը: Տեսչությունը նաև կոչ է արել ընկերություններին գործարկել արդյունավետ մեխանիզմներ՝ աշխատավայրում խտրական բովանդակություն ունեցող գործողությունները կանխելու և մարդկանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը վերացնելու համար: Բացի այդ, տեսչությունը կոչ է արել ընկերություններին խրախուսել

¹⁵⁵ Ցուցում. Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական հարցերով նախարարության ՀԻԻԱ Աշխատանքի տեսչական ծառայության 2021 թվականի նոյեմբերի 19-ի №09/3301 պաշտոնական նամակը: Տրամադրված տեղեկատվությունը ներառում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածը:

աշխատակիցների միջև հարաբերությունների այնպիսի ձևերը, որոնք պահպանելով կոլեգիալության սկզբունքը կնպաստեն արժանապատիվ միջավայրի ձևավորմանը:

Ուշագրավ է, որ բոլոր դեպքերում խտրականությունն դրսևորող ընկերությունների նկատմամբ որպես վարչական տույժ կիրառվել է *նախազգուշացումը*: Աշխատանքի տեսչությունը ոչ մի դեպքում չի կիրառել դրամական տուգանք կամ այլ որևէ տույժ: Բացի այդ, ընկերություններին տրվել է 30 օր ժամկետ՝ խախտումը վերացնելու համար, թեև Ժողովրդական պաշտպանին հայտնի չէ, թե գործատուները ինչ ժամկետում և որքանով արդյունավետ են կատարել աշխատանքի տեսչության հրահանգները:

Աշխատավայրում խտրականության բացառման սկզբունքներն արդյունավետորեն կիրառելու համար Ժողովրդական պաշտպանն առաջնահերթություն է տալիս աշխատանքի տեսուչների մշտական և շարունակական վերապատրաստմանը՝ ծանոթանալու միջազգային պրակտիկային, բացահայտելու խտրականության ձևերը, խտրականության հավանական փաստերը, սահմանելու նախապայմանները, հետազոտելու փաստերն ապացուցման բեռի բաշխման և խտրականության գոհերի հետ հաղորդակցվելու վերաբերյալ:

8.4. Քննադատող լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեության սահմանափակումը

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեությունը խոչընդոտելու դեպքեր, ինչն արտահայտվել է պետական մարմինների կողմից կազմակերպվող ձեպագրույցներին կամ մունիցիպալ միջոցառումներին քննադատող լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցելու իրավունքի սահմանափակմամբ և լրագրողներին ընտրովի սկզբունքով հրավիրելով:

2021 թվականի դեկտեմբերի 8-ին թատրոնների ղեկավարների նշանակման հետ կապված մշակույթի նախարարի ձեպագրույցին¹⁵⁶ թույլ չեն տվել մասնակցել «TV Պիրվելի»-ի ներկայացուցիչներին:¹⁵⁷ Լրագրողի խոսքով՝ ձեպագրույցին ներկա են գտնվել միայն այն լրատվամիջոցների ներկայացուցիչները, որոնք ընդգրկված են եղել նախապես փոխանցած ցուցակում:¹⁵⁸ Ավելի ուշ, մշակույթի նախարար Թեա Օուլուկիանին լրագրողի հարցին, թե որն է սահմանափակման պատճառը, ասել է, որ նա ոչ թե քննադատող, այլ «սանձարձակ» լրատվամիջոցի ներկայացուցիչ է:¹⁵⁹ Նշենք, որ «Մթավարի արխի»-ի և «TV Պիրվելի»-ի լրագրողներին թույլ չեն տվել մասնակցել նաև մշակույթի նախարարությունում նոյեմբերի 22-ին

¹⁵⁶ Մշակույթի նախարարի որոշմամբ 3 պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար է նշանակվել, իսկ 4 թատրոնում այս պաշտոնների համար մրցույթ է հայտարարվել, տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3GyVh17>

¹⁵⁷ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/31Idhqv>

¹⁵⁸ Մշակույթի նախարարությունում որոշ լրագրողների դարձյալ թույլ չեն տվել մասնակցել ձեպագրույցի, տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3DGDuro>

¹⁵⁹ «Դուք սանձարձակ եք» - դիմում է մշակույթի նախարարը «TV Պիրվելի»-ի լրագրողին. տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/31KHqWt>

կայացած ճեպագրույցին:¹⁶⁰ Առանձին լրատվամիջոցների դեմ կոնկրետ միջոցներ ձեռնարկելու մասին հայտարարել է նաև Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ին Թբիլիսիի քաղաքապետարանի շենքում կայացած ճեպագրույցին:¹⁶¹ Ժողովրդական պաշտպանն, ի թիվս այլնի, տեղեկացել է նաև Օգուրգեթիի մունիցիպալիտետում կազմակերպած միջոցառմանը լրագրողներին ընտրովի սկզբունքով հրավիրելու փաստի մասին:

Հատկանշական է, որ լրատվամիջոցների առանձնահատուկ գործառույթն է՝ տարածել հանրային դաշտում հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունները և նպաստել հանրային կյանքում յուրաքանչյուր անդամի ներգրավվածության նախապայմանը հանդիսացող հարցերի հետ կապված հանրային բանավեճերին: Իր հերթին, սա սերտորեն կապված է նման տեղեկատվություն ստանալու հանրության իրավունքի հետ, ինչը պարտավորեցնում է իշխանություններին խթանել լրատվամիջոցների ազատությունն և բազմակարծությունը:

Ժողովրդավարական պետության ձևավորման անհրաժեշտ նախապայմանն է քննադատող լրատվամիջոցների առկայությունը: Հասարակության ինքնորոշման իրավունքը հիմնված է հենց քննադատող լրատվամիջոցների կիրառման վրա, որի սահմանափակման դեպքում խնդիրներ են ստեղծվում նաև ժողովրդավարական պետության գոյության գաղափարի շուրջ: Ժողովրդավարության կարևորագույն սկզբունքը օրենքի առաջ հավասարությունն է, որը պետք է հավասարապես երաշխավորված լինի թե՛ հասարակության, թե՛ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար: Որոշ լրատվամիջոցների լրագրողների մասնագիտական գործունեությունը սահմանափակելը՝ պատճառաբանելով, որ նրանք քննադատող լրատվամիջոցներ են, հակասում է հավասարության գաղափարին և իշխանությանը հավատարիմ լրատվամիջոցների համեմատ անհավասար դրության մեջ դնում քննադատող լրատվամիջոցներին, դրանով իսկ, վտանգի ենթարկելով և՛ հավասարության քաղաքականությունը, և՛ երկրի ժողովրդավարական գործընթացները:

9. Խտրականության խրախուսում

Խտրականությունը խրախուսող արտահայտությունների առումով, ցավոք, բացառություն չէր նաև այս հաշվետու ժամանակաշրջանը: Ժողովրդական պաշտպանը բազմիցս կոչ է արել պետական մարմիններին ստեղծել միասնական տեսլական և քաղաքականություն՝ պաշտպանելու հավասարության իրավունքը և կանխելու խտրականությունը, ինչպես նաև տարածել հավասարությանն աջակցող հրապարակային հայտարարություններ: Այդուհանդերձ, տարեցտարի քաղաքական պաշտոնյաների կողմից տարբեր խոցելի խմբերի նկատմամբ խտրականությունը խրախուսող հայտարարությունների առատությունը վկայում է, որ պետությունը դեռևս չի ձեռնարկել շոշափելի քայլեր կարծրատիպային տրամադրությունները նվազեցնելու միջոցով տարբեր խմբերի իրավահավասարությունն ապահովելու ուղղությամբ:

¹⁶⁰ «Հանուն ԶԼՄ-ների պաշտպանության» կոալիցիան Արդարադատության նախարարությանը կոչ է անում դադարեցնել լրագրողների նկատմամբ խտրական վերաբերմունքը. տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3pDQTa1>

¹⁶¹ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/33g3x7N>

Խտրականությունը խրախուսող միջավայրն առավել տեսանելի է կանանց, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների և LGBS+ համայնքի նկատմամբ:

Ցավոք, նախընտրական շրջանում հատկապես ակտիվորեն է դիտվում ընտրական սուբյեկտների կողմից մարդկանց տարբեր հիմքերով խտրականության ենթարկելու խթանումը և աստելության խոսքի կիրառումը, այդ թվում՝ այլատյաց, կրոնական, հոմոֆոբ հիմքերով: Դրանից խուսափելու նպատակով, նախընտրական քարոզարշավը մեկնարկելիս, Ժողովրդական պաշտպանը քաղաքական սուբյեկտներին և նրանց ակտիվիստներին կոչ արեց գերծ մնալ իրենց ծրագրերում և քարոզարշավներում խտրական քաղաքականություն կիրառելուց և այնպիսի գաղափարներ հնչեցնելուց, որոնք այս կամ այն հիմքով ընդունում են մարդկանց խմբերի առավելությունը: Ինչպես նաև, աջակցություն ստանալու համար չդիմել ոչ գերիշխող խմբերի մարզինալացմանը, փոքրամասնություններին խարանելուց խուսափելու նպատակով զգայուն թեմաների մասին խոսելիս ցուցաբերել պատասխանատվություն և լինել արդար:¹⁶²

9.1. Գենդերային հիմքով խտրականության խթանում

Համաձայն վերջերս արմատացած պրակտիկայի՝ կանանց դեմ ընդդիմախոսելիս, որոշակի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ կամ հասարակական գործիչներ ակտիվորեն օգտագործում են վիրավորական կամ սեքսիստական կարծրատիպեր պարունակող արտահայտություններ: Հիմնականում, սեքսիստական արտահայտությունները ամրապնդում են սեռական ենթատեքստ ունեցող կամ կանանց և տղամարդկանց համար սահմանված գենդերային դերերը: Հարկ է նշել, որ սեքսիստական արտահայտությունները սաստկացնում են կանանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը կյանքի տարբեր ոլորտներում, խթանում սեռական ոտնձգությունների դեպքերը և խոչընդոտներ ստեղծում կարիերայի առաջխաղացման հարցում և պետական-քաղաքական կարևոր պաշտոններ զբաղեցնելիս:

Հաշվետու ժամանակահատվածում, գենդերային կարծրատիպերի խթանման տեսանկյունից, հատկապես սուր են եղել 2021 թվականի հուլիսի 18-ին Վրաստանի խորհրդարանի շենքում տեղի ունեցած իրադարձությունները:¹⁶³ Խորհրդարանի նիստերի դահլիճում հուլիսի 5-ին տեղի ունեցած իրադարձությունների դեմ իր բողոքն արտահայտելիս, «Ազգային շարժման» անդամ Նոնա Մամուլաշվիլին Լեքսո Լաշքարավայի լուսանկարով պաստառը ձեռքին բարձրացել է սեղանի վրա: Ընդդիմադիր պատգամավորի այս պահվածքին հաջորդել է մեծամասնության անդամների դժգոհությունը: Պատգամավորները Մամուլաշվիլին նախ հորդորել են իջնել սեղանից, ապա Իրակլի Զարքուան ստիպողաբար է իջացրել նրան սեղանից:¹⁶⁴ Նույն նիստի ընթացքում Շավլա Պապուաշվիլին խոսնակի համար նախատեսված ամբիոնից ֆիզիկական ուժի

¹⁶² Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի օգոստոսի 3-ի հայտարարությունը, հասանելի է՝ <https://bit.ly/3xOkCAU>

¹⁶³ Վրաստանի խորհրդարանում Ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրիի ելույթի ժամանակ լրատվամիջոցների ներկայացուցիչները և ընդդիմադիր պատգամավորները նիստերի դահլիճում ցուցադրեցին «TV Պիրվելի-ի» գոհված օպերատոր Լեքսո Լաշքարավայի լուսանկարներն ու պաստառները և պահանջեցին վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիի և ՆԳ նախարարի հրաժարականը: Ընդդիմության և լրագրողների բողոքին հետևեց բանավոր բախում մեծամասնության և ընդդիմության անդամների միջև:

¹⁶⁴ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3dhw7Y1>

կիրառմամբ դուրս է բերել Թինաթին Բոկուչավային:¹⁶⁵ «Վրացական երազանքի» պատգամավոր Գուրամ Մաճարաշվիլին Շավա Պապուաշվիլի կողմից Թինաթին Բոկուչավային ուժի գործադրմամբ դուրս բերելու փաստին արձագանքել է սեքսիստական բովանդակությամբ՝ նշելով, որ «Պապուաշվիլին կարողացել է չեզոքացնել Բոկուչավայի հիստերիան»:¹⁶⁶ Ավելի ուշ, նույն օրը, Լևան Մգալբլիշվիլին Թինաթին Բոկուչավայի նկատմամբ նպատակաուղղված օգտագործել է սեքսուալ բովանդակություն պարունակող դիմելաձև՝ «Թինա, կյանքս»:

Տղամարդ պատգամավորների կողմից ընդդիմադիր կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառմամբ չեզոքացնելու փորձը հատկապես տազնապալի նախադեպ է, քանի որ ամրապնդում է այն կարծրատիպը, որ կանայք ոչ թե գործընթացները ստեղծող և/կամ դրանց համամասնակից, այլ օբյեկտներ են, անշունչ առարկաներ, որոնց տղամարդիկ կարող են ցույց տալ իրենց տեղը՝ բացարձակապես անտեսելով իրենց կամքն ու արժանապատվությունը: Հատկանշական է, որ նման գործողությունները կարող են բացասաբար անդրադառնալ կանանց իրավահավասարության և քաղաքականությանը մասնակցելու վրա, հատկապես այն իրավիճակում, երբ կանանց նկատմամբ բռնությունը, ինչպես նաև քաղաքականության մեջ նրանց ընդգրկվածությունը լուրջ մարտահրավեր է հանդիսանում երկրի համար: Նման վարքագիծն առավել անհանգստացնող է, երբ խոսքը վերաբերում է պատգամավորի, որից հասարակությունն ունի երկրում կանանց հզորացման, գենդերային բռնության և խտրականության վերացման հարցերի լուծման հետ կապված մեծ ակնկալիքներ:

Խորհրդարանի նիստերի դահլիճում Թինաթին Բոկուչավայի և Շավա Պապուաշվիլի միջև տեղի ունեցած միջադեպի հետ կապված հատկապես ուշագրավ է գենդերային հավասարության մշտապես գործող խորհրդարանական խորհրդի անարդյունավետ արձագանքը: Միջադեպի ուսումնասիրության արդյունքում խորհուրդը գտել է, որ այն չի պարունակել կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության նշաններ: Խորհրդի անդամների գնահատմամբ, եթե Թինաթին Բոկուչավայի փոխարեն տղամարդ պատգամավոր լիներ, ապա նրա նկատմամբ կձեռնարկվեր նույն գործողությունը: Բացի այդ, խորհուրդը պատգամավորների բողոքի ձևը գնահատել է որպես վիրավորական խորհրդարանի և երկրի խորհրդարանական պատմության համար, իսկ Շավա Պապուաշվիլի պահվածքը՝ խորհրդարանական գործունեությունը վիրավորող գործողությունները կանխելու փորձ:¹⁶⁷

¹⁶⁵ Միջադեպին նախորդել է «Վրացական երազանքի» պատգամավոր Լևան Մգալբլիշվիլի կողմից Թինաթին Բոկուչավայից ուժի գործադրմամբ բողոքի պաստառի առգրավումը: Որից հետո փաստին արձագանքելու նպատակով Թինաթին Բոկուչավայն ուղղվել է դեպի Վրաստանի խորհրդարանի նախագահը: «Վրացական երազանքի» պատգամավոր Շավա Պապուաշվիլին փորձել է նրան հետ պահել ուժի գործադրմամբ: Տեղեկատվությունը հասանելի է <https://bit.ly/3oif7Hy>

¹⁶⁶ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3DI0sQe>

¹⁶⁷ Գենդերային հավասարության մշտապես գործող խորհրդարանական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 2-ի №6 նիստի արձանագրությունը, հասանելի է՝ <https://bit.ly/3pJhNh1>, Խորհրդի անդամ Անա Նացվիշվիլին այլ կարծիք է հայտնել: Ի տարբերություն խորհրդի մյուս անդամների, նրա գնահատմամբ, Շավա Պապուաշվիլի արարքը գենդերային բռնության դրսևորում էր, ինչը չափազանց մտահոգիչ է:

Նշենք, որ Գենդերային հավասարության խորհուրդը խորհրդարանում ստեղծված մշտապես գործող մարմին է, որի գործունեությունը կարևոր է երկրում գենդերային հավասարության գործընթացի խթանման և բարելավման համար: Խորհրդի անդամները պետք է հոգ տանեն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, ազատությունների և կարողությունների իրացման համար: Ինչպես նաև, նպաստեն խտրականության կանխարգելմանն ու վերացմանը: Ի հակադրություն դրա, խորհրդի որոշումը հակասում է խորհրդի նպատակներին, խրախուսում կանանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը և վտանգավոր նախադեպ ստեղծում ապագայում կանանց իրավունքների խախտման նկատմամբ անարդյունավետ արձագանքի համար:

Ինչպես և նախորդ հաշվետու ժամանակաշրջանում, հաճախակի բնույթ էր կրում հասարակական և քաղաքական կյանքում ներգրավված կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը, որը հաճախ օգտագործվում էր որպես նրանց դեմ քաղաքական պայքարի գործիք: Օրինակ, Գորիի սակրեբուլոյի նախագահ Դավիթ Ռազմաձեն սակրեբուլոյի նիստի ընթացքում տեղի ունեցած բանավեճի ժամանակ սակրեբուլոյի անկախ անդամ Իրմա Սմբարդինիշվիլին դիմել է հետևյալ խոսքերով. «Քո նման փողոցային կինը ինչ է կորցրել սակրեբուլոյում»¹⁶⁸ Նշենք, որ այդ ժամանակահատվածում Դավիթ Ռազմաձեն սակրեբուլոյին կից գործող գենդերային հավասարության խորհրդի նախագահն էր:¹⁶⁹ «Ձեր կանայք չեն: Համեցե՛ք, տարե՛ք»,¹⁷⁰–նման սեքսիստական բնույթի արտահայտություններ է օգտագործել մեծամասնության պատգամավոր Լևան Մգալբիշվիլին, երբ ընդդիմադիր կուսակցության ներկայացուցիչներից պահանջել է խորհրդարանի ամբիոնից հեռացնել իրենց համակուսակցական կին պատգամավորներին: Կանանց բացասական համատեքստում է հիշատակել նաև «Ազգային շարժում» կուսակցության պատգամավոր Նիկա Մելիան, Թեա Ծուլուկիանին քննադատելիս՝ «90-ականներին յուրաքանչյուր եղբայրություն ուներ իր կին անդամն, ով իրեն ամեն ինչ թույլ էր տալիս... Ծուլուկիանին ինձ հիշեցնում է այդ կանանց»:¹⁷¹

Կանանց գենդերային դերի մասին կարծրատիպերը խրախուսելու առումով Ժողովրդական պաշտպանն ուշադրություն հրավիրեց Նինո Բուրջանաձեի՝ «Պալիտրա Նյուզ»-ի «Լանչ TIME»-հաղորդման եթերում արված հայտարարության վրա, որտեղ նա նշել է, որ «ֆեմինիզմը և գենդերային հավասարությունը գուցե վատ բան չի, բայց կնոջ առաջնահերթ խնդիրը երկրի համար նորմալ երեխաներ դաստիարակելն է»:¹⁷²

¹⁶⁸ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3lz62bv>

¹⁶⁹ Գորիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի N189 կարգադրությունը, «Գորիի մունիցիպալիտետի գենդերային հավասարության խորհուրդ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» Գորիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի 2018 թվականի մարտի 9-ի № 39 կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին հասանելի է՝ <https://bit.ly/3GaSgDL>

¹⁷⁰ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3IlvJWH>

¹⁷¹ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3Gc5tMJ>

¹⁷² Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3l1fwRK>

Բացի այդ, դերասանուհի Նինուցա Մակդաշվիլին «Ռուսթավի 2»-ի «Թաքնված ծրար», հաղորդման ժամանակ խոսել է նախկին ամուսնու կողմից հնարավոր ընտանեկան բռնության փաստերի մասին:¹⁷³ Չնայած հասարակության մեծամասնության համերաշխությանը, նրա հասցեին հնչեցին մի շարք խտրական հայտարարություններ, այդ թվում՝ հասարակական գործիչների կողմից: Հատկապես անհանգստացնող էին Ռուսթավելիի անվան ազգային թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուայի,¹⁷⁴ խորհրդարանի պատգամավոր Էլիստ Բոլքվաձեի¹⁷⁵ և այլոց մեկնաբանությունները՝ կապված կնոջ ֆինանսական շահի և ուշացած հրապարակավ գրույցի հետ: Հաշվի առնելով, որ հասարակության մի մասը դեռևս համերաշխ չէ բռնության գոհ դարձած կանանց նկատմամբ, այս թեմայով բացահայտ խոսելը մեծ քաջություն և խիզախություն է պահանջում: Նման հայտարարությունները նվազեցնում են բռնության ֆենոմենի լրջությունը և ստիպում գոհերին կորցնել հանրային աջակցության և բռնությունից խուսափելու հավատը:¹⁷⁶

9.2. Էթնիկ և ռասայական հիմքերով խտրականության խրախուսում

Ժողովրդական պաշտպանը հաշվետու ժամանակահատվածում ուշադրություն է հրավիրել նաև էթնիկական ծագման հատկանիշների հիմքով խտրականությունը խրախուսող հայտարարությունների վրա: Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Էլիստ Բոլքվաձեն, ով նաև զբաղեցնում է խորհրդարանի մշակույթի կոմիտեի նախագահի պաշտոնը, 2021 թվականի մայիսի 16-ին և 17-ին Դմանիսիում վրացական և ադրբեջանական համայնքների միջև տեղի ունեցած կոնֆլիկտին¹⁷⁷ անդրադառնալիս, նշել է, որ վստահ է, որ հարցը կլուծվի «երկու պետությունների միջև բարեկամական մթնոլորտում»:¹⁷⁸ Խորհրդարանի պատգամավորի կողմից էթնիկ ադրբեջանցի բնակչությանը Ադրբեջանի պետության իրավասության ներքո ընկալելն ու որպես Վրաստանի քաղաքացի չդիտարկելը, խրախուսում է գերիշխող խմբի կողմից էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքը և նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև հրահրում ապաինտեգրման գործընթացը: Էթնիկ փոքրամասնությունների մարզինալացումը նվազեցնում է նրանց ինտեգրումը վրացական հասարակական և քաղաքական տարածքներին և ամրապնդում այն զգացումը, որ այդ խմբերը չեն համարվում երկրի բաղկացուցիչ մասը:

¹⁷³ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/31ppAbt>

¹⁷⁴ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/31wtf7b>

¹⁷⁵ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3ditXYf>

¹⁷⁶ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի ապրիլի 16-ի հայտարարությունը, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://bit.ly/3DkmCCa>

¹⁷⁷ Դմանիսիում առճակատումը սկսվել է մայիսի 16-ին: Տարածված տեղեկությունների համաձայն՝ վիճաբանությունը կապված էր ապրանքը խանութից ապառիկով («նիսիա») վերցնելու հետ: Հաջորդ օրը՝ մայիսի 17-ին, կողմերի միջև բախումը կրկին շարունակվել է: Տասնյակ քաղաքացիներ ձեռքով են երկու խմբերի միջև ոստիկանների ստեղծած կենդանի պատը, միմյանց ուղղությամբ քարեր ու մահակներ նետելով: Զուգահեռաբար, քաղաքում տեղակայվել են ոստիկանական ուժեր, այդ թվում՝ հատուկ ջոկատայիններ և ջրցան մեքենաներ: Ի վերջո, երկու կողմերի ներկայացուցիչները բանակցությունների արդյունքում հայտարարել են հաշտության մասին: Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3onFA6F>

¹⁷⁸ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3EpcqJJ>

Նախընտրական շրջանում ուշագրավ էր «Լեյբորիստական կուսակցության» Թրիլիսիի քաղաքապետի թեկնածու Միխելի Քումսիշվիլիի հրապարակած տեսանյութը, որտեղ նա ծաղրածանակի էր ենթարկում իր մրցակցին՝ նիգերիական ծագումով Վրաստանի քաղաքացի Ռիչարդ Օգբունուջունին։ Տեսանյութի սկզբում ասվում է, որ ժողովրդին և հատկապես լրատվամիջոցներին «հետաքրքրում է թեկնածուի էկզոտիկությունը, ոչ թե բովանդակային կողմը», ապա սև ներկված դեմքով և ծաղրանմանակելով Օգբունուջուի առոգանությունը կոչ է անում ընտրողներին աջակցել նրան։¹⁷⁹ Հարկ է նշել, որ Օգբունուջուն առաջին սևամորթն է, ով որպես թեկնածու առաջադրվել է Վրաստանի ընտրություններում։ Նման տեսանյութերը ապագայում կարող են խոչընդոտել ոչ գերիշխող ռասայական խմբերի ներկայացուցիչների ներգրավմանը քաղաքական կամ հասարակական գործունեության մեջ, ինչպես նաև խրախուսել բռնությունը, խտրականությունը և վտարումը ոչ գերիշխող ռասայական խմբերին պատկանող մարդկանց նկատմամբ։

Ուղղափառ եկեղեցու Քութայիսիի և Գաենաթիի թեմի քահանայապետ, միտրոպոլիտ Իոանե Գամրեկելին պատարագի ժամանակ հրեաներին մի քանի անգամ հիշատակել է նսեմացնող, հակասեմական համատեքստում, անվանելով նրանց «քրիստոնյաներին հալածող» և «անհավատ ցեղ»։¹⁸⁰ Ավելի ուշ, Քութայիսի-Գաենաթիի թեմի ավագ քահանա Իլիա Կարկաձեն ի պաշտպանություն Իոանե Գամրեկելիի իր քարոզում նույնպես հակասեմական բովանդակության հայտարարություններ է արել։¹⁸¹ Հատկանշական է, որ երկրում հակասեմական տեսակետների տարածումը վտանգ է ստեղծում էթնիկ հրեաների իրավահավասարության համար և ցույց է տալիս, որ մարդկության պատմության ամենասարսափելի հանցագործություններից մեկը՝ Հոլոքոստը և դրա հիմքում ընկած նախադրյալները, պատշաճ կերպով չեն ըմբռնվել։¹⁸² Հակասեմականության ցանկացած դրսևորում վտանգավոր է յուրաքանչյուր քաղաքացու և ողջ հասարակության համար։

9.3. ՄԿԳԻ հիմքերով խտրականության խրախուսում

Դեռևս մարտահրավեր է մնում հոմոֆոբ/տրանսֆոբ արտահայտությունների հանրային տարածումը, այդ թվում պաշտոնյաների կողմից։ Հաշվետու ժամանակահատվածում, ԼԳԲՏ+ հիմքով խտրականությունը խրախուսող արտահայտությունների թիվն աճել է հատկապես «Թրիլիսի Փրայդ»-ի կողմից կազմակերպված Հպարտության շաբաթվա շրջանակներում։ Պարզ նկատելի էր բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հարցը քաղաքականացնելու ճանապարհով «Հպարտության շաբաթը» խնդրի բացասական համատեքստում անուղղակիորեն ներկայացնելու փորձը՝ դրան աջակցելու փոխարեն, ինչն ակտիվորեն արտահայտվեց 2021 թվականի հուլիսի 5-6-ի բռնի գործողություններում։ Հպարտության շաբաթն անցկացնելու հետ

¹⁷⁹ Տեսանյութը հասանելի է՝ <https://bit.ly/3dhH1xa>

¹⁸⁰ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3ElJouL>

¹⁸¹ Տեղեկատվությունը հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=nzOWIcsBDXM&fbclid=IwAR1X4x1L_j2U_vYpAtaTGcgvVMDkE9ru2bhXR0qgZOIszvqeqRoxVrscwY

¹⁸² Վրաստանի Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի հունվարի 11-ի հայտարարությունը, հասանելի է՝ <https://bit.ly/3Elv2dv>

կապված Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն պարզաբանել է, որ նպատակահարմար չի համարում հայարտության շաբաթն անցկացնելը, քանի որ երկու կողմերի որոշակի խմբեր կարող են այն սխալ օգտագործել :¹⁸³ Կազմակերպիչներին շաբաթն անցկացնելուց զերծ մնալու կոչ է արել նաև Իրակլի Կոբախիձեն:¹⁸⁴ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին «Աժանապատվության երթը» որակել է որպես քաղաքացիական բախումների պատճառ և նշել, որ «Փրայդի» ետևում կանգնած են «ռևանշիստական և արմատական» քաղաքական ուժեր:¹⁸⁵

Համայնքի անդամների անվտանգությունը երաշխավորելու նպատակով համայնքի իրավունքների սահմանափակումը հանգեցրեց ԼԳԲՏ+ անձանց իրավունքների նկատմամբ անհարգանքի, հանրային տարածքի սահմանափակման և նրանց նկատմամբ հոմոֆոբ վերաբերմունքի և տրամադրությունների աճի, իսկ հուլիսի 5-6-ին թույլատրված բռնություններն և անհանդուրժողականությունը՝ ԼԳԲՏ+ համայնքի անդամների նկատմամբ ճնշումների և բռնության խրախուսման: Հետագա օրերին ակտիվորեն բացահայտվեցին հոմոֆոբ և սեքսիստական բռնության դեպքեր,¹⁸⁶ այդ թվում՝ հարձակումը լեհ զբոսաշրջիկի վրա,¹⁸⁷ հոմոֆոբ բռնությունը գերմանացի դիջեյի նկատմամբ,¹⁸⁸ հարձակումները և տրանսգենդեր կնոջ նկատմամբ բռնության հաճախակի դեպքերը:¹⁸⁹

ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականության և հոմոֆոբ տրամադրությունների խրախուսման տեսանկյունից հատկապես սուր էր Սաբուրթալոյի մեծամասնական ընտրակարգով առաջադրված անկախ թեկնածու Վատո Շաքարաշվիլիի ֆեյսբուքյան իր պաշտոնական էջում հրապարակված տեսանյութը,¹⁹⁰ որում նա հուլիսի 5-ի իրադարձությունները որակավորել է որպես «Երկրի համար անընդունելի գաղափարախոսությունը բնակչությանը պարտադրելու կոպիտ փորձ»: Բացի այդ, նա խոստացել է ընտրողներին սկսել ստորագրահավաք՝ երկրում ԼԳԲՏ+ քարոզչությունն արգելելու պահանջով ժողովրդական հանրաքվե անցկացնելու նպատակով:

10. Մարտահրավերներ ենթադրյալ ատելության հիմքով կատարված հանցագործությունները հետաքննելիս

Համաձայն Ժողովրդական պաշտպանի փորձի, ինչպես և նախորդ տարվա հաշվետու ժամանակահատվածում, այս տարի դարձյալ մարտահրավեր է մնում ենթադրյալ ատելության հիմքով հանցագործությունների անարդյունավետ հետաքննությունը: Ենթադրյալ ատելության հիմքով կատարված հանցագործությունների վերաբերյալ դիմելիության ցուցանիշը, որպես կանոն, կայուն բարձր է Եհովայի վկաների և ԼԳԲՏ+ մարդկանց շրջանում:

¹⁸³ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3GdpqTu>

¹⁸⁴ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3okL3ea>

¹⁸⁵ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3Gi8kE1>

¹⁸⁶ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3Il2uDF>

¹⁸⁷ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/31quDbh>

¹⁸⁸ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3dfZDh1>

¹⁸⁹ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3rD71v4>

¹⁹⁰ Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://bit.ly/3Gc6Fzx>

Ընթացիկ տարում, հատկապես սուր էին հուլիսի 5-6-ը ԼԳԲՏԲ+ «Թբիլիսի-Պրայդ» կազմակերպության և նրա աջակիցների կողմից կազմակերպված «Արժանապատվության երթ»-ի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները, որոնց մինչ օրս իրավասու մարմինների կողմից չի տրվել արդյունավետ արձագանք: Այս հարցի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են սույն զեկույցի համապատասխան գլխում:

Հարկ է նշել, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ենթադրյալ ատելության հիմքով կատարված հանցագործությունների մի մասը, որպես կանոն, վերաբերում է ֆիզիկական և բանավոր վիրավորանքի, ծեծի, հարձակումների և սպանության սպառնալիքի փաստերին: Դիմումատուները նաև նշում են, որ մի շարք դեպքերում, դեպքի վայր կանչված իրավապահ մարմինների ներկայացուցիչները կոնֆլիկտային իրավիճակը հարթելու փոխարեն, իրենք են օգտագործել վիրավորական տերմինաբանություն և դրսևորել ագրեսիա նրանց նկատմամբ՝ հոմոֆոբիայի հողի վրա: Ժողովրդական պաշտպանի գործավարության մեջ առկա գործերով բացահայտվում են նաև տրանսֆոբիայի հողի վրա կյանքի և առողջության դեմ ուղղված հանցավոր ոտնձգությունների փաստեր:

Հաշվետու ժամանակահատվածում պարզվել է, որ մի շարք դեպքերում անձանց վրա հարձակումները կապված էին նրանց որպես ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչ ընկալելու հետ: Գործերից մեկում, երիտասարդ տղամարդն ընկերոջ հետ մետրոյով երթնելելիս, երկու երիտասարդի կողմից ֆիզիկական և բանավոր բռնության է ենթարկվել միայն իր տարբերվող հագուստի պատճառով: Այս փաստի առնչությամբ Ժողովրդական պաշտպանին Վրաստանի գլխավոր դատախազությունից հայտնել են, որ դիմումատուին տուժող են ճանաչել խտրականության այլ հիմքով՝ իր հագնվելու ոճի պատճառով անհանդուրժողականության հիմքով բռնության փաստով: Սակայն կոնկրետ անձանց նկատմամբ քրեական գործ դեռևս չի հարուցվել:

Այս հաշվետու տարում, համեմատաբար նվազել է Եհովայի վկաների դեմ կրոնական ատելությամբ պայմանավորված հանցագործությունների թիվը: Դա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ համավարակի բռնկման պահից Եհովայի վկաները դադարեցրել են ծառայությունները, ինչպես հանրային վայրերում, այնպես էլ դռնեղուտ: Նախորդ հաշվետու տարիների փորձից, Եհովայի վկաների դեմ ենթադրյալ հանցագործությունների մեծ մասը վերաբերում էր փողոցում ցուցատախտակի մոտ կանգնած կամ դռնեղուտ քայլող Եհովայի վկաներին: Թեև, այս տարի դարձյալ բացահայտվել են Եհովայի վկաների գույքին պատճառած վնասի առանձին փաստեր:

Դիմումներից մեկի համաձայն, Մցխեթայի շրջանի Մուխրանի գյուղում վնասել են Եհովայի վկաներին պատկանող անշարժ գույքը՝ կրոնական հավաքների համար նախատեսված սրահը: 2021 թվականի մարտի 25-ին այսպես կոչված «պարետային ժամի» ժամանակ անհայտ անձը հանել է պատուհանի վանդակաձաղը, ջարդել ապակին և պայթուցիկ նյութ նետել շենք:¹⁹¹ 2021 թվականի ապրիլի 30-ին, ենթադրաբար նույն անձը կրկին փորձել է մուտք գործել շենք, սակայն

¹⁹¹ Գույքին պատճառված վնասը կազմել է մոտ 2000 լարի:

հարևանի ձայնը լսելով լքել է տարածքը: Նույն դիմումի մեջ, նշվում է 2019 թվականի հունիսի 27-ին Մցխեթայում գտնվող Եհովայի վկաների կրոնական հավաքների համար նախատեսված սրահի հրկիզման փորձի փաստը: Չնայած այն հանգամանքին, որ տեսախցիկների ձայնագրությունները դիտելիս բացահայտվել է հանցագործության ենթադրյալ կատարողի ինքնությունը, դեպքից 2 տարի անց էլ դատախազությունը նրա նկատմամբ քրեական գործ չի հարուցել:

Դատախազության հաղորդմամբ,¹⁹² Մուխրանի գյուղում գտնվող Եհովայի վկաների սրահը վնասելու փաստով հետաքննությունն ի սկզբանե սկսվել է Վրաստանի Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասի «Ա» ենթակետով նախատեսված հանցագործության նշաններով (ուրիշին պատկանող գույքի վնասում կամ ոչնչացում, որը զգալի վնաս է պատճառել, հրկիզման, պայթյունի կամ այլ վտանգավոր միջոցներով): Հետագայում, դատախազի որոշմամբ, գործը վերաորակավորվել է, և դիմողը տուժող է ճանաչվել Վրաստանի Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասի «Ա» ենթակետով և 156-րդ հոդվածի 2-րդ մասի «Գ» ենթակետով՝ (քրեական հետապնդում կրոնական հիմքով անհանդուրժողականություն դրսևորելու փաստով): Ըստ դատախազության՝ կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդում այս փուլում դեռևս չի սկսվել:

Նշենք, որ Եհովայի վկաների սեփականության մեջ գտնվող գույքի վնասման և հափշտակության փորձի առանձին դեպքեր են արձանագրվել Մառնեուլիում, Ջուգոդիդի շրջանի Դարչելի և Գարդաբանիի շրջանի Մարտղոփի գյուղերում: 2021 թվականի օգոստոսի 5-ին Ախալցխիսեում, Միքուտիշվիլի փ. №1 հասցեով գտնվող Եհովայի վկաների սրահի ցանկապատի վրա անձանոթ անձը/անձինք ներկով վիրավորական գրություններ և պատկերներ են նկարել: Նշված դեպքերի հետ կապված ընթանում է հետաքննություն՝ ուրիշի գույքը վնասելու կամ ոչնչացնելու փաստով, սակայն մինչ օրս ոչ մի գործով պարզված չէ մեղադրվող անձի/անձանց ինքնությունը, քրեական գործ նույնպես չի հարուցվել: Եհովայի վկաների սեփականության վրա հարձակվելու փաստերը նախորդ տարիներին ևս հաճախական բնույթ էին կրում: Որոշ դիմումներում դիմումատուները վկայակոչում են Եհովայի վկաների աշխատանքային տարածքների և ավտոմեքենաների վնասման տարբեր փաստեր, այդ թվում, դիմումներից մեկը վերաբերում էր նույն օրը Խոնիի և Խաշուրիի մունիցիպալիտետներում Եհովայի վկաներին պատկանող անշարժ գույքի վնասման փաստին, ինչպես նաև Եհովայի վկաների վարչական շենքի և նրանց պատկանող ավտոմեքենայի վնասման հինգ տարբեր փաստերին:

Նշենք, որ ենթադրյալ ատելության հիմքով կատարված հանցագործություններն ուսումնասիրելու և արդյունավետ արձագանքելու գործընթացում կարևոր դեր ունեն իրավապահ մարմինները՝ Վրաստանի դատախազությունը և Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը: Ճիշտ է, նկատելի է, ատելության դրդապատճառների բացահայտման բարելավված միտումը, սակայն այդ գերատեսչությունների կողմից կանխարգելիչ և հակազդիչ միջոցների ոչ պատշաճ կիրառումը կամ անգործությունը, այդ թվում քրեական գործ չհարուցելու փաստը, հնարավոր է վատթարացնի իրավիճակը մի շարք ուղղություններով: Մասնավորապես,

¹⁹² Վրաստանի գլխավոր դատախազության 2021 թվականի մայիսի 27-ի գրագրությունը №13/30730:

երբ մեղադրյալի ինքնությունը չի բացահայտվում, իսկ քրեական հետապնդումը ժամանակին չի սկսվում, մի կողմից անհնար է դառնում վերականգնել անհատական իրավունքը, իսկ մյուս կողմից՝ սրանով ճանապարհ է բացվում հետագա իրավախախտման փորձերի համար, ինչի մասին վկայում են Եհովայի վկաներին պատկանող գույքին հասցված վնասի կրկնվող օրինակները: Բացի այդ, որպես առանձին խնդիր պետք է դիտարկել գործի քննության գործընթացի երկարաձգումը: Գործը ոչ ժամանակին քննելու դեպքում ենթադրյալ հանցագործության զոհի մոտ անարդարության և անպաշտպանության զգացում է առաջանում, ինչն արդյունքում զգալիորեն նվազեցնում է վստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ:

Հատկանշական է, որ վերջերս բացահայտվել է նաև Ներքին գործերի նախարարության կողմից տեղեկատվությունը ժամանակին ստանալու խնդիրը: Որոշ դեպքերում գերատեսչությունը սահմանափակվում է միայն պաշտոնական միջանկյալ պատասխանով, և վերջնական պատասխան ստանալու համար Ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները ստիպված են լինում ուղարկել կրկնակի հիշեցման նամակ և/կամ հաղորդակցվել հեռախոսով տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձի հետ: Սա խոչընդոտում է գործի օպերատիվ քննության ընթացքը և կասկածներ է առաջացնում, որ գերատեսչությունը փորձում է խուսափել տեղեկատվություն տրամադրելուց:

11. Ժողովրդական պաշտպանի գործունեությունը հավասարության իրավունքի պաշտպանության ոլորտում

Հավասարության իրավունքի պաշտպանության գործունեության ոլորտում, գործավարությունից և կրթական գործունեությունից բացի, Ժողովրդական պաշտպանի գործունեությունն այս տարի մի շարք ակտիվություններ է ներառել:

Ժողովրդական պաշտպանը երկու հատուկ զեկույց է հրապարակել հավասարության խնդիրների վերաբերյալ: «Ինքնակառավարման մարմինների սոցիալական և առողջապահական ծրագրերի համապատասխանեցումը հավասարության սկզբունքին»¹⁹³ զեկույցում վերլուծվել են մարդկանց սոցիալական աջակցությանն ուղղված բոլոր մունիցիպալիտետների ծրագրերը և առանձնացվել կանոնակարգեր, որոնք գործնականում տարբեր խմբերի նկատմամբ խտրականություն են պայմանավորում: Երկրորդ զեկույցը՝ «Իրավապաշտպանների դրական պարտավորությունները խոցելի խմբերի իրավահավասարության պաշտպանության առումով»¹⁹⁴ անդրադառնում է 2018-2020 թվականներին ենթադրյալ աստելության հիմքով հանցագործությունների հետաքննության արդյունավետության հարցին, քննչական մարմինների նախորդ և ընթացիկ աշխատանքի թերություններին և բարելավված միտումներին, վիճակագրական տվյալներին և միջազգային ինստիտուտների կողմից այս առումով մշակված չափորոշիչներին:

¹⁹³ Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի «Ինքնակառավարման մարմինների սոցիալական և առողջության պահպանման ծրագրերի համապատասխանեցումը հավասարության սկզբունքին» հատուկ զեկույցը հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/lpf4r8>

¹⁹⁴ Ժողովրդական պաշտպանի 2021 թվականի «Իրավապահների դրական պարտավորությունները անապահով խմբերի իրավահավասարության պաշտպանության առումով» հատուկ զեկույցը, հասանելի է հետևյալ հասցեով՝ <https://rb.gy/ahhzlh>

Փորձի փոխանակման և հավելյալ տեղեկատվության նպատակով 2021 թվականին Ժողովրդական պաշտպանը հավասարության խնդիրների շուրջ թեմատիկ հանդիպումների շարք է նախաձեռնել, որի շրջանակներում ոչ կառավարական կազմակերպությունների և ակտիվիստների հետ կայացել է 5 հանդիպում, հետևյալ թեմաներով՝ հավասարություն սոցիալական իրավունքներից օգտվելիս, ոչ գերիշխող էթնիկ խմբերի ինտեգրման հետ կապված հիմնախնդիրներ, ոչ գերիշխող կրոնական խմբերի առջև ծառացած խնդիրներ, օտարերկրացիների իրավական կարգավիճակը, LGBS + համայնքի անդամների զբաղվածության, ծառայությունների և բնակարանային մատչելիությունը:

2021 թվականը Ժողովրդական պաշտպանի գրասենյակի գործունեության առումով նշանակալից էր նաև հավասարության մարմինների Եվրոպական ցանցում (Equinet): Ժողովրդական պաշտպանի ներկայացուցիչները ցանցի անդամների հետ փոխանակեցին իրենց փորձը տարբեր հարցերի շուրջ, մասնակցեցին ինստիտուցիոնալ ռասիզմի կանխարգելման և հավասարության հիմնական ուղղություններին նվիրված կոնֆերանսների, ցանցի շրջանակներում կազմակերպված տարբեր սեմինարների և դասընթացների: Բացի այդ, իրավահավասարության դեպարտամենտի պետը դարձավ «Հավասարության մեյնսթրիմինգ» կլաստերի (աշխատանքային խումբ) մոդերատորը:

11.1. Գործավարություն

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում Ժողովրդական պաշտպանը ուսումնասիրել է ենթադրյալ խտրականության 113 նոր դեպք, իսկ 2021 թվականի ընթացքում դիմումների կամ սեփական նախաձեռնության հիման վրա՝ 161 նոր դեպք: Դրանցից 66%-ի դեպքում դիմումատուները նշել են պետական գերատեսչությունների կողմից դրսևորած խտրականության, իսկ 34%-ի դեպքում՝ ֆիզիկական անձի կամ մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց կողմից անհավասար վերաբերմունքի մասին: Ուշագրավ է, որ նախորդ տարի ևս գրանցվել է տոկոսային նույն ցուցանիշը:

Չարտ N1

საქართველოს სახალხო დაცველი ჟრასთანხი ძოღოქრუასკან აყაშთაყან

მოპასუხეები სფეროების მიხედვით შათაასუქასნოღნერ ესთ ոღორსნერხი

საჯარო უწყება შესასკან გერასთესუქოის

კერძო პირი შასსაქორ ანდ

სპეციალური ანგარიში დისკრიმინაციის წინააღმდეგ ბრძოლის, მისი თავიდან აცილებისა და თანასწორობის მდგომარეობის შესახებ 2021

Հատուկ գեկույց խտրականության դեմ պայքարի, դրա կանխարգելման և հավասարության վիճակի մասին – 2021

საპარტიკლოს სახალხო დამცველი
Public Defender (OMBUDSMAN) of Georgia



65

საქართველოს სახალხო დამცველი
Public Defender (OMBUDSMAN) of Georgia



195 «Հանուն հավասարության կռալիցիայի» անդամներն են՝ «Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան», «Մարդու իրավունքների ուսումնասիրության և մոնիթորինգի կենտրոնը», «Մափարին», «Իրավունքներ Վրաստանը», «Ինքնությունը», «Գործընկերությունը հանուն մարդու իրավունքների», «Կանանց նախաձեռնություններին աջակցող խումբը», «Հավասարության շարժումը», «Վրաստանի ժողովրդավարական նախաձեռնությունը», «Հանդուրժողականության և բազմազանության ինստիտուտը»:

վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Նշված մանդատի շրջանակներում, ընթացիկ հաշվետու տարում, Ժողովրդական պաշտպանի գրասենյակին կից գործող իրավահավասարության դեպարտամենտի ներկայացուցիչներն իրականացրել են մի շարք տեղեկատվական և կրթական ակտիվություններ:

2021 թվականի հունվարից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում իրավահավասարության դեպարտամենտի աշխատակիցներն ընդհանուր առմամբ ավելի քան 100 տեղեկատվական հանդիպում և դասընթացներ են անցկացրել Վրաստանի մասշտաբով: Կրթական հանդիպումների ժամանակ, ի թիվս այլ հարցերի, հատուկ շեշտ է դրվել խտրականության խրախուսման և Covid-19 համավարակի հետ կապված խտրականության դեպքերի վրա: Հիմնական թիրախային լսարանը կազմում էին տեղական ինքնակառավարման մարմինների, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները, ԼԳԲՏ+ համայնքի անդամները, ուսանողները, ուսուցիչները, մասնավոր կազմակերպությունների աշխատակիցները, ակտիվիստները և լրագրողները:

Ընդհանուր առմամբ, 2021 թվականի ընթացքում, իրավահավասարության դեպարտամենտի աշխատակիցները հանդիպել են տեղական ինքնակառավարման մարմինների և այլ պետական գերատեսչությունների՝ 691, կրոնական, էթնիկ և սեռական փոքրամասնությունների՝ 282 ներկայացուցչի, 114 ուսուցիչի, 350 երիտասարդի և մասնավոր ընկերությունների 212 աշխատակցի հետ: Հանդիպումների մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 1560: Հարկ է նշել, որ տեղեկատվական հանդիպում է կայացել նաև Ադրբեջանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակի աշխատակիցների հետ (20 մասնակից), որի շրջանակներում իրավահավասարության դեպարտամենտի աշխատակիցները հանդիպման մասնակիցներին ներկայացրել են Ժողովրդական պաշտպանի մանդատը և կիսվել գործնական փորձով:

Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում, կրթական գործունեություն իրականացնելու նպատակով իրավահավասարության դեպարտամենտի աշխատակիցներն ակտիվորեն այցելել են երկրի տարբեր շրջաններ: Հանդիպումներն անցկացվել են 6 տարածաշրջանների (Աջարիա, Գուրիա, Իմերեթի, Սամեգրելո, Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի) 28 մունիցիպալիտետներում և 16 գյուղերում: Այցերի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից բացի, հանդիպումներ են կայացել նաև մահմեդական և կաթոլիկ համայնքների, Եհովայի վկաների, Էկոմիգրանտների, մեսիսթեցիների, ռոմաների (գնչուների), տարբեր երկրների համայնքների ներկայացուցիչների և ԼԳԲՏ+ համայնքի հետ:

2021 թվականի նոյեմբերի 15-24-ը Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ Վրաստանում անցկացվեց Հավասարության շաբաթ, որը նպատակ ուներ իրազեկել հանրությանը հավասարության կարևորության և խտրականության դեմ պայքարի իրավական մեխանիզմների մասին: Ժողովրդական պաշտպանի գրասենյակն արդեն երրորդ անգամ է ներգրավվել Հավասարության շաբաթում, որի շրջանակներում իրավահավասարության դեպարտամենտի և Արևելյան Վրաստանի վարչության աշխատակիցները 8 տեղեկատվական հանդիպում են անցկացրել Թբիլիսիի և Վրաստանի 5 շրջանների (Կախեթի, Մցխեթա-Մթիանեթի, Շիդա Քարթլի,

Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի) ուսանողների, աշակերտների, ուսուցիչների և շրջաններում բնակվող երիտասարդների հետ:

12. Եզրահանգում

Ցավոք, վերջին տարիներն ամփոփելիս, հետզհետև ավելի դժվար է դառնում խոսել հավասարության վիճակի բարելավման մասին: Չնայած խտրականության դեմ պայքարի մասին օրենսդրության կատարելագործմանը, գործնականում հավասարության հետ կապված իրավիճակն այդուհանդերձ ծանր է:

Պետությունը չունի հավասարության քաղաքականություն, և իրավահավասարության հասնելու գործընթացում համապատասխան գերատեսչությունները չեն գիտակցում իրենց իրավասությունը, ինչը փաստացիորեն, անհնարին է դարձնում իրավունքի պաշտպանությունը: Ժողովրդական պաշտպանը, տարիներ շարունակ, կոչ է անում որոշում կայացնող անձանց հանդես գալ հավասարությունը խթանող հայտարարություններով, սակայն պաշտոնյաները ոչ միայն չեն իրագործում այս հանձնարարականը, այլև իրենց հայտարարություններում խրախուսում են խտրականությունը խոցելի խմբերի նկատմամբ:

Իշխանությունների կողմից հավասարության իրավունքի հետ կապված իրենց բացասական կամ դրական պարտավորությունները չկատարելը կարող է կորցնել նաև քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների, պետության և Ժողովրդական պաշտպանի ջանքերով մինչ այժմ ձեռք բերված արդյունքների իմաստը:

Ժողովրդական պաշտպանը հույս ունի, որ հավասարության իրավունքի պաշտպանության տեսանկյունից, 2022 թվականին խոցելի խմբերն իսկապես կզգան բարելավում:

Հանձնարարականներ

Վրաստանի ներքին գործերի նախարարությանը.

- ապահովել 5-6 հուլիսին տեղի ունեցած բոլոր ենթադրյալ հանցագործությունների անհապաղ և արդյունավետ հետաքննությունը:

Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերով նախարարությանը.

- 2022 տարվա ընթացքում պարբերաբար վերլուծել հաշմանդամություն ունեցող հղի կանանց կարիքները վերարտադրողական առողջապահական ծառայությունների մատչելիության առումով և կարիքները բավարարելու նպատակով մշակել գործողությունների պլան:

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարարի գրասենյակին.

- 2022 թվականի ընթացքում Մեսխեթական համայնքի ներկայացուցիչների, այդ թվում, Վրաստանի քաղաքացիություն ստանալու համար մշակել պետական լեզվի քննության վրա կողմնորոշված վրաց լեզվի անվճար ուսումնական դասընթացներ առաջարկելու ծրագիր և համակարգել դրա իրականացման մեկնարկը,
- 2022 թվականի ընթացքում մշակել և Վրաստանի կառավարությանը ներկայացնել նախաձեռնություն՝ Վրաստան վերադարձող մեսխեթցիներին պարզեցված կարգով քաղաքացիություն տրամադրելու նորացված մեխանիզմների վերաբերյալ:

Վրաստանի կառավարությանը.

- Նոր կորոնավիրուսի կառավարման նպատակով սահմանված ցանկացած սահմանափակում մշակել ոչ խտրական մոտեցմամբ, այդ թվում, Վրաստանում մշտական կացություն ունեցող անձինք կարողանան մուտք գործել երկիր կացության թույլտվության/կարգավիճակի հիման վրա,
- օրենսդրական նախաձեռնության միջոցով մշակել հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի փոխհատուցման միասնական չափորոշիչ, այնպես որ չվատթարանա թիրախային խմբերից որևէ մեկի իրավական վիճակը,
- հաշմանդամության կարգավիճակ տրամադրելու բժշկական մոդելն ամբողջությամբ փոխարինել սոցիալական մոդելով, իսկ նախքան այս փոփոխությունն առողջության պահպանման ծրագրերը մշակելիս նախատեսել բժշկական մոդելի գործարկմամբ պայմանավորված անհավասարությունները և հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքները,
- փոփոխել սոցիալական փաթեթների տրամադրման ընդհանուր կարգը, որի համաձայն, չնչին բացառություններից բացի, արգելվում է պետությունից մեկից ավելի սոցիալական նպաստ ստանալը:

Հատուկ քրեակատարողական ծառայությանը.

- 2022 թվականի ընթացքում խորապես ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկներում առկա ենթակառուցվածքային ռեսուրսները և դատապարտյալների կրոնական կարիքները հաշվի առնելով՝ ոչ գերիշխող կրոնական հավատք ունեցող բանտարկյալներին հատկացնել աղոթատեղի,

- հանրությանը տեղեկացնել ծանրոցների ընդունման գործընթացի մեկնարկի մասին՝ հանրային հայտարարության տեսքով, իրականացնել նաև կրոնական փոքրամասնությունների հիմնական տոների ժամանակ:

ՀԻԻԱ - Աշխատանքի տեսչական ծառայությանը.

- աշխատավայրում ենթադրյալ խտրականությունը դիտարկելիս ապահովել գործի լիարժեք և համապարփակ ուսումնասիրությունը:

Գենդերային հավասարության մշտապես գործող խորհրդարանական խորհդին և Վրաստանի խորհրդարանի էթիկայի խորհրդին.

- սեռի և այլ հիմքերով ենթադրյալ խտրականության դեպքերն ուսումնասիրելիս ապահովել հանգամանքների պատշաճ կերպով հետազոտումը և որոշումներ ընդունելիս առաջնորդվել զգայուն, անաչառ կերպով՝ խտրականության արգելումը կարգավորող տեղական կամ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի և Կախեթիի մունիցիպալիտետներին.

- ապահովել մունիցիպալիտետների կայքերում և սոցցանցերի էջերում տեղադրված տեղեկությունների թարգմանությունն իրենց տարածքում ապրող ոչ գերիշխող էթնիկ խմբերի մայրենի լեզուներով,
- կարճ ժամանակահատվածում ապահովել իրենց կողմից ընդունված հանրային շահ պարունակող նորմատիվ ակտերի (այդ թվում, սոցիալական և առողջապահական մունիցիպալ ծրագրերի) թարգմանությունն իրենց տարածքում ապրող ոչ գերիշխող էթնիկ խմբերի մայրենի լեզուներով: